



ՍՈՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՑԱՆՑԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒԴՔՈՒՄ



ИНСТИТУТ АХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

СОНА НЕРСИСЯН

СЕТЕВЫЕ ОТНОШЕНИЯ
В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

SONA NERSISYAN

NETWORK RELATIONS
IN ARMENIAN DIASPORA

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
ЕРЕВАН 2023

PUBLISHING HOUSE IAE
YEREVAN 2023

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պ. գ. դ. Ռուբեն Կարապետյան

Գրախոսներ՝ պ. գ. դ. Միհրան Գալստյան
պ. գ. թ. Ռուբեն Օհանջանյան

ՀՏԴ 316.34
ԳՄԴ 60.54
Ն 633

Ներսիսյան Ս. Ա.

Ն 633 Ցանցային հարաբերությունները հայկական սփյուռքում/Ս. Ա. Ներսիսյան.
– Եր.: ՀԱԻ հրատ., 2023. – 160 էջ:

Գրքում քննարկվում են ցանցային հարաբերությունները և դրանց առանձնահատկությունները հայկական սփյուռքում: Այս աշխատանքով փորձ է արվում բացահայտել հայկական սփյուռքի համայնքներում ցանցային հարաբերությունների կազմավորման և գործառնության օրինաչափություններ, ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը: Ինչպես նաև հասկանալ, թե ինչպես են հայերը սփյուռքում հարաբերություններ հաստատում և զարգացնում, դրանք ինչ առանձնահատուկ ձևեր են ստանում, և ինչ փոփոխությունների են ենթարկվում արտաքին միջավայրի ազդեցությամբ: Աշխատանքը կարող է հետաքրքրել հասարակագիտական ոլորտի մասնագետների, սփյուռքի հարցերով զբաղվող հետազոտողների, քաղաքականություն մշակողների և ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 316.34
ԳՄԴ 60.54

ISBN 978–9939–886–49–7

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	7
1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	14
1.1 Սոցիալական ցանցի ուսումնասիրության ուղղությունները	15
1.2 Սոցիալական ցանցի հիմնական բնութագրիչները	31
2. ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ	45
2.1 Սոցիալական ցանցի գործառույթները էթնիկ խմբում	49
2.2 Ցանցային հարաբերությունների էթնիկ առանձնահատկությունները սփյուռքում	54
3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ	65
3.1 Հայկական համայնքների ցանցային ինքնակազմակերպման գործընթացը	68
3.2 Սոցիալական ցանցի գործառնության բնույթը հայկական համայնքներում	78

4. ՑԱՆՑԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ	86
4.1. Սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկությունները Թեհրանի հայկական համայնքում	86
4.2. Սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկությունները Բեյրութի հայկական համայնքում	103
ԱՄՓՈՓՈՒՄ	121
РЕЗЮМЕ	127
SUMMARY	132
ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	137
ՀԱՎԵԼՎԱԾ	153

ՆԱԽԱԲԱՆ

Սփյուռքը, որպես ուսումնասիրության առարկա, մշտապես եղել է հետազոտողների ուշադրության տիրույթում: Սակայն սփյուռքի հիմնախնդիրը ուսումնասիրվել է ընդհանուր ձևով և դրա զարգացման և գործառնության առանձին հարցերը լիովին բացահայտված ու վերլուծված չեն:

Այսօր սփյուռքում ինքնության պահպանման, սոցիալական կապերի հաստատման և գործառնության համար առկա մարտահրավերներին կարելի է գումարել նաև համահարթեցման խոշոր գործընթացը: Մարդկանց ինտենսիվ տեղաշարժերի արդյունքում ավելի է ընդլայնվում ու բարդանում հարաբերությունների կառուցվածքը, հատկապես օտար միջավայրում: Նրանց միջև եղած կապերը բազմազանեցվում են, ձեռք են բերում նոր որակ, ուստի սկսում են ենթարկվել հասարակական հարաբերությունների այլ կանոնների, դառնում են բոլորովին նոր երևույթ ուսումնասիրության համար:

Ներկայումս սփյուռքյան համայնքներն իրենց բովանդակությամբ և կառուցվածքով մեծ հետաքրքրություն են ներկայացնում սոցիալական ոլորտի հետազոտողների համար: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ համայնքային ինքնակազմակերպման գործընթացները և կառուցվածքային փոփոխությունների օրինաչափությունները նոր միջավայրում:

Համաշխարհային անդրազգայնացման պայմաններում առանձին տեղ է զբաղեցնում սոցիալական կապերի ուսումնասիրությունը սփյուռքյան համայնքներում: Այդ կապակցությամբ կարևոր է հայկական սփյուռքի համայնքներում սոցիալական կապերի գործառնության առանձնահատկությունների ուսումնասիրությունը, քանի որ այն հնա-

րավորություն է ընձեռում հասկանալ համայնքներում սոցիալական հարաբերությունների բնույթը, կառուցվածքը, համայնքի ինքնակազմակերպման մեխանիզմները: Վերջիններս կախված են մի շարք գործոններից. ընդհանուր՝ ընդունող երկրի վարչակարգ, կրոնական, էթնիկ կառուցվածք, տնտեսական վիճակ, և առանձնահատուկ՝ ընդունող հասարակության վերաբերմունք, ներգաղթի պատճառ և այլն: Այդ գործոնները ներազդում են համայնքի վրա՝ որոշելով դրա սահմանները և կառուցվածքը, ներկայացուցիչների կարգավիճակը, ինչպես նաև առկա խնդիրներն ու մարտահրավերները:

Սփյուռքում էթնիկ խմբի ինքնակազմակերպման հիմնախնդիրը մեծ դեր է խաղում ընդունող երկրների կենսագործունեության բոլոր ոլորտների զարգացման մեջ, միջպետական հարաբերությունների նրա տեղն ու նշանակությունը որոշելու հարցում, ինքնին սփյուռքի ու դրա առանձին համայնքների վերարտադրության ու զարգացման գործում, և այլն:

Հայկական համայնքներն այլ երկրներում, որպես ավանդական-դասական սփյուռքի¹ օրինակ, ձևավորման ընթացքում ստեղծել են ինքնակազմակերպման առանձնահատուկ մեխանիզմներ: Այդ մեխանիզմները հիմնված են սփյուռքում գործող սոցիալական հարաբերությունների վրա, որոնք իրենց կառուցվածքով ցանցային են:

Առհասարակ հայկական միջավայրում ցանցային հարաբերությունների կառուցման և գործառնության դեպքում որոշիչ դեր ունեն առկա կապերը և դրանց բնույթը: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում է ուսումնասիրել, թե այլ միջավայրերում հայերն ինչպես են հարաբերություններ հաստատում և զարգացնում, արդյոք պահպանվում են նշյալ առանձնահատկությունները, և արտաքին միջավայրի ազդեցությամբ դրանք ինչ փոփոխությունների են ենթարկվում:²

Ներկայացված աշխատանքի նպատակն է պարզել սոցիալական ցանցի դերը սփյուռքում՝ Թեհրանի և Բեյրութի հայ համայնքների օրի-

¹ Tölölyan 2004, 35–46.

² Barnes 1969, 27–38.
Wasserman, Faust 1994, 30–48.

նակով, փորձ անելով դուրս բերել համայնքներում սոցիալական ցանցի գործառույթները, իրականացրած դերը համայնքի ինքնակազմակերպման մեջ, դրա գործառնության մեխանիզմները և այլն:

Այս երկու համայնքները համարվում են հայկական սփյուռքում ինքնության պահպանման ու վերարտադրության, սփյուռքում զարգացման ու հայրենիքի հետ կապի ավանդույթների սերնդեսերունդ փոխացման, ինքնակազմակերպման ու ինստիտուցիոնալացման տիպական օրինակներ: Համայնքների ընտրության ժամանակ մանրամասն դիտարկվել են դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք քննարկվում են ստորև:

Ուսումնասիրվող համայնքների ընտրության փուլում կիրառվել է զուգահեռ համադրման (juxtaposition) մոտեցումը. համաձայնեցված չափանիշներով, ինչպես նաև գործիքակազմով հավաքագրված տվյալները ներկայացվում են կողք կողքի:

Համայնքների ընտրության ժամանակ հաշվի են առնվել մի շարք գործոններ. կարևորվել են ինչպես դրանց ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները:

Ընդհանրություններ. երկու համայնքներն էլ համարվում են ավանդական, դասական տիպի համայնքներ, երկուսն էլ ձևավորվել են մահմեդական, այլակրոն միջավայրում, երկու երկրում էլ հայերն ունեն նմանտիպ կարգավիճակ (դիտվում են որպես կրոնական փոքրամասնություն, օրենսդրությամբ կարգավորվում է նրանց ներկայացվածությունը որպես կրոնական համայնք, նրանց ներկայացվածությունը խորհրդարանում, կառավարությունում և այլն):

Տարբերություններ. երկուսն էլ ունեն լեզվական առանձնահատկություն՝ արևմտահայերեն և արևելահայերեն՝ դասական ուղղագրությամբ, համայնքները ձևավորվել են տարբեր պատճառներով և ունեն տարբերություններ՝ համայնքի գոյության տևողության, ելակետային տնտեսական պայմանների, Հայաստանից ունեցած հեռավորության, ընդունող երկրների տարբերության (չափ, բնակչություն, ժողովրդավարության, բարեկեցության աստիճան և այլն) ցուցանիշներով:

Աշխատանքի շրջանակում քննարկվում են այնպիսի հետազոտական խնդիրներ, ինչպիսիք են սոցիալական կապերի գործառնության

առանձնահատկությունները տարբեր էթնոսոցիալական միջավայրերում, էթնիկ համայնքների ինքնակազմակերպման մեխանիզմները, ինչպես նաև էթնիկ ինքնության ընկալման, կառուցակցման, պահպանման և համայնքային կառույցների գործունեության փոխազդեցությունը սփյուռքում:

Որպես նախնական հետազոտական կանխավարկածներ ներկայացվում են հետևյալները. սփյուռքի յուրաքանչյուր ուսումնասիրված համայնքում գործող սոցիալական ցանցը ամրագրում է համայնքի նշանակալի բնութագրիչներ, սփյուռքում հայերի շրջանում դրսևորվում են էթնիկ ինքնակազմակերպման առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են համայնքներում գործող սոցիալական ցանցի գործառնության բնույթով, այլազգի միջավայրում հոծ բնակությունը կատալիզատոր է հանդիսանում ինքնակազմակերպման համար, սփյուռքի համայնքներում փոխհարաբերությունների խտությունը և դերերի համընկնումը հանգեցնում է համայնքի ներփակման:

Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են ձևայնացված հարցումները և խորին հարցազրույցները, դիտարկման արդյունքները, որոնք հեղինակի կողմից իրականացվել են 2013 և 2015 թթ. Թեհրան (ԻԻՀ) և Բեյրութ (ԼՀ) քաղաքներում: Սույն աշխատանքում օգտագործվել են նաև տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները, ինչպես նաև այլ երկրորդային տվյալներ:

Առաջադրված խնդիրների բացահայտման նպատակով օգտագործվել են. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի հետազոտողների կողմից կատարված հետազոտության 2013թ և 2015թ արդյունքները:³

³ Էթնոսոցիոլոգիական հետազոտություններն իրականացվել են քանակական և որակական մեթոդներով՝ «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները», նպատակային ծրագրի շրջանակներում (2011–2019): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (հմմտ.՝ Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական

Հետազոտությունն անցկացվել է մի քանի փուլով. նախապատրաստական փուլ, որի ընթացքում հավաքագրվել, ամփոփվել և խնդրին համապատասխան վերլուծվել է առկա գրականությունը, արդեն իրականացված հետազոտությունները, հավաքվել է տեղեկատվություն տվյալ համայնքների վերաբերյալ հասանելի գիտական, ինչպես նաև ոչ գիտական աղբյուրներից: Մի քանի ուղղություններով աշխատանքներ են տարվել տվյալ համայնքների հետ կապի հաստատման ուղղությամբ, մասնավորապես, ձեռք են բերվել տվյալներ պետական մարմիններից, հասարակական կամ մասնավոր կազմակերպություններից, օգտագործվել է հասանելի պաշտոնական տեղեկատվություն: Հաջորդ փուլում կապ է հաստատվել համայնքի հետ վերը նշված միջոցներով, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ՝ տեղում դաշտային հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար: Այդ թվում հնարավոր տեղեկատու անձանց ցուցակի, գործիքակազմի, աշխատանքային պլանի ճշտագրում և այլ կազմակերպչական հարցեր:

Բուն դաշտային հետազոտության փուլ, որի ընթացքում իրականացվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն Թեհրանի և Բեյրութի հայ համայնքներում՝ նախապես մշակված պլանի համաձայն: Հետազոտություններն անցկացվել են գիտական գործուղումների միջոցով փոքր աշխատանքային խմբով, որը համալրվել է յուրաքանչյուր համայնքում տեղում կցված մասնագետներով: Գործուղումները յուրաքանչյուր համայնքում տևել են մոտավորապես մեկ ամիս: Յուրաքանչյուր համայնքի համար հետազոտական գործիքակազմը թարմացվել է և տեղայնացվել: Հետազոտության գործիք հանդիսացող հարցաշարերը, հարցաթերթերը մշակվել են և՛ հայերեն (արևմտահայերեն և արևելահայերեն), և՛ օտար լեզուներով (արաբերեն, պարսկերեն) և ներկայացվել են՝ ըստ հարցվողի նախընտրության: Հարցագրույցների դեպքում ևս հաշվի է առնվել բանասացի լեզվական (ինչպես նաև լոկացիոն)

ուղղությունները. խնդիրներն ու հեռանկարները, Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ, Ռ. Կարապետյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 19):

նախընտրությունը, չնայած դրանց ազատ բնույթը հնարավորություն է ընձեռել չսահմանափակվել որևէ կոնկրետ լեզվի ընտրությամբ:

Տվյալների մշակման և վերլուծության փուլ, որի ընթացքում նախապես հավաքագրված քանակական տվյալները զտվել են, խմբավորվել, կոդավորվել: Հաջորդիվ սրա հիման վրա ստեղծվել են տվյալների բազաներ՝ յուրաքանչյուր համայնքի համար: Որակական տվյալները ևս ենթարկվել են առաջնային մշակման՝ զտվել են, վերծանվել, խմբավորվել: Ապա իրականացվել է ամբողջ բազավորված նյութի տեխնիկական մշակում: Հաջորդ փուլում այս նյութերի հիման վրա կատարվել է վերլուծություն՝ նախապես ընտրված մեթոդներով:

Հետազոտության իրականացման ընթացքում, մասնավորապես հետազոտության նախապատրաստական փուլում առաջացել են նաև որոշակի ռիսկերը կամ խոչընդոտներ. համայնքների ներկայիս իրավիճակի մասին անհրաժեշտ գիտական, հետազոտական գրականության համայնքի մասին անհրաժեշտ տեղեկատվության սակավություն, երբեմն անհասանելիություն, համայնքի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության բացակայություն, միջնորդավորված տեղեկատվության ձեռքբերում:

Սկզբնաղբյուրի արժեք ունեն նաև ազգագրագետների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների նյութերը, որոնք ևս ենթարկվել են ընտրողական վերլուծության:

Որպես էմպիրիկ հետազոտության մեթոդներ կիրառվել են՝

- Տվյալների տեսական վերլուծության մեթոդներ (գիտական գրականության վերլուծություն, համակարգային-կառուցվածքային վերլուծություն, ընդհանրացում, մեկնաբանություն).
- Տվյալների վիճակագրական մշակման մեթոդներ (SPSS-վիճակագրական փաթեթ սոցիալական գիտությունների համար).
- Տվյալների մեկնաբանության մեթոդներ (տիպաբանում, կորելացիոն կապերի գնահատում, գրաֆիկական տվյալների վերլուծություն, քարտեզագրում):

Հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդների զուգորդմամբ: Որպես կիրառական ուսումնասիրության մեթոդներ ընտրվել են՝

- Ձևայնացված հարցում, որն անցկացվել է Թեհրանի և Բեյրութի հայ համայնքներում ներգրավված հայերի հետ՝ քվոտային ընտրանքով և ձևակույտի մեթոդով: Հարցմանը մասնակցել են 230 հոգի՝ Թեհրանում, 250 հոգի՝ Բեյրութում: Մասնակիցները 18 տարեկանից բարձր են և ներգրավված են համայնքային կյանքում:
- Դիտարկում՝ չներգրավված և առանց պլանի ձևաչափով:
- Խորին հարցազրույց, որտեղ ընդգրկվել են համայնքի ներկայացուցիչներ ըստ իրենց հմտությունների և տեղեկացվածության աստիճանի (42 հոգի): Այստեղ որպես տեղեկատու անձ ներգրավվել են համայնքային հիմնական կազմակերպությունների պատասխանատուները՝ պահպանելով համակողմանիության սկզբունքը (համայնքային ավանդական կառույցներ, երեք եկեղեցի, երեք կուսակցություն, տարբեր դպրոցներ, մարզական և մշակութային, սկաուտական միություններ, բարեգործական համահայկական և տեղական կառույցներ, տպագիր մամուլ, ռադիո), ինչպես նաև համայնքային կյանքում որոշակի ազդեցություն ունեցող «առանցքային անհատներ», ովքեր անհատապես կամ համախոհների հետ իրականացնում են համայնակենտրոն գործունեություն:

Տվյալների վերլուծությունն իրականացվել է նկարագրական վերլուծության և համադրական վերլուծության մեթոդներով:

1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից սոցիալական և ազգագրական գիտության մոտեցումները էթնիկ հանրությունների ուսումնասիրության մասին կրել են որոշակի փոփոխություններ՝ հասարակության, համայնքի հասկացություններից շեշտը տեղափոխելով սոցիալական կապերի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ 20-րդ դարի վերջերից սկսած հետազոտողների ուշադրությունը դեպի սոցիալական ցանցի վերլուծական զարգացման մոտեցումն աճել է: Այն այժմ դիտվում է որպես առանձին ուղղություն այլ սոցիալական գիտակարգերի շարքում, հատկապես սոցիոլոգիայի և սոցիալական մարդաբանության:

Ներկայումս հասարակության՝ որպես փոխգործառնող օրգանիզմի կարևորության հետ մեկտեղ գլխավորեցվում է սոցիալական կապերի, կամ դրանց ցանցի դերը հասարակական երևույթների բացատրության մեջ :

Սոցիալական կապերի դերը լավագույնս արտահայտվում է նոր միջավայրում գործառնող էթնիկ խմբերի կենսագործունեության մեջ, երբ սոցիալական միջավայրը որպես ինքնակազմակերպական միավոր գտնվում է զարգացման ակտիվ գործընթացների փուլում:

Այստեղ կարևոր է դիտարկել սոցիալական ցանցի և էթնիկ խմբերի գործառնության կապը, քանի որ դրանց առանձնահատկությունները բավականին ցայտուն են դրսևորվում տարբերությունների ընդգծման խորապատկերին: Կախված գերիշխող մշակույթի առանձնահատկություններից և խմբի ելակետային (տնտեսական, սոցիալական, մշակութային) հատկանիշներից՝ ձևավորվում են առանձնահատուկ

սոցիալական միջավայրեր, որոնք նպաստում են այնպիսի կառուցվածքների ստեղծմանը, որոնք իրենց հերթին ինքնակազմակերպվելով վերաճում են էթնիկ համայնքների: Ահա ինքնակազմակերպման այդ հատկանիշները դրսևորվում են հայկական համայնքներում որպես սփյուռքի սոցիալական միջավայրի էթնիկ առանձնահատկություններ:

Ներկայումս սոցիալական հարաբերությունները և դրանց վրա հիմնված սոցիալական ցանցը կարևոր տեղ են զբաղեցնում գիտական ուսումնասիրությունների ոլորտում: Սոցիալական ցանցը հասարակության կազմակերպման կառուցվածքում իրականացնում է կարևոր գործառույթներ՝ պայմանավորելով սոցիալական հարաբերությունների, ձևավորվող յուրաքանչյուր սոցիալական միջավայրի բնույթը: Այստեղ անհրաժեշտ է հատուկ ընդգծել սոցիալական ցանցի նշանակությունը այլազգի միջավայրում, որտեղ սոցիալական ինտեգրման գործընթացն ուղեկցվում է էթնոմշակութային տարրերով: Այս նպատակով նախ և առաջ պետք է անդրադառնալ նրան, թե սոցիալական ցանցը ինչ տեղ է զբաղեցնում գիտական համակարգում ընդհանրապես և ինչպիսի էթնիկ առանձնահատկություններ է կրում:

1.1. Սոցիալական ցանցի ուսումնասիրության ուղղությունները

Սոցիալական ցանցի տեղը գիտության գաղափարական համակարգում հասկանալու համար, անհրաժեշտ է պարզել, թե այն ինչպիսի սոցիալական իրականություն է արտացոլում և ինչ չափով: Այլ կերպ ասած, կարելի է արդյոք խոսել «ցանցային» տիպի սոցիալական հարաբերություններից, որոնք արտացոլում են սոցիալական ցանցի հասկացությունը:

«Սոցիալական ցանց» հասկացությունը ենթադրում է անհատի շրջապատող անձանց և նրանց միջև սոցիալական հարաբերությունների ընդհանրություն: Ի տարբերություն սոցիալական կառույցների, որոնք իրենցից ներկայացնում են սոցիալական հարաբերությունների բավականին ստատիկ կառուցվածք, սոցիալական ցանցը դասվում է առավել ճկուն համակարգերի շարքին: Սոցիալական միջավայրում ցրված սո-

ցիալական կապերը միավորվելով կազմում են բարդ և ճկուն համախմբություն: Այստեղ մարդկանց միջև եղած փոխհարաբերությունները կապակցում են ոչ այնքան անձանց, որքան նրանց զբաղեցրած դիրքերը. դա ենթադրում է գաղափարների, գործողությունների և շահերի միախառնում: Սոցիալական ցանցը համախմբելով ուղղահայաց, հորիզոնական և այլ տեսակի կապերը, կուտակում է նշանակալի ծավալի սոցիալական կապիտալ, որի համար հիմք են հանդիսանում վստահությունը, փոխաջակցությունը, նախընտրությունները և այլն: Սրանով է բացատրվում սոցիալական ցանցի սահմանման անհարժեշտությունը գիտական բազմակողմ մոտեցումների միջոցով:

Տարբեր հեղինակների կողմից սոցիալական ցանցը սահմանվում է տարբեր կերպ. նրանց մի մասը սոցիալական ցանցը սահմանում է որպես կառուցվածք՝ մարդաբանական երևույթ, մյուսները՝ հետազոտությունների համադրված մեթոդների վերլուծության միջոց, որոշները որպես տնտեսական, մարկետինգային ոլորտի ուսումնասիրության դաշտ, իսկ ոմանք էլ որպես վիրտուալ իրականության հիմք: Այնուամենայնիվ, այս բոլոր մոտեցումների համար հիմք են ծառայում ցանցի պարզագույն կառուցվածքը, ձևավորման ու զարգացման միևնույն սկզբունքները:

Սոցիալական ցանցն, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես անհատների դիրքորոշումների, օբյեկտների կամ իրադարձությունների միջև կապերի որոշակի տեսակ, որոնք ընտրվում են՝ կախված ցանցի ձևավորման նպատակից:⁴

Ինչպես առանձին տարրերի, այնպես էլ ողջ համակարգի ուսումնասիրման տեսանկյունից առավել կարևոր են դառնում հարաբերությունների համակարգը ցանցի անդամների միջև, և առանձին անդամների դիրքը ցանցում: Սրա հետ կապված պետք է հաշվի առնել, որ անհատների միջև սոցիալական կապերն առաջացնում են մեծ մասշտաբների կարևոր օրինաչափություններ, այդ պատճառով կարևոր է անդրադառնալ այս երևույթին տարաբնույթ սոցիալական հիմնախնդիրների ուսումնասիրության համատեքստում:

⁴ Градосельская 2004, 54.

Կախված սոցիալական հարաբերությունների տեսակից սոցիալական ցանցը կարող է լինել ֆորմալ և ոչ ֆորմալ: Ի տարբերություն ֆորմալ սոցիալական ցանցի, որտեղ հստակ կերպով սահմանվում է ցանցի յուրաքանչյուր անդամի դերը, իրավունքներն ու պարտականությունները և հարաբերությունները հիմնված են ֆորմալ-անդեմ կապերի վրա, ոչ ֆորմալ ցանցը հիմնվում է (անձնավորված) ոչ ֆորմալ կապերի վրա: Դրանք բնութագրվում են ցանցի անդամների միջև ստորաբաժանման բացակայությամբ, յուրաքանչյուրի դիրքերի բաշխման ըստ կարգավիճակի և դերի, ինչն արտահայտում է նրանց պահանջունքները և արժեքները, համոզմունքներն ու նորմերը: Այսպիսի սոցիալական կապերը բնորոշ են ավանդական հասարակություններին, ընտանեկան-բարեկամական հարաբերություններին: Այս ցանցի շրջանակներում դրա մասնակիցների հարաբերությունները կանոնակարգված չեն իրավական կամ վարչական նորմերով և, ըստ էության, բացակայում է հարաբերությունները կառավարող մարմին կամ առաջնորդ:

Ընդհանրացնելով վերոնշյալ գաղափարները, կարելի է ասել, որ այս աշխատության շրջանակներում ցանցը որոշակի սոցիալական միավորների՝ անհատների, խմբեր, կառույցներ, կապերի ամբողջություն է:

Սոցիալական ցանցի էությունը, բնութագրվելով մի շարք գիտակարգերի կողմից, հենվում է երկու խոշոր տեսությունների՝ ինտերակցիոնիզմի և ստրուկտուրալիզմի հիմնադրույթների վրա: Դրանցից բխող առանձին մոտեցումները ևս հիմք են ծառայում ցանցային հարաբերությունների բնույթը հասկանալու և վերլուծելու համար: Սոցիալական ցանցը տեղավորվում է նաև մոդեռնիստական և հասարակության տեղեկատվական զարգացման հայեցակարգում:

Որոշ տեսություններում սոցիալական ցանցը դիտարկվում է որպես երկակի, նույնիսկ հակասական գործառույթներ իրականացնող երևույթ: Մի կողմից այն իրականացնում է «խոչընդոտի» դեր, որով սահմանափակվում է դրա առանձին միավորների կենսագործունեության ազատությունը: Սա ավելի ցայտուն արտահայտվում է փակ

խմբերում, երբ ցանցի անդամներից յուրաքանչյուրը կատարում է սահմանված դեր, իսկ իրականացրած գործունեությունն ընդհանուրի մաս է կազմում: Մյուս կողմից ցանցն ավելի լայն դաշտ է ստեղծում՝ հնարավորությունների կամ սոցիալական ռեսուրսների ընդարձակման առումով: Այստեղ ստանձնելով հարկադրված կամավորության ենթատեքստը՝ անհատները դիտարկվում են որպես նախաձեռնող, շահագրգիռ միավորներ, ովքեր օգտագործում են ցանցային ռեսուրսներն ի շահ իրենց:

Սոցիալական ցանցի վերլուծության զարգացման վրա ազդեցություն թողած հաջորդ դրույթը բխում է սոցիալական մարդաբանների աշխատանքային դաշտից: Համաձայն այս վերլուծաբանների՝ կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցման հիմնական կատեգորիալ հասկացությունները բավարար չեն այն հասարակությունների ուսումնասիրության համար, որտեղ ոչ բոլորի վարքն է կարգավորվում «կորպորատիվ խմբերի»՝ ազգակցության, հաղորդակցության և աշխատանքային ինստիտուտների կողմից:

Մեկ այլ մոտեցում են առաջարկում Պ. Բուրդիեն և Ջ. Կոուլմենը, ովքեր սոցիալական ցանցը մեկնաբանում են որպես սոցիալական կապիտալի ձև:

Բուրդիեն սոցիալական ցանցը ներկայացնում է որպես սոցիալական դաշտ, որտեղ անհատների տեղերը բաշխված են համապատասխան նրանց կարգավիճակների: Իսկ կարգավիճակն իր հերթին կախված է արժեքավոր սոցիալական հարաբերությունների և օգտակար կապերի ամբողջությունից, որոնք էլ, ըստ էության, իրենցից ներկայացնում են սոցիալական կապիտալը:⁵

Կոուլմենը սոցիալական կապիտալի տարատեսակներից առանձնացնում էր սոցիալական նորմը, որը ոչ միայն մեղմացնում է տվյալ գործողությունը, այլև կասեցնում, զսպում է այլ բացասական միտումները:⁶ Նա սոցիալական կապիտալը ներկայացնում է որպես հարա-

⁵ Bourdieu 1986, 38.

⁶ Coleman 1988, 28.

բերությունների ցանց, որը հիմնված է մի գաղափարի վրա, որտեղ ցանցի այլ անդամներն իրենց պարտականությունները բարելավողներն են կատարում: Սակայն փորձը ցույց է տալիս, որ սուբյեկտների միջև վստահության և փոխադարձ պարտականությունների կատարման տեսքով սոցիալական կապիտալը կարող է ձևավորվել նաև այնպիսի կազմակերպություններում, որտեղ չկա ցանցային կառուցվածք: Այսպիսի նորմերի առաջացումը հիերարխիկ կազմակերպությունում առավելապես կապված է ֆորմալ պայմանագրերի և կարգավորված պարտականությունների հետ: Բայց եթե դիտարկենք ոչ ֆորմալ հարաբերությունները աշխատակիցների միջև, կտեսնենք, որ ֆորմալ «սոցիալական աջակցության ցանցի» ձևավորումը հնարավոր չէ: Սա ցույց է տալիս, որ «սոցիալական աջակցության ցանցում» վստահության նորմերի առաջացումը միանգամայն այլ բնույթ ունի. այն հենվում է ընտանիքի և ընկերության ինստիտուտների արժեքանորմատիվային ավանդույթների վրա:⁷ Վերջինը թույլ է տալիս բացատրել նշված ավանդույթների գերակայությունը էթնիկ խմբերի մոտ դրսևորվող վստահության բարձր մակարդակը:

20-րդ դարի վաղ շրջանում գերիշխող դիրքորոշման համաձայն, արդյունաբերացման հետ կապված խոշոր փոխակերպումները, հատկապես ուրբանիզացիան, բյուրոկրատիզացիան և ԶԼՄ-ների զարգացումը, հանգեցրել են «գանգվածային հասարակության» առումիզացված անհատների, որտեղ ֆորմալ նշանակության կապերը արմատավորվում են միջանձնային հարաբերություններում: Որպես օրինակ, քաղաքի սոցիոլոգիայով զբաղվող հետազոտողները համարում են, որ ընկերությունը, հարևանությունը և ոչ ֆորմալ աջակցությունը նշանակություն են ստանում մեծ քաղաքներում, չնայած, որ կապի և տրանսպորտի ոլորտումներում տեխնոլոգիական նորարարությունները նվազեցրել են այդ սոցիալական կապերի ձևավորման և պահպանման տևողությունը, որը նախկինում սահմանփակված էր տարածական առումով: Սակայն ֆորմալ ցանցի մոդելների մասին տեսական ենթա-

⁷ Ներսիսյան 2019, 135:

դրույթունները հաճախ թերի են,⁸ քանի որ դրա հետ կապված «ցանցային տեսությունն» առանձին չի զարգացել:

«Սոցիալական ցանց» հասկացությամբ Բարնսն անդրադառնում է առկա սոցիալական հարաբերություններին:⁹ Սկզբնական ձևակերպումներում հասկացությունը վերաբերում էր ոչ ձևայնացված կամ արտաինստիտուցիոնալ կապերին, սակայն հետագայում, ընդլայնվելով, այն ընդգրկեց նաև ձևայնացված կապերը կամ խմբերը:

Այս տեսության շրջանակներում առանձնահատուկ նշանակություն են ստանում սոցիալական դաշտերը, և առանձնացվում է դրանց երեք տեսակ:

Առաջին տեսակը՝ տարածականորեն ամրագրված սոցիալական դաշտերն են՝ մեծ քանակությամբ վարչական միավորումներով, որոնք կազմակերպված են աստիճանակարգային սկզբունքներով:

Երկրորդ տեսակի սոցիալական դաշտերը ձևավորվում են արտադրական հարաբերությունների հիման վրա: Այստեղ նկատվում են մեծ քանակի փոխկախված, չնայած, ֆորմալ տեսանկյունից ինքնավար միավորներ, որոնք փոխկապակցված են ավելի շուտ գործառության ձևով, քան աստիճանակարգային կերպով, իսկ ներսից կազմակերպվում են աստիճանակարգային կառավարման հիման վրա:

Եվ, վերջապես առանձնացվում է երրորդ սոցիալական դաշտը (ըստ էության սոցիալական ցանցը), որը չունի միավորների հատուկ կոորդինացված կազմակերպվածություն կամ որոշակի սահմաններ: Այն, կազմված է ծանոթություններից, ընկերական, մասսամբ բարեկամական կապերից, երբեմն ներառում է տարբեր հասարակական դիրք ունեցող մարդկանց միջև եղած հարաբերությունները (չնայած, այս ոլորտում հիմնականում կապերը ձևավորվում են սոցիալապես հավասար անձանց միջև) և չունի ամրագրված որևիցե հստակ տարր, քանի որ նոր կապերն ստեղծվում են անընդհատ, իսկ հները մասնակիորեն խզվում են կամ որոշ ժամանակ չեն օգտագործվում: Ի դեպ կապերի

⁸ Granovetter 1978.

⁹ Barnes 1954.

խզման կամ նոր կապերի առաջացման տևողությունը կապված է նաև խմբի կամ առանձին կապի վրա էթնիկ, ավանդությանին գործոնի ազդեցությունից:

Գլխը Շիլլերն իր աշխատանքում քննարկում է «անդրազգային սոցիալական դաշտ» հասկացությունը, որը հակադրում է «սոցիալական ցանց»-ին: Նրանք համարում էին, որ ցանցային «ցանցային վերլուծությունը եսակենտրոն է. այն մեր ուշադրությունն ուղղում է դեպի առանձին անհատի հարաբերությունների խտությունն ու տեսակները: Ի հակադրություն՝ սոցիալական դաշտի վերլուծությունը սոցիոկենտրոն է: Մենք կենտրոնանում ենք սոցիալական գործողությունների, գաղափարների և արժեքների փոփոխությունների վրա, քանի որ մարդիկ միմյանց հետ կապված են բազմաթիվ միահյուսված ցանցերի միջոցով»:¹⁰

Այս մոտեցումը սակայն բավականին մոտ է սոցիալական ցանցի՝ որպես «գերկառուցվածք» գաղափարին:

Ահա այսպես է Գլխը Շիլլերը նկարագրում անդրազգային սոցիալական դաշտերի բնույթը «Եսիստ տարբեր ուժեր և ուժային կենտրոններ ներկայացնող բազմաթիվ դերակատարներ փոխազդում են սահմանների միջով ու դրանցից անդին, ինչը ստեղծում և պահպանում է հարաբերությունների այս դաշտը: Մարդիկ, ովքեր ապրում են անդրազգային սոցիալական դաշտերում, ենթարկվում են մի շարք սոցիալական սպասումների, մշակութային արժեքների և մարդկային փոխազդեցության օրինաչափությունների, որոնք ձևավորվում են մեկից ավելի սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի կողմից»:¹¹

Գրանդվետտերի առաջ քաշած տեսության մեջ սոցիալական ցանցը սահմանվում է որպես հասարակական գործընթացների ակտորների (գործող անձանց) միջև փոխադարձ կապերի ու հարաբերությունների՝ տարատեսակ ռեսուրսների փոխանակությամբ (ներառյալ նվերներն ու փոխհարաբերությունների և համերաշխության այլ

¹⁰ Սահակյան 2022, 383–419:

¹¹ Glick Schiller 2003, 99–128.

խորհրդանիշներ) կայուն և ամուր ամբողջություն:¹² Ցանցի ներսում Գրանովետտերը կապերը տարաբաժանում է թույլերի և ուժեղների: Նա ապացուցում է «թույլ կապերի ուժը», որոնք ցանցին հնարավորություն են ընձեռում հասնել նպատակին՝ կապերի փոխադարձ փոխարինելիության, ինքնավարության, թվով ավելի շատ ցանցային կապեր օգտագործելու միջոցով:

Գրանովետտերի առանձնացրած թույլ և ուժեղ կապերը Պատնամը ամփոփել է սոցիալական կապիտալի երկու ձևերի մեջ:¹³

- Կապող, որը վերաբերում է հարաբերությունների բավականին համասեռ խմբերին, այնպիսին, ինչպիսին են ընտանիքի անդամները և մոտ ընկերները՝ հիմնված ուժեղ կապերի վրա: Կապիտալի այս տեսակը օգնում է մարդուն լինել ընդունված տվյալ հասարակության կողմից,
- Կամրջող-ներառական. սա վերաբերում է ծանոթների, գործընկերների հետ հարաբերություններին: Այս կապերը ավելի թույլ են ու բազմազան, դրանք կարևոր են սոցիալական աստիճանով շարժվելու համար :

Համաձայն մեկ այլ մոտեցման սոցիալական ցանցը հանդիսանում է տարատեսակ սոցիալական խմբերի՝ գոյության արտակարգ պայմաններին հարմարվելու համապարփակ միջոց: Տեսականորեն սոցիալական ցանցն արտահայտում է «ոչ պարբերական» կապերը և հարաբերությունները, և ապահովում են ցանցի անդամներին արտաքին գործոնների անմիջական ազդեցությունից: Այսպիսի ցանցի հիմնական գործառույթն է անդամներին ապահովագրել իրական կամ թեկուզ թվացյալ սպառնալիքներից:

Սոցիալական ցանցի ճգնաժամանային մոտեցման կողքին անհրաժեշտ է քննարկել նաև տեղափոխության և դրանից բխող հետագա սոցիալական գործընթացների ուսումնասիրության առավել հավասարահեռ մոտեցումները:

¹² Granovetter 1978, 201–212.

¹³ Putnam, Leonardi, Nanetti 1993, 35–42.

Սոցիալական ցանցի «հարմարման» մոտեցումը գիտության միջազգային ասպարեզում իր զարգացումն է ստացել Եվրոպայի և Լատինական Ամերիկայի տնտեսության աճող ոչ ֆորմալ սեկտորի ուսումնասիրությունների շնորհիվ: Օրինակ, երրորդ աշխարհի երկրների տնտեսութաան հետազոտողներն ընդգծում էին, որ ընտանիքների «փրկության ռազմավարության» մեջ հսկայական դեր է խաղում բարեկամական և ընկերական «ցանցը», որը օգնություն է ցուցաբերում ընտանիքի անդամներին աշխատանք փնտրելու և արտակարգ իրավիճակներում աջակցության հարցերում:

Հարմարման տեսության շրջանակներում սոցիալական ցանցը հիմք է ծառայում հասարակության մեջ փոխօգնության սոցիալական մեխանիզմի զարգացման համար: ¹⁴

Հասարակության ուղղահայաց կառուցվածքին փոխարինելու է գալիս հորիզոնականը, «հարթ» կազմակերպչական կապերի կառուցվածքները և հարաբերությունները՝ մարդկանց և նրանց միավորումների միջև: Ընտանիքը և ոչ ֆորմալ ընկերական միավորումներն իրենցից ներկայացնում են «համակարգից դուրս» «բևեռացված» ձև, որն էլ հասկանալի է դարձնում կազմակերպության ցանցային կառուցվածքի ժամանակակից սկզբունքները:

Սակայն այն, որ սոցիալական ցանցերը գոյություն ունեն պետության և հասարակության ոչ ավանդական սոցիալական ինստիտուտներում, չի զրկում նրանց սեփական ինստիտուցիոնալ ձևից. ոչ ֆորմալ ցանցային հարաբերությունները սկսում ֆորմալ ինստիտուցիոնալ ձև ստանալ: Ոչ միշտ են ընկերական կամ բարեկամական միջոցառումները, հավաքույթները վերափոխվում կազմակերպության, բայց շատ ցանցային կազմակերպություններ ձևավորվել են հենց այսպիսի հավաքույթներից: Մյուս կողմից, դժվար է գտնել մի ավանդական կազմակերպություն, որտեղ ամբողջությամբ բացակայեն ոչ ֆորմալ ցանցային միավորումները, որոնք «ապրում» են իրենց նորմերով ու կանոններով:

Նեոինստիտուցիոնալիստներ Ռ. Կրոուզը և Դ. Նորտը տնտեսական փոխհարաբերությունների հետազոտությունների օրինակով ցույց

¹⁴ Scott 1985, 35.

տվեցին, որ ոչ ֆորմալ կանոնները գործում են այնպես, ինչպես օրենքով ամրագրված նորմատիվային ինստիտուտների կանոնները: Այս գաղափարը դրսևորվել է նաև Պ.Բերգերի և Տ.Լուկմանի մոտ, ովքեր ինստիտուտի իմաստը տեսնում էին ցանկացած վարքային ակտի՝ «ինքնին ենթադրվող առօրյա գործողությունների ոլորտի» վերափոխման ընթացքի մեջ: Սոցիալական ցանցը սոցիալական ինստիտուտի հատուկ տեսակ է, որտեղ դրա անդամները դրսևորում են փոխօգնության և համերաշխության կայուն ձևեր: Այն պահանջում է ցանցային կառուցվածքին հատուկ նորմերի, չափորոշիչների առկայություն և բոլոր անդամների կողմից տվյալ վարքի օրինակների նույնականացում և ընդունում:

Ինչպես ցանկացած սոցիալական ինստիտուտ, այնպես էլ սոցիալական ցանցը պետք է ունենա ցուցանիշների գոնե նվազագույն նախապայմանները.

- Արտահայտի կազմակերպությունում մարդկանց համատեղ գործունեության պահանջումները՝ ուղղված նրանց սեփական և ընդհանուր գործառույթների ու նպատակների իրականացմանը:
- Ունենա կազմակերպչական կառուցվածքի և ցանցի միավորների միջև սոցիալական կապերի կայուն համակարգ, որը միավորում է այդ բոլոր միավորները հարաբերությունների որոշակի ձևի մեջ՝ ամրագրված սոցիալական դերերի ու կարգավիճակների տեսքով:
- Ունենա վարքի ավանդույթներ, նյութական ու բարոյական ռեսուրսների տեսքով արտահայտված ցանցային հարաբերություններ:

Միտջելն իր հերթին սոցիալական հարաբերությունները բաժանում է երեք տեսակի.

1. Կազմակերպակառուցվածքային, որտեղ հարաբերությունները բնութագրվում են սահմանված կարգով, մեկնաբանվում տվյալ համակարգում առանձին անձի կողմից զբաղեցրած դիրքի միջոցով

2. «Կատեգորիզացված» սոցիալական հարաբերությունները կառուցվածքային ոչ ֆորմալ իրավիճակներում, որոնք արտահայտվում են այնպիսի սոցիալական կարծրատիպերի միջոցով, որպիսիք են դասը, ռասան, էթնիկ պատկանելիությունը և այլն
3. Այս հարաբերությունների գործառնությունը տեղի է ունենում անձնային կապի միջոցով, որն արդեն դիտարկվում է որպես սոցիալական ցանց:

Միտչելը համարում է, որ սոցիալական վարքի մանրամասն վերլուծության համար կազմակերպա-կառուցվածքային և «կատեգորիզացված» սոցիալական հարաբերությունների ուսումնասիրությունները բավարար չեն, այդ իսկ պատճառով պետք է ուշադրություն դարձնել սոցիալական ցանցին ևս:

Սակայն Միտչելը (ինչպես և Բարնսը և այլք) չի բարձրացնում այս երեք տիպի սոցիալական ցանցի և հասարակության տնտեսական հարաբերությունների հետ փոխհարաբերության հարցը, որը սկզբունքորեն կարևոր է ընդհանուր մեթոդաբանական կողմնորոշման և վերլուծության արդյունավետության համար:

Մայերի, Շրինիվասի, Իպչտեյնի աշխատություններում, սոցիալական ցանցի հայեցակարգը ստացել է առավել լայն բացակրություն և դրա կիրառման դաշտը նշանակալիորեն ընդարձակվել է: Այն օգտագործվում է քաղաքական հարաբերությունների ուսումնասիրման շուկայական կապերի զարգացման և կարգավորման գործընթացների, տեղեկատվական հոսքերի բնույթի և ուղղության բացահայտման, տարատեսակ ծառայությունների փոխանակման համար:

Բարնսը նախընտրում է դիտարկել ցանցի խմբային բնութագրիչները՝ շեղվելով անհատական հատկանիշներից, որոնք իր հետ ցանց է մտցնում առանձին անձը: Միտչելը, Իպչտեյնը նախընտրում են անձին դիտարկել որպես ցանցի հատկանիշների կրող, ավելի շատ ուշադրություն դարձնելով խմբում առանձին հարաբերությունների յուրա-հատկություններին:

Սրա հիման վրա առանձնացվում են սոցիալական ցանցի երկու տեսակ՝

- Անձնային կամ էգոցենտրիկ ցանց,
- Ընդհանուր կամ սոցիոցենտրիկ ցանց:

Բարնսի մոտեցմամբ ընդհանուր ցանցը որոշակի սոցիալական դաշտ է ներառված կապերի որչ քազմազանությամբ. դա առաջնային վերացարկումն է իրականությունից, և այն ընդգրկում է առավել լիարժեք հնարավոր տեղեկատվություն այն հանրության սոցիալական կյանքի մասին, որին այն պատկանում է և արտացոլում է խմբային կապերի որչ քազմազանությունը և ամբողջականությունը:

Բարնսը ցանցային վերլուծության մեջ ներմուծում է լրացուցիչ հասկացություն՝ «մասնակի ցանց», որը ենթադրում է ընդհանուր ցանցից որոշակի հատվածի դուրսբերում, որը հիմնվում է որևէ միավոր չափանիշի վրա :

Անձնային ցանցը հարաբերությունների ցանց է, որը կենտրոնացած է մեկ (ավելի հազվադեպ երկու) կոնկրետ անձանց վրա: Խմբի չափն ու բնույթն այստեղ որոշվում են դրա անդամների՝ միմյանց և անձի հետ հարաբերություններով: Անձնային ցանցի հայեցակարգում շեշտը դրվում է կապերի որակական բնույթի վերլուծության վրա:

Միտչելն իր ցանցային տեսության մեջ, ելնելով ցանցում եղած անձանց դիրքից, դրա հիմնական ձևաբանական հատկանիշ է համարում ամրագրում հասկացությունը: Առաջին հերթին ցանցն ամրագրվում է որոշակի անձանց կոնկրետ իրավիճակում, որոնք դիրքորոշված են ոչ միայն միմյանց հանդեպ, այլ նաև կենտրոնական դերակատարների: Երկրորդ հերթին արդեն դիտարկվում է ցանցի սոցիալական հարաբերությունների ոչ թե որոշակի կտրվածք, այլ գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունների կոնկրետ քազմազանություն, ամբողջություն: Երրորդ հերթին, ավելի մեծ ուշադրություն է դարձվում հենց այդ կապերին և նրանց որակական բովանդակությանը:¹⁵

¹⁵ Бромлей, Григулевич, Пучков 1976.

Մարդաբանական ուսումնասիրությունների ավանդույթներում դասական աշխատությունները արտահայտում են ցանցի տեսական մոտեցումների փոփոխությունները. Բոտը սոցիալական ցանցին վերաբերվում էր որպես նորմեր սահմանող աղբյուրի, մինչդեռ Բոիսվեյնն ընդգծում էր ձեռնարկատերերի կողմից ցանցի կիրառման պոտենցիալ հնարավորությունը: Սոցիալական հարաբերությունների ցանցի ուսումնասիրության մեթոդաբանության որոշ հիմնադրույթներ սահմանվել են դեռևս Մորենոյի համապատասխան աշխատությունում:¹⁶ Մորենոն, դիմելով այլ մեթոդների, առաջ քաշեց «սոցիոմետրիա» եզրույթը, որպեսզի նկարագրի դրանցում խմբային կառուցվածքները և անհատական դիրքորոշումը: Սոցիոմետրիայի մեթոդի զարգացման հարցում Մորենոյի հետ համագործակցում էր Ջենինգսը: Նրանք փորձեցին օգտագործել սոցիոմետրիկական չափումները որպես հիմք խմբերի վերադասավորման համար՝ ընդլայնելով խմբի գործառնությունը և ստեղծագործականությունը: Սոցիոգրամները տեղեկատվական առումով բավականին հետաքրքիր են, սակայն չեն հեշտացնում ֆորմալ վերլուծությունները: Ֆորսիդն ու Կացը, Լուկն ու Պերրին առաջիններից էին, ովքեր փորձեցին հաղթահարել սոցիոգրամների սահմանափակումները՝ ներկայացնելով ցանցը մատրիցների տեսքով: Նրանք պնդում էին, որ սա կնվազեցնի սոցիոմետրիայի կառույցի մասին սուբյեկտիվ հայտարարությունները, և թույլ կտա օբյեկտիվորեն ճանաչել շղթաները, խմբերը և ցանցի անդամների միջև «թույլ միացումները»: Ավելի ուշ աշխատություններում գրաֆների տեսության կիրառությունը ցանցի վերլուծության մեջ կրճատեց նախկին ռեսուրսների անարդյունավետությունը:

Այսպիսով, ընդհանուր սոցիոլոգիական տեսանկյունից սոցիալական ցանցն ուսումնասիրվում է հիմնականում կառուցվածքային վերլուծության և սոցիոմետրիայի համատեքստում:

Սոցիալական ցանցն, ըստ էության, կապող օղակ է հասարակության կյանքի բոլոր ոլորտների միջև: Այսպես Ռ. Պատնամի սոցիալա-

¹⁶ Moreno 1934.

կան կապիտալի եռագործոն մոդելում (փոխադարձության նորմեր, անհատների միջև վստահություն և սոցիալական ցանց) նշվում է, որ անհատի հիմնական սոցիալական ցանցում (ընտանիք, ընկերներ, գործընկերներ) սոցիալական աջակցության և խրախուսման մակարդակն ազդում է երկրի զարգացման մակարդակի, ժողովրդավարության մակարդակի և ընդհանուր կայունության վրա: Տարատեսակ հատուկ սոցիալական խմբեր և ցանցեր ստեղծվում են առաջացած սոցիալական խնդիրների լուծման համար, որոնք անհնար է լուծել միայնակ:¹⁷ Սոցիալական ցանցերն ազդում են նաև հասարակության կյանքի տնտեսական ոլորտի վրա, օրինակ, աշխատաշուկայի, երբ հնարավորություն է տալիս ոչ ֆորմալ կապերի միջոցով աշխատանք գտնել՝ դառնալով յուրատեսակ կլաստեր որոշակի խմբի համար (օրինակ ներգաղթյալների): Վերջինից հետևում է, որ ունեցած ոչ ֆորմալ և ֆորմալ կապերը անհատական մակարդակում կարող են ազդել ոչ միայն ներկա իրավիճակի, այլև հետագա հնարավոր զարգացումների վրա: Որպես օրինակ, կարիերայի հաջողությունը և սոցիալական արձագանքը որոշվում են անհատի սոցիալական ցանցի չափերով:¹⁸

Մեկ այլ մոտեցմամբ աշխարհում գերիշխող արևմտյան մշակույթը, որը հռչակում է նպատակների և հնարավորությունների համանմանեցում, հանգեցնում է էթնիկ առանձնահատկությունների ուժացման և դրա կրողների արտամղման տիտղոսային հասարակությունից:¹⁹

Սոցիալական ցանցի և սոցիոլոգիայի միկրո և մակրո մակարդակներում դրանց փոխազդեցության խորացված վերլուծություն է իրականացրել Մ. Գրանովետտերը: Նա դիտարկում էր սոցիալական ցանցը որպես առանձին անհատի վարքի և ամբողջ համակարգի գործողությունների միջև կապող օղակ, պնդելով, որ ցանցում ուժեղ և թույլ կապերի փոխազդեցության առկայությունն ազդում է միաժամանակ անհատի կողմից սեփական փորձի ձեռքբերման և հասարակու-

¹⁷ Putnam 1995, 65–78.

¹⁸ Lamattina 2008, 161–194.

¹⁹ Puwar 2001, 651–700.

թյան կառուցվածքի ընդլայնման ու բարդացման վրա: Ընդ որում հենց թույլ սոցիալական կապերն են (օրինակ, տարատեսակ միջնորդներ, հեռավոր ծանոթներ և այլն) ձևավորում ընդհանուր համախմբվածություն և անհատի ինտեգրացիան հասարակությունում, այն դեպքում, երբ ուժեղ կապերը (ընտանիք, ընկերներ) ամրապնդում են հարաբերությունները նեղ շրջանակներում, սակայն նպաստում են ընդհանուր հասարակական կյանքից առանձնացմանը:²⁰

Հետխորհրդային հետազոտողները սոցիալական ցանցի ուսումնասիրելիս հիմնականում չեն շոշափում սոցիոլոգիայի մակրո մակարդակը, սահմանափակվելով կամ երևույթի մասին ընդհանուր պատկերացումների փոխանցմամբ, կամ օգտագործելով այն որպես հասարակական կյանքի տարբեր կողմերի տեղային վերլուծության գործիք: Այնուամենայնիվ, Վ. Դավիդենկոյի, Գ. Ռոմաշկինոյի և Ս. Չուկանովի ընդհանուր աշխատության մեջ փորձ է արվել ներկայացնել սոցիալական ցանցի բոլոր բարդության աստիճանների համակարգային վերլուծություն, ներառյալ գործընթացների վիզուալիզացիոն ծրագրերի վերլուծություն:²¹ Դ. Արտիմովիչը և Վ. Պուզիկովսի իրենց հերթին սոցիալական ցանցն դիտարկում են սոցիալական տարածքի համատեքստում:²²

Սոցիալական ցանցի ևս մեկ ուշագրավ մոտեցում արտահայտված է Բուրդիեյի դաշտերի տեսության մեջ: Օտար դաշտում ցանցային միավորի հաջող փոխազդեցության համար անհրաժեշտ է ոչ միայն ընդունել դրա կանոններն ու գործառնության ձևերը, այլև ներթափանցել սոցիալական ցանցի կառուցվածք: Միայն այդ դեպքում ձեռք բերված սոցիալական կապիտալը կդառնա արժեք և թույլ կտա ցանցի անդամներին կուտակել իրենց համար անհրաժեշտ ռեսուրսներ և բարձրացնել սեփական կարգավիճակը (այսինքն, այս դեպքում, զբաղեցնել նոր, ավելի արտոնյալ տեղ առաջնային սոցիալական ցանցում): Բացի այդ դաշտերի գոյության ողջ համակարգը կարող է սահմանվել

²⁰ Granovetter 1973, 1360–1380.

²¹ Давыденко, Ромашкина, Чуканов 2005, 68–79.

²² Артимович, Пузиков 2012.

սոցիալական ցանցի տվյալ դաշտերի գործակալների բնութագրիչներով: Նախ և առաջ, Պ. Բուրդիեյի տեսանկյունից, դաշտի անդամները միավորված են հիմնարար ընդհանուր շահերով (ավելի կոնկրետ նրանով, ինչը ապահովում է դաշտի գոյությունը)²³, դաշտում իրականացվող բոլոր գործընթացներով:

Այսպիսով, ցանցի ուսումնասիրությունը նպաստում է սոցիոլոգիայում մակրո և միկրո մակարդակների միավորմանը: Շատ մակրո-մակարդակի սոցիալական երևույթներ կարող են ընկալվել որպես ցանց: Միջազգային կապերում՝ աշխարհաքաղաքական կողմնորոշումները սահմանվում են ազգերի, երկրների և միջազգային կազմակերպությունների միջև եղած ցանցային կապերով: Այսպիսի երկաստիճան մոտեցումը հնարավորություն է ընձեռում դիտարկել սոցիալական ցանցերի բովանդակությունը նոր կողմերից:

Սոցիալական ցանցի ֆենոմենը տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր դպրոցների կողմից արժանացել է առանձնահատուկ մոտեցման, ինչը բխել է թե՛ ժամանակաշրջանի պահանջներից, թե՛ տվյալ հետազոտական ոլորտից և դրված խնդրից: Այդ պատճառով ցանցային տեսության զարգացումն ակնհայտորեն զուգակցվում է աշխարհում սոցիալական տեղաշարժերի կտրուկ աճով, միգրացիոն ուսումնասիրությունների անհրաժեշտությամբ, սփյուռքացման գործընթացների ահագնացմամբ: Այս երևույթը հանգեցնում է սոցիալական ցանցի ուսումնասիրության պարագայում էթնոսոցիոլոգիական հետազոտությունների արդյունավետության առանձնակի արժեվորմանը: Էթնոսոցիոլոգիական տեսանկյունից սոցիալական ցանցի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հասկանալ նոր միջավայրերում էթնիկ խմբերի ինքնակազմակերպման, ինքնակառավարման, ինքնության պահպանման և վերարտադրման առանձնահատկությունները: Նշված երևույթները կարող են ցուցանիշ հանդիսանալ որոշակի տրված էթնոսոցիալական միջավայրում սոցիալական ցանցի ուսումնասիրության համար, սակայն խնդրի համակողմանի և լիարժեք ուսումնասիրության

²³ Bourdieu 1992, 72–77.

և օրինաչափությունների բացահայտման համար անհրաժեշտ է սոցիալական ցանցի ուսումնասիրության հիմնարար բնութագրիչների քննարկումը: Ահա վերջինիս բացահայտումը միայն թույլ կտա հետազայում առավել ճշտագրտորեն որոշակիացնել էթնիկ բաղադրիչը էթնոսոցիալական երևույթների մեջ:

1.2 Սոցիալական ցանցի հիմնական բնութագրիչները

Սոցիալական ցանցի անդամների և նրանց միջև եղած կապերի հատկանիշների ամբողջության դիտարկումը թույլ կտա առավել լիարժեք նկարագրել սոցիալական իրականության մեջ առկա ցանցերը, ինչպես նաև կանխատեսել դրանց զարգացումները:

Ուսումնասիրելով ցանցերի փոփոխության գործընթացը էթնոսոցիոլոգիայի տեսանկյունից պետք է ուշադրություն դարձնել ցանցի ակտորների (գործող անդամների) տիպաբանմանը: Առանձնացվում են երեք հիմնական տիպ. «աստղեր», «կապեր», «սահմանապահներ»: Ամենաուժեղ դիրքն ունեն այսպես կոչված աստղերը, այսինքն նրանց է պատկանում ցանցում առկա կապերի մեծամասնությունը: Նրանք կարող են ակտիվորեն ազդել ցանցի կենսագործունեության վրա. առավել հաճախ կառավարում են այլ ակտորներին և կազմակերպում նրանց գործունեությունն ու հաղորդակցումը: Կապեր կոչվում են այն ակտորները, որոնք տիրապետում են եզակի կապերի տարբեր միմյանց հետ չհատվող ցանցերում: Նրանց կապերը «կամուրջ-կապեր» են, որոնք թույլ են տալիս երկու կամ մի քանի ցանցերի փոխանակվել տարաբնույթ ռեսուրսներով: Սահմանապահ համարվում են այն ակտորները, որոնք գտնվում են ցանցի ծայրամասերում, ունեն փոքր թվով կապեր և չեն ձգտում ավելացնել դրանք:

Դեռևս 80-ականներին քննարկվում էր սոցիալական ցանցում այսպես կոչված բրոքերների (կամ միջնորդների) հարցը: Այս դերը նկարագրվում էր մարդկանց և տեղեկատվության մանիպուլյացիա, որն իրականացվում էր եկամուտ ձեռք բերելու նպատակով:²⁴

²⁴ Kadushin 2002, 89.

2000-ականների սկզբին Ռ.Բերտոն անդրադարձավ ցանցային միջնորդների խնդրին. նա իր ուշադրությունը կենտրանացրել էր այն կապերի վրա, որոնք գոյություն կունենային, եթե չլիներ միջնորդը: Նա ցույց տվեց, որ մարդիկ, ովքեր ակտիվորեն հարաբերություններ են ստեղծում միմյանցից տարբեր անհատների միջև, ստանում են մեծ չափի արժեքավոր ռեսուրս, ինչպիսին է օրինակ արագ առաջխաղացում աշխատավայրում: Տվյալ ակտորները և նրանց կողմից կառավարվող ռեսուրսների ամբողջությունը կարող է դիտարկվել որպես ցանցի սոցիալական կապիտալ: Կառուցվածքային բացակները մրցակցային առավելություն են ընձեռում անհատին, իսկ կապերն իրենց հերթին ծածկում են դրանք:²⁵ Բացակները բուֆերային գոտիներ են, և ցանցի տարբեր կողմերում գտնվող մարդիկ շրջանառվում են տարբեր տեղեկատվական հոսքերում: Այսպիսով, կառուցվածքային բացակները միջնորդների համար արժեքավոր ռեսուրս են: Բարտի կառուցվածքային բացակների տեսությունը հնարավորություն է ընձեռում թույլ կապերի փակվելուն: Առանց թույլերի և ուժեղների տարաբաժանման հնարավոր չէ համոզիչ բացատրություն տալ, թե ինչպես են կապեր ստեղծվում կառուցվածքային բացակների անցումով:

Հաշվի առնելով սոցիալական ցանցի վերոնշյալ նկարագրությունները անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես և ինչի հաշվին են ձևավորվում դրանք: Այդ նպատակով առանձնացնենք սոցիալական ցանցի տեսակները:

Սոցիալական ցանցերը ձևավորվում են ըստ հետաքրքրությունների, շահերի, պահանջմունքների, ռեսուրսների և ազդեցության ոլորտների, սոցիալական կարգավիճակների և դիրքի: Ելնելով դրանից առանձնացվում են սոցիալական ցանցերի հետևյալ տեսակները՝ քաղաքական, տնտեսական, ֆինանսային, մշակութային, ժամանցային և այլն:

Սոցիալական ցանցը բաժանվում է նաև ֆորմալ և ոչ ֆորմալ, ուղղահայաց և հորիզոնական տեսակների:

²⁵ Burt 2002, 334.

Ոչ ֆորմալ ցանցը ձևավորվում է ոչ ֆորմալ հարաբերությունների հիման վրա, իսկ ֆորմալ ցանցում հստակ ձևակերպվում են ցանցային յուրաքանչյուր միավորի իրավունքներն ու պարտականությունները:

Ուղղահայաց ցանցում գազաթը ձևավորվում է խմբից, որը կազմված է առաջնորդներից և նրա ամենամերձ օգնականներից: Վերջիններս ձևավորում են խմբի ներքին արժեքանորմատիվային և սիմվոլիկ կոդերը, խմբի ռազմավարությունը, ինչպես նաև խմբի անդամների փոխհարաբերությունների և այլխմբերի հետ համագործակցությունների տակտիկան:

Հորիզոնական ցանցն, ի տարբերություն ուղղահայացի, իրենցից ներկայացնում են մոտավորապես նույն սոցիալական կարգավիճակի, դիրքի սոցիալական գործակալների հանրույթ:

Անհրաժեշտ է անդրադառնալ սոցիալական ցանցի ներսում գոյություն ունեցող կապերի հատկանիշներին, որոնց միջոցով ստեղծվում են այս կամ այն բնույթի հարաբերություններ: Ինչպես նաև կարևոր է դիտարկել ինքնին այդ կապերի միջև առկա փոխազդեցությունը:

Այսպիսով, սոցիալական ցանցը կարելի է բնութագրել ակտորների (գործող անձանց) հատկանիշների և դրանց միջև եղած փոխազդեցությունների միջոցով: Ցանցային եզրաքանության մեջ առաջիններն անվանվում են ակտորների հատկանիշներ (ատրիբուտներ), իսկ երկրորդները՝ կապերի բնութագրիչներ:

1. Ակտորների հատկանիշներ: Սրանք կարող են լինել ինչպես դինամիկ, այնպես էլ ստատիկ: Մեկ ակտորը կարող է բնութագրվել հատկանիշների խմբով: Կախված հետազոտության նպատակներից ու խնդիրներից կատարվում է որոշակի ակտորի ընտրություն և դրա ներառում համակարգի մեջ՝ հետագա ուսումնասիրության համար: Հատկանիշներն ընտրվում են կախված ակտորների դիտարկվելիք բնութագրիչներից: Ակտորների հատկանիշների օրինակներ են՝ անհատի եկամուտը, նրա մասնագիտական կարգավիճակը, քաղաքական նախընտրությունները, ինչպես նաև տվյալ երկրի կենսամակարդակը, գնաճի ցուցանիշը և այլն: Ակտորի ներքին բնութագրիչներն են՝ սեռը, տարիքը, դավանանքը և այլն:

2. Կապերի բնութագրիչները: Կապերի բովանդակային իմաստը կախված է համակարգի դիտարկման համատեքստից: Կապերը վերանում են, եթե դուրս ենք բերում ակտորին, որոնց միմյանց միացնում էին այդ կապերը: Կապերի օրինակներ են՝ միջանձնային հարաբերությունները, ռեսուրսների միջընտանեկան փախանակումը, կազմակերպությունների միջև ֆինանսական հոսքերը և այլն: Կապերը կարող են տարբերվել ինտենսիվությամբ, տևողությամբ, ուղղվածությամբ, լիարժեքությամբ:

Սովորաբար ակտորի որոշակի հատկանիշին համապատասխանում է որոշակի կապ:

Սոցիալական ցանցի դինամիկան կարող է բնութագրվել դրա անդամների և կապերի հատկանիշների փոփոխության միջոցով: Հատկանիշները կարող են լինել և՛ ստատիկ, և՛ դինամիկ. դրանց ընտրությունը և նախանշումը կախված է հետազոտության նպատակներից: Կապերի բնութագրիչները կարող են լինել հետևյալ չափանիշները. ինտենսիվությունը, տևողություն, հազվեցածություն, ուղղվածություն:

Անդրադառնալով սոցիալական ցանցի վերլուծությանը որակական բնութագրիչների միջոցով անհրաժեշտ է առանձին դիտարկել յուրաքանչյուր ցուցանիշ:

Այսպես, սոցիալական ցանցի վերլուծության ժամանակ կենտրոնացվածության հայեցակարգն ամենակարևորներից է: Կենտրոնացվածության ցուցանիշները սովորաբար ընկալվում են որպես ցանցի կամ ակտորների բնութագրիչների նկարագրական վիճակագրական տվյալներ: Օրինակ, միջնորդության կենտրոնացվածության բնութագրիչը չափում է այլ ակտորների միջև անուղղակի կոնտակտների հարաբերակցությունը: Այս ցուցիչը կարող է կարևոր բացատրող փոփոխական լինել ակտորների բնութագրիչների ուսումնասիրության մեջ:

Կենտրոնացվածության աստիճանը չափվում է ակտորի ուղղակի կապերի քանակով և հանդիսանում է ցանցում ակտորների ճանաչելիության և ակտիվության ցուցիչ:

Խտությունը և տեղեկատվության կենտրոնացվածությունը ցանցում ակտորների միջև հեռավորության և միմյանց հասնելու ուղիների ցուցիչներն են:

Վերոնշյալ բնութագրիչներն իրենց հերթին կապված են հասանելիության, անվտանգության, երաշխիքի և վստահության գաղափարների հետ:

Սովորաբար սոցիալական հարաբերությունների առավել մեծ խտություն և կենտրոնացվածություն կարելի է դիտարկել վստահության բարձր ցուցանիշ ունեցող հանրույթներում, հետևաբար այստեղ կապերի թափանցիկությունը հանգեցնում է հասանելիության բարձր աստիճանի: Վստահությունը հաջորդիվ կապիտալիզացվում է ցանցի անդամների անվտանգության ապահովման և երաշխիքների տրամադրման:

Բացի սոցիալական ցանցի բնութագրիչներից կարևոր է քննարկել նաև ընդհանուր առմամբ ցանցի զարգացման հնարավորությունը:

Սոցիալական ցանցի դինամիկայի ուսումնասիրության ժամանակ կարևոր գործոն է կապերի փոխադարձելիությունը: Ընդ որում հատուկ ուշադրություն պետք է հատկացնել այն պայմաններին, որոնք նպաստում են կոոպերացիաների ձևավորմանը:²⁶ Մարդիկ ավելի հաճախ տալիս են այնքան, որքան ստանում են: Գրականության մեջ այս երևույթն անվանում են սահմանափակ փոխանակություն: Ենթադրվում է, որ աջակցությունն ընդունողը հասկանում է, որ փոխադարձելիությունը պետք է իրականացնել սահմանափակ ժամանակահատվածում: Այսպիսի վարքը կարող է պայմաններ ստեղծել ապագա փոխադարձելիության և կոոպերացիայի առաջացման համար: Ի տարբերություն սահմանափակ փոխադարձելիության, գեներացված (խառը) փոխանակությունը տեղի է ունենում այն դեպքում, երբ մարդիկ վերադարձնում են օգնությունը մեկ այլ բանով, ինչն ըստ իրենց հավասար օգտակարություն ունի: Այն հանդիսանում է միջանձնային վստահության ցուցիչ: Եթե խոսքը գնում է ցանցի ներսում փոխանակության մասին, ապա վստահության առկայության պարագայում երրորդ անձը կարող է ստանալ վերադարձվող աջակցությունը: Տվյալ հանգամանքը հանգեցնում է ցանցում փոխադարձելիության հաստատմանը:

²⁶ Plickert, Cote, Wellman 2007, 412.

Վերոնշյալ խնդրի վերաբերյալ Ջ. Պլիկարտի և իր գործընկերների իրականացրած հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ կապերի բնութագրիչները չեն ազդում հուզական աջակցության փոխանակության վրա: Ոչ կապի ուժը, ոչ կոնտակտների հաճախականությունը, ոչ դեմ առ դեմ կամ հեռահար շփումը, ոչ էլ նույնիսկ ընկերությունը չեն ազդում փոխադարձելիության վրա: Վերոնշյալ հետազոտության արդյունքները փաստում են, որ սեռի բնութագրիչը երկկողմանի աջակցության և միակողմանի աջակցության դեպքում դրսևորվում է տարբեր կերպ: Ռեսուրսների փոխանակման փոխադարձելիությունը հիմնված է ոչ թե անհատների ընդհանրությունների, այլ նախկինում տրամադրած ռեսուրսների վրա: Այսպիսով, դասակարգը, սեռը կամ ամուսնական կարգավիճակը չեն ազդում փոխադարձելիության վրա, այն կախված է նախկին աջակցություններից, կամ այլ կերպ ասած անհատների միջև փոխհարաբերությունների փորձից:

Այսպիսով, կարելի է անել հետևյալ եզրակացությունը. և ակտորների, և կապերի բնութագրիչները ցանցի դինամիկայի վրա ազդող կարևորագույն գործոններ են: Տարաբնույթ ցանցերի ուսումնասիրության ժամանակ այս կամ այն գործոնների ընտրությունը կախված է այն տեղեկատվության բնույթից, որը ձգտում ենք ստանալ հետազոտության արդյունքում: Այսպես, տեղային (լոկալ) հանրույթների, համայնքների ուսումնասիրության ժամանակ ավելի մեծ կարևորություն են ունեն փոխադարձելիության, ներգրավվածության գործոնները, քանի որ սահմանափակ հարաբերությունների պայմաններում ցանցի յուրաքանչյուր առանձին անդամ կամ կապ առավել բարձր նշանակություն են ստանում:

Անդրադառնալով սոցիալական ցանցի առանձնահատկություններին նախ և առաջ դիտարկենք դրա հիմնական բնութագրիչները:

Սոցիալական ցանցի բնութագրիչները բազմազան են և դրանք հաշվի առնելու նպատակահարմարությունը բխում է կոնկրետ հետազոտության նպատակներից: Դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ քանակական և որակական:

Հիմնական քանակական բնութագրիչները հետևյալն են.

1. Ցանցի չափ – անհատական հարաբերություններ ներգրավված ուղղակի կապերի քանակն է: Այս չափանիշն օգտագործվում է ցանցում ներառված հանրայթի չափման համար, վերջինս հնարավոր է վերհանել կայուն կապերի ուսումնասիրությամբ որոշակի ժամանակահատվածում:
2. Ցանցի խտություն – ցանցի միավորների միջև եղած կապերի ընդհանուր թիվն է (սոցիոմետրիկակական մատրիցում այս ցուցչի անալոգը «համախմբվածությունն» է):
3. Կենտրոնացում (centralization) և համակենտրոնացում (concentration) – ցանցային կապերի հիերարխիկության աստիճանն է, որը պայմանավորված է, մասնավորապես, մասնակիցների հաղորդակցական ակտիվությամբ, վարքի վերահսկման հնարավորություններով և անուղղակի կապերի առկայությամբ:
4. Ցանցում կապի ուժը սահմանվում է փոխազդեցություններում կապերի ինտենսիվությամբ, որը չափվում է դրանց փակվածության, հաճախականության և տևողության հիման վրա: Օրինակ, կապի ուժի կատարյալ ցուցիչներ են համարվում հեռախոսային զրույցների տևողությունը ցանցում կամ փոխազդեցության ծավալը, սակայն կապի ուժի չափման համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում օգտվել գնահատողական նկարագրություններից: Կապի ուժի չափման կիրառական տվյալները թույլ են տալիս որոշակի ենթադրություններ անել հանրայթների իրական գործառնության վերաբերյալ:
5. Ցանցի միջակայք – բազմաաստիճան կապերի ընդհանուր երկարությունն է (երթուղի), որտեղ ցանցի մեկ միավորը կապված է այլ միավորների հետ: Միջակայքը կարելի է գնահատել ինչպես ցանցի չափով, այնպես էլ խտությամբ: Գրանովետները, մասնավորապես, պարզել է, որ ավելի պակաս խտություն ունեցող ցանցերն ունեն մեծ միջակայք:
6. Ցանցի ներփակվածության աստիճանը – միմյանց միջև հարաբերություններ հաստատելու հնարավորության աստիճանն է:

Սոցիալական ցանցի ձևն օգնում է որոշել սեփական ներուժի օգտակարության աստիճանը ցանցի մասնակիցների համար: Փոքր, փոխկապված ցանցերը կարող են պակաս օգտակար լինել ցանցի անդամների համար, քան թույլ, հիմնական ցանցից դուրս գտնվող, բայց շատ կապերով ցանցերը: Ավելի հավանական է, որ «թույլ» կապեր և սոցիալական փոխհարաբերություններ ընդգրկող «Բաց» ցանցերը ցանցի անդամներին առաջարկեն ավելի նոր գաղափարներ և հնարավորություններ, քան բազում ավելորդ կապեր ընդգրկող փակ ցանցերը:

Սոցիալական ցանցի որակական բնութագրիչներն են

- փոխներգործուն բնութագրիչները, որոնք ցույց են տալիս սոցիալական ցանցում կապերի ուղղվածությունը (միակողմանի կամ փոխադարձ) և նրանց բովանդակությունը (մոնո- կամ բազմագործառութային);
- գործառութային բնութագրիչները, որոնք կապված են սոցիալական ցանցի անդամների տարատեսակ գործունեության հետ, դրանք կարող են կրել հոգեբանական (սոցիո-հուզական), նյութական, տեղեկատվական և աջակցության և օգնության օժանդակ բնույթ:

Այժմ առավել մանրամասն քննարկենք վերոնշյալ բնութագրիչները.

Կապի ուժը

Մի շարք հեղինակներ չափել են երկու կապերի հատկանիշների զանազանությունը՝ փորձելով ստանալ կապի ուժի գործակիցը: Անհատական փոխազդեցության և սոցիալական աջակցության գրականության մեջ բերվում են բազում բարդ գործակիցներ: Օրինակ՝ Լանդը (1985) կազմում է սիրո, հուզականության սանդղակներ՝ մերձ, միջանձնային փոխազդեցությունների համար:

Որոշ հետազոտություններում ուսումնասիրվում է կապերի բնութագրիչների միջև կորելացիան, այնպիսիք, ինչպիսին են հաճախությունը, տևողությունը, ներփակվածությունը: Այնպես, որ դժվար է

ակնկալել նմանատիպ սանդղակներում հարցերի ստույգ պատասխաններ: Մարդսենը և Քեմփբելը (1984) մանրամասն դիտարկելով մոտ ընկերների կապերը, պնդում են, որ լավագույն ստուգիչի կիրառման դեպքում հարցվողի ներփակվածության կամ կոնտակտների հաճախության չափման ժամանակ այլ ակտորների նկատմամբ գլխավորը հետաքրքրության ուժն է: Կոնտակտների երկարատևությունը մեծացնում է բարեկամական, և հաճախ կոլեգաների և հարևանների հետ կապի ուժը. սա թույլ միացումները դարձնում է միահյուսված և կայուն: Մերծություն, շարունակականություն և հաճախականություն. «ինտիմության» այս դրական ցուցիչները հետազոտության արդյունքների բացատրության համար սոցիալական կապերի առավել հետևողական հատկանիշներ են թվում:

Կապի չափը

Կապի չափը ցանցում ցանկացած զույգ զագաթների միջև ամենամեծ հեռավորությունն է: Ֆորմալ կերպով ցանցի չափը հավասար է դրա բոլոր զույգ զագաթների միջև կարճագույն ուղիների առավելագույնին:

Ցանցի չափերը ներկայացնող հիմնական չափանիշը անհատական միավորումներում ներառված ուղիղ կապերի թիվն է:

Ֆրեդկինը (1981) դուրս է բերել, որ խտության օգնությամբ բավականին խնդրահարույց է կառուցվածքային «համակարգի» դուրս բերումը, եթե ցանցն ունի ենթախմբեր, և որ ցանցի չափերի փոփոխության դեպքում կարող է կատարվել խտության փոխակերպում:

Ցանցային միջակայք

Բերտը ցանցի միջակայքը սահմանում է որպես ընդհանուր բազմաստիճան կապի (երթուղու) երկարություն, որով ցանցի մի միավորը կապված է մյուսների հետ:²⁷ Միջակայքը կարելի է գնահատել ինչպես ցանցի չափերի, այնպես էլ դրա խտության միջոցով: Ինչպես դուրս է բերվել Գրանովետտերի ուսումնասիրությունների արդյունքում (1973), ավելի պակաս խտություն ունեցող ցանցերն ունենում են ավելի

²⁷ Burt 1992.

մեծ միջակայքը: Այլ հետազոտություններում չափվել են տարբեր միավորումների բնույթի տարբերությունները: Բերտը սահմանել է միավորների դիրքային համանմանությունը մեկը մյուսի նկատմամբ և դրանց կիզակետերի միջև կապի ուժը: Քենփբելը (1986) հետազոտել է միջակայքի չափման տարբեր գործիքների աշխատանքը: Նա դուրս բերեց, որ գործիքները թույլ են կորելացված և ենթադրվում էր, որ դրանց տարբերակման հիմք է հանդիսանում ցանցային չափի, խտության և բազմազանության չափումը:

Ցանցային խտություն

Ցանցային խտությունը, ցանցային կառուցվածքի առավել ընդհանուր ցուցիչն է: Սովորաբար սրա տակ հասկանում են ցանցում միավորումների միջև կապվածության նշանակալի ուժը կամ (դիխոտոմի չափման համար) գոյություն ունեցողների և հնարավոր կապերի հարաբերակցությունը: Մեկ այլ տեսանկյունից խտությունը կարելի է սահմանել որպես երկու ակտորների միջև եղած այլ ակտորների հանրագումարը, այլ կերպ ասած, թե որքան ակտոր է առկա նշանակված ակտորին հասնելու ճանապարհին: Համապատասխանաբար, որքան շատ է մեկ կապի վրա եղած ակտորների թիվը, այնքան խիտ է ցանցն ընդհանուր առմամբ:

Կենտրոնացվածություն և համակենտրոնացում

Ցանցային չափման մեթաբանական աշխատանքների մեծամասնությունը նվիրված է կենտրոնացվածության հատկանիշների չափմանը ինչպես առանձին գագաթների, այնպես էլ գրաֆներին ընդհանրապես: Ֆրիմանը (1979) իրականացրել է ուսումնասիրություն, որպեսզի դուրս բերի կենտրոնացվածությունը չուղղորդված ցանցի համար: Կենտրոնացվածության չափման համար կարելի է առանձնացնել երեք մոտեցում.

1. Կենտրոնացվածության աստիճանի չափում. այս մոտեցման դեպքում կարևոր է ակտորների քանակը, որի հետ կապված է տվյալ ակտորը: Պարզագույն դեպքում սա ուղղակի ակտորի կապերի քանակի հաշվումն է:

2. Այս մոտեցման ժամանակ չափվում է կենտրոնացվածության խտությունը, թե ակտորը որքան մոտ է գտնվում մյուս ակտորներին: Եթե դիրքը կենտրոնական է, ուստի ակտորը կարող է արագ փոխազդել այլ ակտորների հետ: Այս դիրքը շատ շահեկան է հաղորդակցության իրականացման դեպքում: Այսպիսի մոտեցմամբ կենտրոնը այն դիրքն է, որից անհրաժեշտ է նվազագույն քանակի քայլերը մյուս բոլոր անդամների դիրքերին հասնելու համար:
3. Բոնաչիչը համեմատում էր կենտրոններին վերաբերող կապերը:²⁸ Միզրուչին հետազայում կատարվագործելով Բոնաչիչի մեթոդը, առանձնացրել է ծանրության կենտրոնների դիրքը, որոնք պետք է ունենան բարձրագույն բալլերը, և կամուրջների դիրքը, որոնք միացնում են մի քանի լավ կենտրոնացած միավորումներ:

Մեթոդաբանական մշակումների առանձին ճյուղ է հանդիսանում մշտապես փոփոխվող կենտրոնացվածության առանձնացման տեխնիկան: Բոնաչիչն ընդհանրացրեց հետազոտությունների արդյունքները, որոնք անուղղակի կապերի միջոցով օգնում են իջեցնել, այլ ոչ թե բարձրացնել միավորումների կենտրոնացվածությունը: Սա թույլ տվեց կառուցել փոխանակման հարաբերությունների ցանց՝ առանց բացասական կապերի ազդեցության:

Բոնաչիչի չափումներում հաճախ օգտագործվում է ցանցում ներառված միավորումների ուժի գործակիցը:

Համաչափություն

Ցանցի կառուցվածքային հատկանիշները նկարագրելիս հաճախ անդրադառնում են առանձին միավորների կառուցվածքային նմանության գաղափարին: Վերլուծության ժամանակ կառուցվածքայնորեն նման միավորների դուրսբերումը պարզեցնում է ցանցի պատկերը՝ միավորելով դրանք ավելի խոշոր միավորների մեջ:

²⁸ Bonacich 1985, 1170–1182.

Ցանցի սահմանները

Ինչպես ամբողջական, այնպես էլ էզոցենտրիկ ցանցային սովորյալների համար գոյություն ունի միավորների ընտրության խնդիր: Ըստ էության, այն զուգահեռ է ցանցի ուսումնասիրության հիմնական մեթոդաբանական խնդիրներին՝ համախմբության սահմանում, թիրախային բնութագրիչների որոշակիացում, հետազոտության արդյունքների ամփոփում՝ համապատասխան նախանշված խնդիրների: Ինչպես նշում էր Բարնսը, անհրաժեշտ միավորների սովորումը կամ միավորների միջև սահմանների թերի ընդգծումը կարող են աղավաղել արդյունքները:

Այս նպատակով անհրաժեշտ է նախապես սահմանել ինչպես հետագա հետազոտության ռազմավարությունը, այնպես էլ դրա սահմանափակումները: Դրանք կարելի է ներկայացնել հետևյալ երեք մոտեցումներով.

1. Իրական մոտեցումներ, որոնք հիմք են ցանցային հարաբերություններում գործառնող ակտորների սուբյեկտիվ ընկալումների համար
2. Նոմինալ մոտեցումներ, որոնք սահմանվում են հետազոտողի կողմից
3. Ընթացակարգային տակտիկա սահմանների որոշման համար

Երրորդ մոտեցումը հիմնվում է միավորների հատկանիշների վրա, իսկ ներառման չափանիշները սահմանվում են ֆորմալ ցուցիչներով, օրինակ, դպրոցում ուսանելու, աշխատանքային գործունեությանը ներգրավվելու, մասնագիտական միավորմանը անդամակցությամբ կամ էլիտային պատկանելիությամբ:

Էզոցենտրիկ ցանցի համար միշտ կա սահմանի խնդիր, որը սովորաբար որոշվում էր լիարժեք ցանցի այլ միավորների միջոցով: Այն միավորները, որոնք ուղղակիորեն հաղորդակցվում են մեր կողմից առանձնացված միավորի հետ, սովորաբար դասում են «առաջին կարգի» գոտուն՝ Բարնսի եզրաբանությամբ:²⁹ Դրան հաջորդում են

²⁹ Barnes 1969.

«երկրորդ կարգի» գոտին՝ մեկ միջնորդով, «երրորդ կարգի» և այլն: Զուտ պրագմատիկ պատկերացումները ստիպում են սահմանափակել ուշադրությունը միայն ուղիղ կոնտակտներով: Տվյալների հավաքման սովորական մեթոդների դեպքում էզոցենտրիկ ցանցի չափերի սահմանափակումը դրված է հարցարանի հարցերից մեկում, որը ֆիլտրում է միայն ուղիղ կոնտակտներով միացած միավորները:

Այսպիսի հարցումներում չափվում են կապերի հատուկ տեսակներ: Հաճախ հետազոտողներն առանձնացնում են դրական գործողությունները՝ փոխադարձ աջակցություն, ուղղորդում և համակրանք. կոնֆլիկտային կապերը ներառվում են միայն անհրաժեշտության դեպքում:

Սակայն ցանցային հարաբերություններում կապերի չափման հետագա զարգացումն անհրաժեշտություն առաջացրեց մշակել միջանձնային հարաբերությունների էմպիրիկ տիպաբանությունն այն դեպքերի համար, երբ փոխվում էր կապի ուժը, կոնտակտների հաճախականությունը, դերային փոխազդեցությունը (բարեկամական կամ արտադրական կոնտակտներ):

Ցանցային պրոեկտավորում. վերլուծության մակարդակները

Ցանցը կարող է վերլուծվել ամենատարբեր մակարդակներում: Ցանցային մոտեցումն ամենաարդյունավետ ռազմավարություններից մեկն է միջմակարդակային վերլուծությունների համար: Հատկապես հեռանկարային է տարբեր սոցիալական կառույցների՝ աշխատանքային խմբեր, կազմակերպություններ, համայնքներ, միմյանց հետ համեմատելու հնարավորությունը: Նախ և առաջ տվյալներ են հավաքվում պոպուլյացիայի յուրաքանչյուր մասնակցի, ակտորների կազմի, նրանց կապերի և դրանց ուղղվածության մասին: Նվազագույնն ուսումնասիրվում է սոցիալական կապի մեկ տեսակը, բայց վերլուծության մեջ ներառվում են տվյալներ տարբեր տեսակների մասին:

Կարևոր է նշել, որ ցանցի ներսում ունեցած դիրքը սահմանում է տվյալ անհատի գործառույթները, իսկ դիրքի բնութագրիչները կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ցուցիչներ: Ներքին բնութագրիչներն են՝ սեռը, տարիքը, մտավոր կարողությունները, դա-

վանանքը, իսկ արտաքինները՝ անհատի եկամուտը, նրա մասնագիտական կարգավիճակը, ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը, ինչպես նաև տվյալ երկրում կենսամակարդակը, հասարակական նորմերն ու արժեքները, էթնիկ պատկերն ու ավանդույթները: Իհարկե, կախված հետազոտության նպատակից ու խնդիրներից, այս բնութագրիչների դասավորվածությունը կարող է փոփոխվել:

Ցանցային չափումներին վերաբերող հետազոտությունների մեծամասնությունը կենտրոնանում է հարցման տվյալների վերլուծության վրա: Այս տեսակ ուսումնասիրությունների ժամանակ ենթադրվում է, որ հետազոտողները փնտրում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական կապեր: Հարցվողների ցանցային կապերի մասին տեղեկատվության ճշգրտությունը և հուսալիությունը կարող է հաստատվել տարբեր ուղիներով. հարցվողի պատասխանները հետազոտողի դիտարկումների հետ համեմատելու, ցանցի առանձին միավորների հետ հարցազրույցի միջոցով և այլն: Վերլուծության ժամանակ բազմացուցչության կիրառումը թույլ է տալիս համեմատել ուսումնասիրվող օբյեկտի առանձին միավորներն ըստ տարբեր հատկանիշների, օրինակ հուսալիության:

Հետազոտությունների ժամանակ ցանցային բնութագրիչների միջոցով կարելի է չափել ինչպես որակական այնպես էլ քանական ցանցային բնութագրիչներով: Սոցիալական հատկանիշների, մասնավորապես էթնիկության կամ դրա հիմքի վրա ձևավորված սոցիալական խմբերի ցանցային վերլուծության համար առավել արդյունավետ են հենց որակական բնույթի ցանցային չափանիշների կիրառությունը: Դրանք թույլ են տալիս քիչ համախմբության վրա, առավել ճշգրիտ պատկեր ստանալ, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում վերհանել ուսումնասիրվող երևույթի նոր կողմեր:

2. ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Նոր միջավայրում սոցիալական հանրույթի ուսումնասիրությունն առանձնահատուկ գիտական նշանակություն ունի: Հատկապես կարևոր է հաշվի առնել երևույթի բոլոր փուլերը համապատասխան հաջորդականությամբ՝ հանրույթի համախմբումից մինչև համայնացում, ինքնակազմակերպման առավել բարձր մակարդակներ: Էթնիկ խմբերի ինքնակազմակերպման գործընթացը հիմնվում է խմբի ինքնաընկալումի, համախմբման, կենտրոնացման և ապակենտրոնացման և այլ հատկանիշների դրսևորման ունակության վրա:

Ինքնաընկալումը տեղափոխված էթնիկ խմբերի ինքնակազմակերպման համար կարևոր գործոն է: Այն որոշակիորեն սահմանում է ընդհանուր կանոններ, արժեքներ, որի շրջանակներում տեղի է ունենում խմբի հետագա դիրքավորումը սոցիալական միջավայրում: Սակայն բացի ինքնաընկալումից գործում է նաև որոշակի հատկանիշների, վարքականոնի վերագրում շրջապատող այլ սոցիալական խմբերի կողմից, ինչը հանգեցնում է պատկանելիության այս կամ այն խմբին: Ահա այս գործընթացում առավել ցայտուն կերպով արտահայտվում են գերիշխող հատկանիշները, որոնք պետք է բնութագրեն խմբի բոլոր անդամների հիմնարար հատկանիշները, պատասխանեն նրանց պատկերացումներին: Որպես այդպիսի հատկանիշ նոր սոցիալական միջավայրում հաճախ հանդես է գալիս էթնիկությունը՝ որպես խմբի ընդհանուր բնութագրիչ:

Արդյունքում, տեղի ունեցող համախմբման գործընթացում խմբի անդամները սկսում են իրենց ընկալել որպես էթնիկ խումբ, ներկայանալ

որպես տվյալ խմբի անդամներ և ձևավորում են հարաբերությունների ցանց էթնիկության բնութագրիչի հիման վրա:

Այս գործընթացն ընկած է սփյուռքի համայնքների ձևավորման հիմքում: Այս երևույթներն առավել հիմնավոր կարելի է բացատրել նեոհինաստիտուցիոնալիստական մոտեցման տեսանկյունից՝ հիմնվելով այն գաղափարի վրա, որ հինաստիտուտները ոչ այնքան սահմանափակում են խմբի գործունեության շրջանակը, որքան պայմաններ են ստեղծում խմբի ինքնության ձևավորման, անդամների միջև կայուն կապերի հաստատման, շահերի գիտակցման և այլնի համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է էթնիկ խումբը դիտարկել որպես դրա անդամների միջև փոխհարաբերությունների համակարգ, որը գործառնում է էթնիկ նույնացման սկզբունքի հիման վրա:

Ընդունող հասարակությունները հաճախ միգրանտներին և նրանց խմբերին դիտարկում են միայն էթնիկության բնութագրիչից ելնելով, այդպիսով մեխանիկորեն ամրագրելով նրանց որոշակի վարք, ընդգծված տարբերիչ հատկանիշներ և ակնկալիքներ: Սակայն, մյուս կողմից, միգրանտներին շահեկան է այսպիսի մոտեցումը, քանի որ հնարավորություն է ընձեռում նախ բյուրեղացնել խմբի հատկանիշները, որոշակիացնել վերահսկողության և ինքնակազմակերպման գործիքները:

Էթնիկությունը դառնում է միգրանտների համար «համախմբման միջոց», դրանով խմբի ներկայացուցիչներին տրամադրելով համայնքի բոլոր անդամների կողմից ընկալելի և տարածված մշակութային նյութ, ինչը թույլ է տալիս նրանց որոշել խմբի սահմանները: Միգրացիայի ներկայիս էթնիկանացումը անմիջական հետևանքն է տարածված էթնոկենտրոն դիսկուրսի, որտեղ սոցիալական իրականության տեսական կարգավորումների հիմնական կատեգորիան էթնոսն է՝ պրիմորդիալիստական իմաստով:

Նոր միջավայրում էթնիկ խմբի ներքին կայունության, համախմբման և ինքնակազմակերպման տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի սոցիալական ցանցի դերի պարզաբանումը և դրա իրականացրած գործառույթների որոշակիացումը: Այն հանգեցնում է

արժեքանորմատիվ համակարգի ձևավորմանը, ցանցի անդամների միջև սոցիալական փոխազդեցության ապահովմանը և պահպանմանը: Վերջինս նաև հնարավորություն է ընձեռում ձևավորել ընդհանուր հետաքրքրություններ, սահմանել հետագայում խմբի ընդհանուր ակնկալիքները, կոլեկտիվ նպատակները, նոր պայմաններին ցանցի անդամների հարմարման և ինտեգրման համար անհրաժեշտ պայմանները:

Մինչ անդրադառնալը սոցիալական ցանցի գործառույթների քննարկմանն էթնիկ խմբում և մասնավորապես սփյուռքյան համայնքներում, անհրաժեշտ է որոշակիացնել էթնիկության, էթնիկ սահմանների հասկացություններն այս աշխատանքի շրջանակներում:

Էթնիկությունը որպես սոցիալ մշակութային համակարգի կարևոր և կայուն տարր, հաճախ դառնում է սոցիալական դաշտում առավելությունների ձեռքբերման, ինչպես նաև ազգային ինքնագիտակցության առանձնահատկությունների սահմանման մոբիլիզացիոն միջոց:

Նոր միջավայրում էթնիկությունը արտահայտվում է սեփական էթնիկ ինքնության վերաբերյալ պատկերացումներով, դրա զարգացման ուղղություններով: Համաձայն Ստյուարդ Հոլլի³⁰ բնորոշման ինքնությունը և սփյուռքը գտնվում են անքակտելի և շարունակական փոխազդեցության մեջ: Այդ փոխազդեցությունը պետք է դիտարկել դիրքավորման սկզբունքների պրիզմայով, որը ենթադրում է՝

- որևէ երևույթի մասին գրելը կամ խոսելը որոշակի տարածության և ժամանակի մեջ (տեղ և ժամանակ);
- ինչ գրում կամ ասում ենք միշտ որոշակի համատեքստի մեջ է, դիրքորոշված է

Ինչպես սահմանում է Հոլլը, ինքնությունը պատմության, լեզվի և մշակույթի ռեսուրսները օգտագործելու վերաբերյալ հարցեր են ավելի շատ կայանալու ընթացքում, քան լինելու. ոչ թե «ով ենք մենք» կամ «որտեղից ենք եկել», որքան՝ ինչ ենք մենք դարձել, ինչպես ենք մենք ներկայացվել և ինչպես ենք մենք ներկայացնում ինքներս մեզ: Լինելով

³⁰ Hall 1990, 222–237.

մշտական գործընթացի մեջ՝ ինքնությունը կայուն փոխակերպվում է, դառնում ավելի հատվածական, մասնատված և «բազմաթիվ անգամ վերակառուցվում է տարբեր (հաճախ հակադիր կամ թշնամի) խոսույթների, պրակտիկաների և դիրքերի շուրջ»: Մասնատված և փոփոխվող ինքնությունը, այդուհանդերձ, ձգտում է ներփակվելու, ներքին համաձայնության և անվերջության զգացումի³¹, ինչին հնարավոր է հասնել վերապատմելով անցյալի պատմությունն ու պատկերացնելով «հայրենիքը»:

Սփյուռքյան ինքնությունը որոշվում է՝ ընդունելով բազմազանության և տարբերությունների անհրաժեշտությունը: Այն կայուն ձևով արտադրվում և վերարտադրվում է կրկին՝ միգրացիոն նոր հոսքերին զուգահեռ, նաև վերարտադրվում է անվերջանալի ցանկությունը՝ վերադառնալ «կորուսյալ ծագմանը»:³²

Ինքնությունը սահմանվում է մի շարք սոցիալական գիտակարգերի կողմից, ինչպիսիք են սոցիալական հոգեբանություն, սոցիալական մարդաբանություն, սոցիոլոգիա և այլն, դրանով հաստատելով հասկացության համակցված-համալիր բնույթը: Մի դեպքում էթնիկ ինքնությունը սահմանվում է որպես սիմվոլների համախմբություն, որն իմաստավորվում և կարևորություն է ստանում դրանց կրողների կողմից և ներառում ապահովում էթնիկ խումբ: Մյուս դեպքում որպես ընդհանուր ծագման համերաշխության դրսևորում, միևնույն խմբին պատկանելիության զգացում և սեփական դերի գիտակցում, ինչն էլ հավելյալ հետաքրքրություն է առաջացնում սեփական էթնիկության նկատմամբ:

Ի թիվս էթնիկ սոցիալականացման այլ գործոնների՝ ընտանիք, սոցիալական մերձ միջավայր (ընկեր, հարևան), լեզու, սփյուռքում էթնիկ ինքնության ապահովման կարևորագույն գործոն կարելի է համարել համայնքային կառույցները: Դրանք ինքնակազմակերպման եղանակով որոշակի էթնիկ խմբի պատկանող անձանց միավորումն է:

³¹ Frith 1996, 108–126.

³² Hall 1996, 1–17.

Ազգային կամ համայնքային կառույցները հիմնականում իրականացնում են էթնիկ խմբի կենսագործունեության ուղղության մշակումը և կազմակերպում այլն: Էթնիկ համայնքներում ինքնության ձևավորման և կառուցակցման բովանդակության կարևոր գործոններից են համայնքային կազմակերպությունները:

Որպես համայնքային կյանքի վրա ազդեցություն ունեցող ինստիտուտներ՝ համայնքային կառույցները հաճախ դառնում են միջմշակութային սահմանագիծ և որոշում նաև էթնիկ ինքնության ազդեցության սահմանները:

Էթնիկ սահմանները, որոնք ըստ նորվեգացի ազգաբան Ֆ. Բարտի հնարավորություն են ընձեռում կարգավորել հասարակական կյանքը, նպաստում են մարդկանց վարքի տարբերակմանը՝ նրանց կողմից վերարտադրվող երևույթների միջոցով, որոնք դրսևորվում են այս կամ այն խմբի անդամների կողմից:³³ Էթնիկ սահմաններն ունեն նաև էթնոպահպան գործառույթ: Անհատի կամ հասարակության անցումային փուլերում, երբ թուլանում կամ փոխակերպվում են սոցիալական կառույցները, էթնոպահպան գործառույթը էլ ավելի է կարևորվում: Հասարակության սոցիալ-մշակութային զարգացման ճգնաժամային, անկայուն իրավիճակում ինքնության նշանակությունը կտրուկ աճում է՝ կատարելով անհատների սոցիալ-հոգեբանական աջակցության դեր:

2.1 Սոցիալական ցանցի գործառույթները էթնիկ խմբում

Այսպես, սոցիալական ցանցը համայնքում իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք ուղղված են համակարգելու և կարգավորելու նոր միջավայրում հայտնված անձանց կամ խմբերի վարքը: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել խմբերի՝ համայնքի ձևավորման, կայացման փուլերին համապատասխան:

Համայնքի ձևավորման նախնական փուլում ցանցն իրականացնում է առավելապես համախմբման և ռեսուրսի կուտակման ու

³³ Сумбуева 2011, 77–81.

վերաբաշխման գործառույթներ: Դա իրականանում է նախ և առաջ համայնքում վստահության մթնոլորտի ձևավորման, և դրա անդամներին երաշխիքների տրամադրման միջոցով:

Հիմնվելով կառուցվածքային-ֆունկցիոնալ տեսության վրա, կարող ենք առանձնացնել սոցիալական ցանցի հետևյալ գործառույթները՝ հարմարման, լատենտության, համարկման (ինտեգրացիոն), ինքնակազմակերպման և այլն:

Սոցիալական ցանցի հարմարվողականությունը ենթադրում է, որ այն ընդունակ է փոփոխվել շրջապատող միջավայրի նոր փոփոխություններին համապատասխան կամ փոփոխել պայմաններն իրեն համապատասխան:

Ցանցի լատենտության տակ նկատի է առնվում նրանում առկա յուրատեսակ «գերկառուցվածք», որը կարգավորում է ցանցի անդամների գործողությունները ներսում և ցանցից դուրս. դրանք մշակութային նմուշները և նորմատիվ համակարգն են, որոնք պայմանավորում են ցանցի ձևավորումը սկզբնական փուլում և դրա գործառնությունը հետագայում:

Ինտեգրացիոն կամ համարկման գործառույթը ցանցի նպատակների, այդ նպատակների իրականացման համար հարմարման միջոցների և ցանցի գործառնության հիմքում ընկած արժեքանորմատիվ համակարգի ամբողջությունն է:

Այսպես, Մ. Ցեդերբերգն իր ուսումնասիրության մեջ (որն իրականացվել է Պ. Բուրդիեյի տեսության հիման վրա), նշում է, որ հասարակության մեջ օտարների նկատմամբ գոյություն ունեցող բացառման նորմերը մի կողմից առաջացնում են միգրանտների սոցիալական ցանցի պաշտպանական մեխանիզմներ: Մյուս կողմից ցանցի անդամների կենսական անհրաժեշտության ռեսուրսների ձեռքբերման ձգտումը սահմանափակում է սոցիալական առաջընթացի ուղին և տվյալ միջավայրի ու նրանց սոցիալական ցանցի հետ հաղորդակցման ուղին: Սովորաբար սեփական ռեսուրսները միգրանտին չեն բավականացնում հաջող համարկման համար: Նմանատիպ հետազոտությունները կիրառելի են նաև սփյուռքի հետազոտությունների համար,

քանի որ այնտեղ գործում են միևնույն մեխանիզմները: Այս պարագայում ևս տեղի ունի օտարի և յուրայինի տարբերակման սխեման, որը բնութագրվում է առավելապես մշակութային տարրերի տարբերությամբ, սակայն կարող է պայմանավորված չլինել էթնիկ պատկանելիությամբ:

Ինքնակազմակերպման գործառույթը ենթադրում է ցանցի անդամների ռացիոնալ վերաբաշխում՝ արտաքին միջավայրի փոփոխություններին համապատասխան:

Ելնելով դիտարկված գործառույթներից, կարելի է պնդել, որ ցանցը նպաստում է ոչ միայն տվյալ էթնոսի ներկայացուցիչների տարածական տեղաշարժին, այլև նրանց կողմից որոշակի միկրոմիջավայրի վերարտադրմանը: Այս երևույթը կարելի է համեմատել վակուումի երևույթի հետ, երբ սոցիալական հարաբերությունները միկրոմիջավայրում գործառնում են նոր կանոններով, չեն ենթարկվում արտաքին ազդեցությանը և վերարտադրվում են ներքին ռեսուրսների հաշվին:

Սոցիալական երևույթների դրսևորումը օգնում է առավել նկատելի և նյութական դարձնել էթնիկ սահմանները, դրանով իսկ ընդգծել տարբերությունը տվյալ խմբի և մնացած հասարակության միջև: Դրանք կարող են զարգանալ՝ ընդհուպ հասնելով մինչև սիմվոլիզմի: Պայմանականորեն այդ սահմանները «տարբերության տարածություններ»³⁴ անվանելով, կարելի է հասկանալ դրա բնույթը և հիմնական գործառույթները էթնիկ խմբի համար: Տարբերության տարածությունները ներգաղթող խմբերի կողմից ստեղծվող և նրանց սերունդների կողմից վերարտադրվող ինստիտուցիոնալ և խոսույթային (դիսկուրսիվ) միջավայրեր են, որոնք պահպանում և շարունական են դարձում որևէ երևույթ, որ համարվում է, որ պատկանում է միայն այդ համայնքին, խմբավորմանը, ինչը միևնույն ժամանակ համարվում է, որ չի պատկանում տեղական բնակչությանն առհասարակ (անկախ այն բանից, թե այդպիսի պատկերացումները ճիշտ են, թե սխալ): Տարբերության տարածությունների ձևավորումն ու գործառնությունն ավելի հանգամանորեն պատկերացնելու համար դիտարկենք դրանց վրա

³⁴ Sahakian 2018, 247–267.

ազդող գործոնները: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել չորս մակարդակի՝ ըստ ունեցած ազդեցության.

- Տեղական մակարդակի գործոններ, որը ներառում է նոր միջավայրում հաստատված ներգաղթյալների նկատմամբ մերձ շրջապատի վերաբերմունքը, նրանց կողմից ստեղծվող մշակութային նմուշները
- Պետական մակարդակի գործոններ, որն է ընդունող երկրների քաղաքականությունը, վերաբերմունքը ներգաղթյալների նկատմամբ
- Անդրտեղային, անդրազգային մակարդակի գործոններ, որոնք ներառում են ներգաղթողյալների անձնական ու կազմակերպական անդրտեղային/անդրազգային կապերը, հարաբերությունները հայրենիքի հետ
- Աշխարհաքաղաքական մակարդակի գործոններ, որոնք են համաշխարհային քաղաքականությունը, միտումները, ճգնաժամերը

Ըստ էության, տարբերության սահմանները գծվում են երկու կողմից՝ ոչ միայն հիմնվելով, այլև ընդգծելով, երբեմն նույնիսկ հակադրվելով մեկը մյուսի սոցիալական կյանքի դրսևորումներին: Վերջինս ներառում է սոցիալական կյանքի մի շարք կողմեր (լեզու, կրոն, մշակույթ՝ լայն և նեղ իմաստներով, քաղաքականություն, քաղաքացիական կյանք և այլն), որոնց պարագայում ևս սահմանները կարող են տարբեր տեղերում գտնվել և ունենալ զարգացվածության տարբեր աստիճաններ: Այլ կարևոր հարց է, թե երբ և ինչ չափով են տարբերության սահմանները առնչվում տարածական սահմանների հետ, և արդյոք առնչվում են, թե ոչ:

Այսպես, նոր միջավայրում էթնիկ խմբի համար նշանակալի դեր ունեն տարածքի և տիրույթի հասկացությունները: Դրանք ավելի բարդ բնույթ ունեն, քան էթնիկ սահմանները, վակուումի երևույթը, քանի որ էթնիկությունից բացի ներառում տարածվում են սոցիալական կյանքի մի շարք այլ կողմերի վրա ևս:

Ելնելով հետազոտական փորձից, կարելի է դուրս բերել մի քանի գործոն, որոնք կարգավորում են տարածական և տիրույթային սահմանների փոխազդեցությունը: Առաջին հերթին կարելի է ընդգծել խմբի միատարրության գործոնը. որքան միատարր/համասեռ է խումբը, այնքան հեշտ և արագ է սահմանում իր դիրքը՝ գծելով ընդհանրական սահման իր շուրջ: Բանն այն է, որ համասեռության պակասը հանգեցնում է խմբի յուրաքանչյուր անդամի դիրքորոշմանը նոր միջավայրում, ինչը ենթադրում է առանձին վերաբերմունք արտաքին միջավայրին և համապատասխան վերաբերմունք նրանց կողմից: Արդյունքում յուրաքանչյուր միավոր անդամի շուրջ ձևավորվում են միկրոսահմաններ, ինչը բարդացնում և նույնիսկ խոչընդոտում է խմբի ինքնակազմակերպմանը որպես համայնք: Հաջորդ կարևոր պայմանը արտաքին գործոններն են, որոնց թվին պատկանում են հարկադիր տարածքային առանձնացումը, հատուկ ինստիտուցիոնալ մոտեցումը և այլն: Այդ գործոնները մեխանիկորեն ամրագրում են հատուկ վերաբերմունք տվյալ խմբին և դնում սահմաններ:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե այդ սահմաններն ինչպես են կարգավորում տարածական և տիրույթային փոխառնչությունը: Դրանք ունեն բավականին հակասական բնույթ. դրանք կարող են գրեթե ամբողջությամբ համընկնել, և կարող են ունենալ ընդամենը մի քանի հատման կետեր, դրանք կարող են միաժամանակ միմյանց բացառող և ձևավորող բնույթ ունենալ:

Այնուամենայնիվ, այդ սահմանները գոյություն ունեն այնքան ժամանակ, քանի դեռ կատարում են իրենց գործառույթները: Գործառույթներից կարելի է առանձնացնել ամենակարևորները. խմբի անդամների պաշտպանության, ունեցած ռեսուրսների, կապիտալի պահպանություն, սոցիալական նոր միկրոմիջավայրի ձևավորում, սոցիալական հարաբերությունների կարգավորում, խմբի գործունեության կարգավորում:

2.2 Ցանցային հարաբերությունների էթնիկ առանձնահատկությունները սփյուռքում

Վերջին տասնամյակներում բնակչության աճող միգրացիոն հոսքերը տարբեր երկրներում առաջացնում են մի շարք խնդիրներ ոչ միայն ընդունող կամ ելքի երկրների համար, այլև իրենց՝ միգրանտների հետագա հարմարման, ինտեգրման հարցերում:³⁵ Այս միտումները հաստատում են էթնիկ ինքնության, էթնիկ խմբերի ինքնակազմակերպման մեխանիզմների ուսումնասիրության պահանջը բոլոր երկրներում, և արդիականությունը որպես գիտական և կիրառական նշանակության հիմնախնդիր: Անդրսահմանային միգրացիայի արագ աճը, որի հետևանքով ձևավորվում են էթնիկ համայնքներ և դրանց հետագա ինստիտուցիոնալացումը, թույլ է տալիս անդրադառնալ «աշխարհասփյուռության» հարցին՝ որպես առաջատար սոցիալական միտումներից մեկը: Միգրանտների ներհոսքի շնորհիվ «նոր» էթնիկ խմբեր են հայտնվում, որոնք ձևավորում են սոցիալ-մշակութային նոր տիրույթ «հին» խմբերի կողքին: Այս խմբերում ձևավորման պահից սկսած տեղի են ունենում սոցիալական իրականության ընկալման փոփոխություններ, որոնք հանգեցնում են որակապես նոր երևույթի՝ «խմբայնացման»³⁶ ձևավորմանը: Այս գործընթացում էթնիկ խմբերը դիտարկվում են որպես որոշակի ամբողջականություն, որոնք ունեն ներքին կառուվածք, հստակ սոցիալական սահմաններ, և իրականացնում են ուղղորդված սոցիալական գործողություններ: Սրանք ինքնին ապահովում են ցանցայնացման համար անհրաժեշտ ներքին պայմանները, որոնք ձևայնացմանը զուգընթաց աստիճանաբար ձեռք են բերում սոցիալական ցանցի հատկանիշներ: Խմբում առկա վստահության պարագայում կարճ ժամանակում հնարավոր է իրականացնել ներուժի կուտակում և վերաբաշխում, ինչը խմբի հետագա կենսունակությունն ապահովող շրջապտույտ կարելի է անվանել: Հետագայում որոշակի երաշխիքների տրամադրման պայմաններում հնարավոր

³⁵ Ներսիսյան 2017, 197:

³⁶ Brubaker 2002, 163–189.

է դանում նաև իրականացնել ազդեցության ապակենտրոնացում, ինչն արդեն ձևավորված սոցիալական ցանցի զարգացման հաջորդ մակարդակն է:

Սակայն ի սկզբանե սփյուռքում սոցիալական ցանցի գործառնությունը և առանձնահատկությունները հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ այնպիսի հարցերի, թե ինչպես են ձևավորվում համայնքները սփյուռքում, ինչ գործոնների ազդեցությամբ, և ինչ նկատի ունենք սփյուռք և համայնք ասելով:

Փոփոխվող պայմաններում ազգային մշակույթի արժեքը, ազգային ինքնագիտակցության նշանակությունը դրդում են խմբի անդամներին համախմբման տարատեսակ ձևերին:³⁷ Ներքին համախմբման մակարդակը նոր միջավայրում էթնիկ խմբի ինքնակազմակերպման ընթացքում կարող է փոփոխվել և կախված է մի շարք գործոններից: Դրանց թվում են բնակչության թվաքանակը, բնակության տեսակը (հոծ կամ ցրիվ) և օտարերկրյա էթնիկ միջավայրի բնույթը:

Այսպես, ենթադրվում է, որ գոյություն ունի էթնիկ խմբի որոշակի կրիտիկական քանակություն, որն անհրաժեշտ է դրա անդամներին անհրաժեշտ սոցիալական աջակցությամբ ապահովելու համար: Այդ քանակությունը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես մշակութային դիստանցիայի գործոնից, որը էթնիկ մշակույթների միջև տարբերությունների օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն ընկալվող հեռավորությունն է: Այստեղ կարևոր է ընդգծել, որ խմբի քանակությունը և մշակութային դիստանցիան հակադարձ համեմատական են: Որքան քանակապես մեծ է էթնիկ խումբը, այնքան ավելի փոքր է մշակութային դիստանցիան:

Ելնելով վերոնշյալից կարելի է քննարկել էթնիկ խմբերի համախմբումն ինքնակազմակերպման համատեքստում: Այս և մի շարք այլ տեսությունների շրջանակներում կարելի է դիտարկել հայկական համայնքներն այլ երկրներում՝ որպես օտար միջավայրում էթնիկ խմբի համախմբման օրինակ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ էթնիկ խմբի

³⁷ Тощенко, Чаптыкова 1995, 33–42.

համախմբան արդյունքում կարող են ձևավորվել որոշակի համայնական խմբեր որոշակի ընդհանրացնող հատկանիշներով, սակայն ոչ բոլոր դեպքերում է էթնիկ համախմբումը բերում համայնքի ձևավորման: Այստեղ կարևոր է ընդգծել, որ համայնքի գաղափարը բավականին բազմազան և համակցված երևույթ է: Այն արծարծում է ինքնության և պատկանելիության, այլ հանրայինների հետ ընդհանրությունների և տարբերությունների, տվյալ սոցիալական միջավայր ներառման և արտանդման հարցեր: Ինչպես նաև համայնքն ինքնին դառնում է հիմնական ուղղություն հանդիսացող գործընթացների մասնակիցը:³⁸

Համայնքի գաղափարի գործառնությամբ մոտեցումները բաժանվում են մի քանի հիմնական ուղղությունների: Այն մեկնաբանելիս անհրաժեշտ է նախ և առաջ ընդգծել եզրույթի համայնական բնույթը. «ընդհանուր պահանջները և նպատակները, ընդհանուր կենցաղը, կենսագործունեության, աշխարհայացքների, մշակույթի և կոլեկտիվ գործողության ընդհանրության զգացումը»³⁹ արտահայտում են նրա մեկնաբանությունը: Այլ տեսանկյունից կարևոր է առանձնացնել հասկացության հարաբերությամբ կողմը՝ «փոխկապված սոցիալական ցանցի միջոցով. հարևանություն-բարեկամություն և բարեկամություն»:⁴⁰

Բնութագրական հատկանիշների քննարկման տեսանկյունից համայնքի գաղափարի վերաբերյալ մոտեցումները կարելի է միավորել երեք հիմնական խմբում. Առաջինը՝ աշխարհագրական մոտ լինելու հանգամանքով ձևավորված համայնքներ, երկրորդը՝ համայնքներ, որպես տեղայնացված սոցիալական համակարգ, որը կամրջում է սոցիալական խմբերն ու ինստիտուտները, երրորդը՝ համոզմունքների ու փորձի վրա հիմնված կամ ընդհանուր ինքնության հիման վրա ձևավորված կոմունիկացիայի ձևեր կամ համայնքներ:⁴¹

³⁸ Bell, Newby 1971.

Cater, Jones 1989. Delanty 2003.

³⁹ Silk 1999, 6.

⁴⁰ Crow, Allen 1994, 1.

⁴¹ Pradeep, Sathyamurthi 2017, 58–64.

Այնուամենայնիվ, համայնքի հիմնարար բնութագրիչները քննարկելիս մասնագիտական դաշտում առկա է հստակ համաձայնություն «պատկանելիության» գաղափարի շուրջ:

Քննարկված մոտեցումները համայնքի գաղափարի շուրջ թույլ են տալիս եզրակացնել երևույթի բավականին բարդ բնույթի մասին, որի սահմանման համար կարելի է բերել եզրույթի բացատրության 4 մոտեցումներ: Առաջինն առաջ է քաշվում սոցիոլոգների և աշխարհագրագետների կողմից և վերաբերում է սոցիալական կազմակերպությունների սոցիալական և տարածական ձևավորման փոքր խմբերին, ինչպիսիք են թաղամասերը, փոքր քաղաքները կամ տարածքի այլ սահմանափակումները:

Երկրորդ մոտեցումը, որը մշակվել է մարդաբանության և մշակութային ուսումնասիրության ոլորտի ներկայացուցիչների կողմից, վերաբերում է ինքնության հարցի շուրջ պատկանելիության և տարբերություններ գաղափարներին:

Երրորդ դիրքորոշման տեսանկյունից համայնքը համարվում է քաղաքական մոբիլիզացիայի ձև, որը անհրաժեշտության դեպքում դրդում է համայնքներին հակազդել սոցիալական գործընթացներն, անարդարությանը և այլն:

Այս բոլորի ընհանրական տիպը հիմնված է համաշխարհային հասարակության զարգացման վրա՝ հիմնվելով այնպիսի գործընթացների վրա, ինչպիսիք են անդրազգային մոբիլությունը և սփյուռքների զարգացումը, տեխնոլոգիական զարգացումը և այլն: Համայնքի «կոսմոպոլիզացիան»⁴² հանգեցնում է հարևանության, համակեցության հարցերի ընդգծմանը:

Հենվելով համայնքի մեկնաբանման վերոնշյալ մոտեցումների վրա առաջ են գալիս համայնքի ապակենտրոնացման, ցանցայնացման առաջին գաղափարները: Որպես օրինակ, Դելանթեն պնդում է, որ «հաղորդակցական համայնքները» առաջացել են անհատականացման և համահարթեցման տեսությունների երկակի ազդեցությունից: Նրանք

⁴² Delanty 2003, 227.

կախված են հաղորդակցության հզորությունից, որի շնորհիվ ստեղծվում են սոցիալական շփումների նոր ձևեր: Դրանք կազմակերպվում են հասարակական հարաբերությունների խմբերի միջոցով՝ «նմանվելով ցանցի»⁴³։ այնպես, որ «համայնքն այսօր վերացական է և չունի միասնություն և իրենից ներկայացնում է սիմվոլիկ իրականություն: ⁴³Տեղանքակենտրոն համայնքների վերաբերյալ ավանդական մոտեցումները դուրս են գալիս աշխարհագրական ցուցիչներից և ներկայացնում նոր մարտահրավերներ: Համայնքի վերածնունդն այսօր անշուշտ կապված է պատկանելիության ճգնաժամի հետ: Համահարթեցված հաղորդակցությունները, աշխարհաքաղաքացիական քաղաքական նախագծերը և անդրազգային միավորները նոր հնարավորություններ են ընձեռել համայնքի գաղափարին: Սակայն համայնքների այս նոր տեսակները, որոնք իրականում առանձին անդամների կազմակերպած սոցիալական ցանցերն են վերամշակված կերպով, չեն կարող փոխարինել պատկանելության ձգտումները»: Այդ ժամանակներից ոմանց համար տարածքային համայնքների գաղափարը ավելի հաճախ դիտվում է որպես ժամանակակից հասարակական կյանքին բաղկացուցիչ: Միայն այն պատճառով, որ մարդիկ կարող են բնակվել նույն աշխարհագրական տարածքում, դա չի նշանակում, որ նրանք կապ ունեն այդ տարածքի կամ այլ մարդկանց հետ: Աշխարհագրական մոտիկությունը չի նշանակում սոցիալական համայնք: ⁴⁴

Անդրադառնալով սոցիալական ցանցի, հարաբերությունների ուսումնասիրության տարբեր մոտեցումներին՝ «համայնքի» փոփոխվող բնույթի մեկնաբանման վերաբերյալ բանավեճերի համատեքստում, առանձնացնենք երեք մոտեցում. դասական՝ «համայնքը, որպես տեղանք» մոտեցում, երբ շփումներն ընկալվում են կոնկրետ աշխարհագրական դիրքի հետ կապված, երկրորդ մոտեցումը՝ «Սոցիալական ցանցային վերլուծություն», որը հաշվի է առնում անհատների շփումների «ցանցային» բնույթը, և երրորդ՝ այն մոտեցումն է, որ անհատներ

⁴³ Delanty 2003, 118.

⁴⁴ Delanty 2003, 195.

րը կապվում են «փոքր աշխարհների» միջոցով, որի միջոցով փորձում են հասկանալ տարբեր ցանցերի կապակցված բնույթը⁴⁵:

Այս մրցակցող մոտեցումներն ամփոփում են «համայնքի» և սոցիալական ցանցի միջև կապը. հատկապես հետաքրքիր են, թե ինչպես է սոցիալական, տարածական և տեխնոլոգիական փոփոխությունները փոխել սոցիալական հարաբերությունները: Դրանք քննարկվում են այնպիսի գաղափարների միջոցով, ինչպիսիք են «ցանցային հասարակությունը», որ ըստ մի շարք հետազոտողների, որ մեծ ազդեցություն են ունեցել սոցիալական ցանցի և համայնքի մեր հասկացության վրա:⁴⁶ Ներկայումս մենք ականատես ենք, թե ինչպես է ակնթարթային հաղորդակցման տեխնոլոգիաների աճը (ինչպիսիք են համացանցը կամ բջջային հեռախոսները) նպաստել «տարածության կորստի» և հնարավորություն են տվել անհատներին հաղթահարել ժամանակի խնդիրը, երբ կապ են հաստատում ուրիշների հետ:⁴⁷ Սա չի նշանակում, իհարկե, որ չմիջնորդավորված կամ դեմ առ դեմ շփման անհրաժեշտությունն այժմ ավելորդ է:

Ընդհակառակը, մի շարք հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ աճել է հեռավորության վրա կոնտակտների հաստատման հաճախականությունը, և դա մեխանիկորեն ձևավորում է ավելի ցրված և ճկուն սոցիալական կապեր:⁴⁸

«Տղաս Կալիֆոռնիայում է ապրում, աղջիկս՝ Կանադա: Նախկինում ամիսը մեկ անգամ եթե կարողանայինք հեռախոսով խոսել, մտածում էինք լավ է, գոնե ինչ-որ տեղեկություն ունեցանք: Հեռավորությունը մեծ է, գումարն էլ, ինչու չէ, նշանակություն ուներ: Իսկ հիմա ինչքան էլ իրանական իշխանությունները արգելեն ինտերնետը, միևնույնն է, էլի ստացվում է, որ ամեն օր կապ ունենք երեխեքիս, թոռներիս հետ: Ճիշտ է մոտ ապրելուց ավելի ճիշտ բան չկա, ինչքան

⁴⁵ Larsen, Williams, Kremen 2005, 538–547.

⁴⁶ Wittel 2001, 51–76.

⁴⁷ Cairncross 2001, 189–212.

⁴⁸ Urry 2002, 79–66.

էլ խոսենք, մեկա էկրանից էն կողմ ենք, բայց գոնե խոսում ենք, տեսնում ենք, իրանց առօրեայի մասնակիցն ենք»:⁴⁹

Ժամանակակից ցանցային մոտեցումները զարգացել են տարբեր ուղղություններով, և որոշ դեպքերում գրեթե ուտոպիական գաղափարներ են ներկայացվում ցանցային անհատականացման վերաբերյալ, թե ինչպես են նոր ճանապարհորդական և հաղորդակցման տեխնոլոգիաները հնարավորություն տալու անհատներին «ընտրել» կամ ստեղծել ավելի լավ ցանցեր, և, հետևաբար, ավելի լավ սոցիալական կյանք: Սակայն էմպիրիկ հետազոտությունները փաստում են, որ մարդիկ պատրաստ չեն սոցիալական ցանցի գործառնության մեկնաբանությունները տանել նմանօրինակ զարգացումների ուղղությամբ և շատերի համար բացառված է սոցիալական ցանցում նման ներգրավվածություն ապահովելը: Բացի այդ, ենթադրյալ «հեռավորության կորուստը» և ցանցային անհատականացման տարածական ազատությունը չի վերացնում սոցիալական ցանցի տարածական և ժամանակային համատեքստերի կարևորությունը, ընդհակառակը, այն ավելի է ընդգծվում:

Իսուելով համայնքի մասին հետազոտական մակարդակում, անհարժեշտություն է առաջանում տարանջատել սփյուռքյան համայնքը որպես ուսումնասիրության առանձին օբյեկտ: Միևնույն խնդիրն առաջանում է տեսական հարթության վրա ևս. չնայած նրան, որ համայնքն իր կառուցվածքով, գործառնության մեխանիզմներով լիարժեքորեն կարող է դիտարկվել որպես ինքնուրույն միավոր և ուսումնասիրության առանձնահատուկ օբյեկտ, այստեղ կարևոր է համայնքը դիտարկել գուտ որպես սփյուռքի բաղկացուցիչ մաս:

Անդրադառնալով այս հարցին անհրաժեշտ է այս աշխատանքի շրջանակներում հստակեցնել համայնք և սփյուռք հասկացությունների փոխառնչությանը:

Սփյուռքագիտական գրականության մեջ կարելի է գտնել սփյուռքի սահմանման մի շարք մոտեցումներ: Առաջին մոտեցումը ենթադրում

⁴⁹ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույց N5, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

է սփյուռք հասկացության օգտագործում մատնանշելու համար ֆիզիկապես գոյություն ունեցող հայրենիքը և ընդգծելու մշտական ձգտումը դեպի այն:⁵⁰ Երկրորդ մոտեցմամբ սփյուռքը պետք է ընկալել որպես գիտակցության և ինքնության հատուկ ձև: Այս մոտեցումը ներկայացվում է սոցիալ մշակութային իրականության տեսանկյունից:⁵¹ Երրորդ մոտեցումն անդրադառնում է սփյուռքին ներկայացվող պահանջներին, համաձայն որի սփյուռքը պետք է լինի առավել բարոյական հանրույթ և կիսի տվյալ հասարակության պատասխանատվությունը, քանի որ ունի համապատասխան կազմակերպչական և ինստիտուցիոնալ ռեսուրսները:⁵²

Իհարկե, սփյուռք հասկացության ըմբռնման համար միայն տեսական ուղղությունների դիտարկումը բավարար չէ. Անհրաժեշտ է հաշվի առնել նաև «սփյուռք»-ի քննարկումը միջգիտակարգային տիրույթներում, որ ձևավորվել է սփյուռքների առանձին դեպքերի և համեմատական բազմազան ուսումնասիրությունների հիման վրա:

Այս առումով դիտարկվում է Սահակյանի⁵³ կողմից առաջարկած սփյուռքի մոտեցումների ընդհանրական խմբավորումը, որտեղ սփյուռքը դիտարկվում է որպես.

- ցրված էթնիկ հավաքականությունների ամբողջություն, որում շեշտադրվում է էթնոմշակութային շարունակականությունը, էթնոխմբային գիտակցությունը, կողմնորոշվածությունը դեպի հայրենիք, սփյուռքի տեղակայվածությունը հայրենիքի և հյուրընկալող երկրների միջև,
- հիբրիդային, անդրէթնիկ երևույթ, միջմշակութային խառնածին ձևերի և ինքնությունների դրսևորման վայր, որում շեշտադրվում են սփյուռքային բնակչության խմբերի երկակի գիտակ-

⁵⁰ Cohen 1997, 240.

Safran 2011, 83–99.

⁵¹ Anthias 1998, 557–580.

⁵² Werbner 2002, 119–133.

Kleist 2007.

⁵³ Սահակյան 2022, 383–419:

ցությունը, բազմակի հավատարմությունները և բարդ հարաբերություններն ու փոխկապվածություններն իրենց բնակության երկրի այլ խմբերի և այլ երկրներում իրենց հետ ընդհանուր անցյալ ու պատմություն ունեցող բնակչության խմբերի հետ,

- գաղթական ու անդրգաղթական համայնքների ամբողջություն, որոնցում առավել շեշտադրվում է անդրգաղթականների միջև ձևավորվող միջպետական և անդրազգային ցանցերը, պետության քաղաքականությունն իր ցրված, հայրենաթող քաղաքացիների նկատմամբ, ինչպես նաև արտագաղթյալ բնակչության խմբերի դրամական փոխանցումները և ներդրումները պետության տնտեսական զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման և բարեգործական, մշակութային ու քաղաքական այլ ասպարեզներում:

Այս աշխատանքի շրջանակներում սփյուռքը դիտարկվում է որպես բազմաշերտ երևույթ և սահմանվում հետևյալ բնութագրիչների միջոցով.

1. խմբի անդամները կամ նրանց նախնիները ելքի «կենտրոնից» տեղափոխվել են մեկ կամ ավելի «ծայրամադային» արտասահմանյան կամ ռեգիոնալ բնակավայր:
2. նրանք պահպանել են կոլեկտիվ հիշողությունը, սկզբնական հայրենիքի, դրա աշխարհագրական տեղակայման, պատմության, ձեռքբերումների մասին պատկերացումը կամ միֆը:
3. նրանք վստահ են, որ «ընդունող» հասարակությունում չեն դարձել և հնարավոր է երբեք չեն դառնա յուրային, և այդ պատճառով իրենց որոշակիորեն օտարված ու մեկուսացած են զգում,
4. նրանք իրենց նախնիների հայրենիքը համարում են իրենց իրական ու իդեալական հայրենիքը, որտեղ իրենք կամ իրենց հետնորդներն ի վերջո կվերադառնան (պետք է վերադառնան), երբ պայմանները թույլ տան,

5. նրանք վստահ են, որ պետք է կոլեկտիվ կերպով պահպանեն իրենց սկզբնական հայրենիքի գոյությունը, անվտանգությունը, զարգացումը, կամ նպաստեն դրա վերականգնմանը:
6. նրանք շարունակում են իրենց վերագրել այդ հայրենիքին՝ անհատական կամ կոլեկտիվ նույնականացման միջոցով, և այդ հանգամանքը մեծապես պայմանավորում է նրանց էթնիկ գիտակցությունը և նույնականացումը,
7. նրանք ուզում են փոքրամասնություն մնալ՝ հաջորդ սերունդներին փոխանցելով նախապապերի հայրենիքի մշակութային (կրոնական) ժառանգությունը
8. հայրենիքի հետ մշակութային, կրոնական, և/կամ քաղաքական կապը որոշակիորեն արտահայտվում է իրենց հասարակական ինստիտուտներում:

Հաշվի առնելով սփյուռքի վերոնշյալ սահմանումը հետաքրքիր է քննարկել, թե ինչ կարևոր հանգամանքների պարագայում է առաջանում սփյուռքը և ձևակերպվում որպես այդպիսին:

Համադրելով մի շարք սփյուռքագիտական մոտեցումներ կարելի է դուրս բերել սփյուռքի ձևավորման համար անհրաժեշտ որոշ պայմաններ. ցրում երկու կամ ավելի վայրեր, ընդունող երկներում միջմշակութային և սեփական մշակութային տարածքների ձևավորում, սերունդների ընթացքում այդ տարածությունների պահպանում և վերարտադրություն (շարունակական փոփոխություն), այդ տարածություններում մշտապես գործող հաստատություններ, խմբեր, անհատներ, որոնց շնորհիվ այդ տարածությունները պահպանվում, վերարտադրվում ու փոփոխվում են, սեփական մշակութային տարածքների միջև (անդրտարածքային) ֆիզիկական, սոցիալական ու մշակութային փոխհարաբերություններ և շրջանառություն:

Ըստ Ռոբերտ Քոհենի ցանկացած սփյուռքի ձևավորման համար անհրաժեշտ է, որպեսզի ընդունող երկրում առկա լինեն դրա հնարավորությունները, հստակ ձևակերպված լինի տվյալ խմբի պատմությունն ու մշակույթը, լինեն խմբի առաջնորդներ, ովքեր կարող են ստեղծել

հաստատություններ և կազմակերպել խմբին ընդհանուր նպատակների շուրջ: Նա առանձնացնում է սփյուռքի հետևյալ տիպաբանումը.

1. Զոհ սփյուռքներ (հայկական, հրեական, աֆրիկյան և իռլանդական)
2. Աշխատանքային սփյուռքներ (հնդկական)
3. Կայսրական սփյուռքներ (բրիտանական, ռուսական)
4. Առևտրային սփյուռքներ (լիբանանյան, չինական, վենետիկյան)
5. Ապատարածքայնացված սփյուռքներ (Կարիբյան ժողովուրդներ, գնչուներ, մուսուլմաններ, այլ կրոնական սփյուռքներ)

Այսպես, սփյուռքի համայնքների քննարկումը սոցիալական ցանցի համատեքստում ավելի հիմնավոր ձևով կարելի է դիտարկել հենց հայկական սփյուռքի համայնքների օրինակով, քանի որ այն համարվում է դասական սփյուռքի օրինակ և առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սփյուռքի հետազոտություններում իր ձևավորման և զարգացման փորձով: Այն թույլ կտա համայնքի գաղափարի քննարկմանը զուգընթաց միաժամանակ առանձնացնել դրանում կարևոր դեր իրականացնող էթնիկ բաղադրիչը:

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ձևավորման ընթացքում հայկական սփյուռքը, որպես ավանդական, դասական սփյուռքի⁵⁴ օրինակ, ստեղծել է ինքնակազմակերպման առանձնահատուկ մեխանիզմներ: Այդ մեխանիզմների հիմքը սոցիալական ցանցն է, և առանձնահատկությունները պայմանավորված են հիմնականում սոցիալական ցանցի բնութագրական առանձնահատկություններով: Քննարկելով հայկական համայնքների ինքնակազմակերպման մեխանիզմների բնույթը անհրաժեշտ է ընդգծել հայերի ազգակցական-հարևանական կապերի ավանդույթը, որպես ցանցայնացման կարևորագույն նախադրյալ:

Այստեղ հարկ է նշել, որ այն հասարակությունները, որտեղ հարաբերություններն անձնավորված են, և գերակշռում են ինստիտուցիոնալացված կապերը՝ հարաբերություններ հաստատելիս առաջնային դեր է տրվում անհատի ձեռքբերովի հատկանիշներին, ինչպիսիք են մասնագիտական հմտությունները, սոցիալական կարգավիճակը, եկամտի չափը և այլն: Իսկ այն հասարակությունները, որոնք ավելի ավանդական են, հանրայինները կառուցվում են առավելապես անհատի շուրջը հարաբերություններ հաստատելիս առաջնայնությունը տալիս են ավանդական բնութագրիչներին, ինչպիսիք են անհատի ժառանգած կամ փոփոխության չենթարկվող հատկանիշները: Համապատասխանաբար, համայնքում առանձին վերցրած անձանց միջև եղած հարաբերությունների դասակարգումը՝ առաջնայինի, երկրորդայինի,

⁵⁴ Tölölyan, Papazian, 83–101.

երրորդայինի (ընկեր, ազգական, հարևան և այլն) և այլն, կատարվում է համաձայն ունեցած անձնային կապի որակի:

Կարևոր է անդրադառնալ հայկական սփյուռքում սոցիալական ցանցի առանձնահատկությունները պայմանավորող բնութագրիչներին, որի արդյունքում հնարավոր կլինի դուրս բերել հայկական համայնքներում սոցիալական ցանցի գործառնության պատկերն ամբողջությամբ:

Հայկական հասարակության մեջ ցանցային հարաբերությունների կառուցման և գործառնության դեպքում որոշիչ դեր ունեն ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը: Այս առումով շատ կարևոր է ուսումնասիրել, թե այլ միջավայրերում հայերն ինչպես են հարաբերություններ հաստատում և զարգացնում, արդյոք պահպանվում են նշյալ առանձնահատկությունները, և արտաքին միջավայրի ազդեցությամբ դրանք ինչ փոփոխությունների են ենթարկվում:

Բացի սեռից, տարիքից և այլն, սոցիալական ցանցի գործառնության բնորոշման համար կարևոր բնութագրիչներ են համայնքային կյանքում ներառվածությունը, համայնքային կառույցներում ներգրավվածությունը, այնտեղ ունեցած կարգավիճակը, ձեռքբերումները: Այս բնութագրիչները ցույց են տալիս համայնքի անդամների մասնակցությունը համայնքային գործունեությանը, ինչպես նաև դրա դերի ընկալումը հանրության մեջ: Մյուս կողմից այս ցուցիչի շնորհիվ հնարավոր է դառնում որոշակի գնահատական տալ համայնքի անդամների սոցիալական ակտիվությանը ու դրա վեկտորներին:⁵⁵

Այս երևույթը կարելի է համեմատել «ներկառուցվածության» հետ, երբ ոչ ֆորմալ հարաբերությունները ներկառուցվում են սոցիալական կառուցվածքին, կազմակերպությանը, և ներսից փոխում դրանց բնույթը՝ ենթարկելով գլոբալ փոփոխությունների:⁵⁶ Սակայն մեր պարագայում ներկառուցումն ընթանում է այլ սկզբունքով, և ֆորմալ կապերը

⁵⁵ Barnes 1969.
Wasserman, Faust 1994.

⁵⁶ Granovetter 1985, 481–510.

ոչ թե զիջում են իրենց տեղը ոչ ֆորմալին, այլ սերտաճում են միմյանց: Վերջինս տեղի է ունենում պաշտոնական ինստիտուցիոնալ սահմանների հարաբերական բացակայության հետևանքով, իսկ արդյունքում կազմակերպական կառուցվածքն ավելի է ամրապնդվում՝ ձեռք բերելով մարտահրավերներին դիմակայելու ունիվերսալ ռեսուրսներ:

Հետաքրքիր է քննարկել, թե ինչպես է տեղի ունենում ներգրավման գործընթացը, ինչպես են չեզոք դիրքորոշում ունեցող անձիք ուղղորդվում դեպի համայնավարական վարքի դրսևորում, և ընդհանրապես ում կարելի է համարել համայնքի անդամ: Հասկանալի է, որ սա բավականին բազմակողմանի երևույթ է և մեկ հստակ բացատրություն այս հարցի շուրջ լինել չի կարող: Սակայն գոյություն ունի գործոնների համախումբ, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է քննարկել առանձին:

Վերոնշյալ հիմնախնդիրների հետ կապված հետազոտողներն առանձնացնում են մի քանի մոտեցում. դրանցից մեկը վերաբերում է անձի դիրքորոշման խնդրին և բխում է ինքնության պատկանելիության կամ պատկանելիության բազմազանեցման պահանջից: Այսինքն, երբ անձը պահանջ ունի պատկանել որևէ խմբի և ինքն իրեն դասում է տվյալ սոցիալական խմբին:

Մյուս մոտեցումը վերաբերում է այն խնդրին, թե ինչպես որոշել համայնքի չափը: Այս մոտեցումը հիմնվում է քանակական հաշվարկի վրա՝ կախված նրանից, թե որքան ներկայացուցիչներ ունեն կազմակերպությունները, որքան անդամ կամ կազմակերպիչ, դրանց հանրագումարը կազմում է համայնքը: Երրորդ մոտեցումը հիմնվում է բավականին լողացող, բայց որոշակի ցուցիչների վրա՝ լեզու, կրոն, մասնակցությունը կամ հարումը որոշակի կուսակցությունների, շարժումների, որոշակի շրջանակների շահերի պաշտպանություն և այլն:

Ըստ էության այս բոլոր մոտեցումները շատ խոցելի են, քանի որ դրանցից որևէ մեկը չի պատասխանում այն հարցին, թե արդյոք տվյալ անձիք իրականում կրում են համայնքի ներկայացուցիչներին վերագրվող էական բնութագրիչներ, արժեքներ:⁵⁷ Սա մեծապես կախված է

⁵⁷ Тощенко 1999, 123–133.

նաև տվյալ համայնքի և ընդհանուր առմամբ սփյուռքի ձևավորման առանձնահատկությունից:

3.1 Հայկական համայնքների ցանցային ինքնակազմակերպման գործընթացը

Հայկական սփյուռքը ձևավորվել է մի քանի խոշոր հոսքերի արդյունքում և տարածվել ամբողջ աշխարհում: Չնայած տարածվածության աստիճանի այն շարունակել է կապ պահպանել հայրենիքի հետ և տարբեր երկրներում դտնվող համայնքների միջև: Ժամանակի ընթացքում սփյուռքում առանձնացել են «կենտրոնական» համայնքեր, որոնք իրականացրել են հիմնական տեղեկատվական, մշակութային աղբյուրի դեր ողջ սփյուռքահայության համար: Դրանք հիմնականում այն հայահոծ քաղաքներն են, որտեղ ձևավորված համայնքն ունի այլազգ միջավայրում գոյատևելու և զարգանալու մեխանիզմներ: Դրանք մի կողմից կատարում են տվյալ երկրում հայերի համախմբման, ինքնության պահպանման, հարմարման, մյուս կողմից Հայաստանի հետ կապի գործառույթ: Ասվածի վառ օրինակ կարելի է համարել Լոս Անջելեսի հայկական համայնքը, որտեղ համախմբված են և տարբեր սերունդների, և տարբեր երկրների, և տարբեր պատճառներով ներգաղթած հայեր: Վերջինս յուրահատուկ միջավայր է ստեղծում բոլորովին նոր որակի համայնք ձևավորելու համար, ինչն ի դեպ անընդհատ շարունակվող գործընթաց է: Այս քաղաքի բազմաթիվ մշակութային, կրթական, քաղաքական, հայրենակցական ու կրոնական կենտրոններով հայ համայնքն ընդհանուր առմամբ ցրիվ է, սակայն այդ ընդհանուր պատկերի մեջ կան որոշ դիսկրետ խմբեր (Գլենդեյլ, Հոլիվուդ, Ֆրեզնո և այլն), որոնք գտնվում են բավականին բազմազան էթնոմշակութային միջավայրում:⁵⁸ Հենց համախմբվածությունն էլ թույլ է տալիս խոսել ինքնության պահպանման և ինքնակազմակերպման գործոններից:

Հայկական սփյուռքի համախմբվածությունը և հայ ինքնության պահպանումը հիմնված են ընդհանուր լեզվի և կրոնի, որոշակի տա-

⁵⁸ Տանաջյան 2014, 63–92:

րածքում ազգային անկախության կոլեկտիվ հիշողության, ընդհանուր ազգային տրավմաների, ինչպես նաև պահանջների առկայության վրա:⁵⁹

Լեզվի պահպանությունը կազմում է ինքնության կարևոր բաղադրիչներից մեկը, սակայն, միաժամանակ, կարևորվում է տվյալ երկրի լեզվի և մշակույթի ճանաչումը: Վերջինս կարելի է համարել հայկական սփյուռքի առանձնահատկություններից, քանի որ նրանք չեն ընթացել գետտոյացման պայմաններում:

Եկեղեցին սփյուռքում ինքնության պահպանման հաջորդ կարևոր բաղադրիչն է, որը կցված է հայ էթնիկության գաղափարին: Ունենալով երկու գլխավոր եկեղեցական կենտրոններ, այնուամենայնիվ, եկեղեցու դերը և գործառույթները սփյուռքում համաձայնեցված են: Եկեղեցին ակտիվորեն մասնակցում է նաև մշակութային և սոցիալական հարցերին:

Կարևոր է դիտարկել նաև օտարի և յուրայինի գաղափարը որպես հայկական սփյուռքում ինքնության բաղադրիչ տարր: Այստեղ պարզորոշ ընդգծվում է սփյուռքյան համայնքների և տվյալ երկրի հասարակության հետ միջմշակութային սահմանների դերը: Վերջիններս հիմնվում են հենց օտարի և յուրայինի տարանջատման սկզբունքի վրա: Կախված հանգամանքներից այս տարբերությունը կարող է սրվել՝ սահմանափակելով համայնքի ներկայացուցիչների սոցիալական ներառման հնարավորությունները, և, ընդհակառակը՝ կարող է դիտվել որպես յուրատեսակ կամուրջ, երկու մշակույթների ընդհանուր հարթակ:

Համայնական առօրյա կյանքում այս գաղափարը դրսևորվում է գրեթե բոլոր ոլորտներում, սակայն դրա արձանագրման հնարավորությունները քիչ են: Տվյալ պարագայում խառն ամուսնությունների թիվը դիտվում է որպես եզակի չափանիշ:

Ինքնության հաջորդ կարևոր բաղադրիչը պատմական հայրենիքի գաղափարն է: Պատմական հայրենիք ասելով ամենից հաճախ հեղի-

⁵⁹ Ներսիսյան, Տանայան 2018, 235:

նակները դիտարկում են այն երկիրը, որտեղից իրականացվել է ներգաղթը: Սակայն գիտական միջավայրում կան այլ մոտեցումներ ևս, որոնք հեռանում են պատմական հայրենիքի ուսցիոնալ նշանակությունից:

Այսպես օրինակ, սփյուռքի շատ հետազոտողներ վիճարկում են պատմական հայրենիքի, էթնիկության և գլոբալ սփյուռքի գաղափարները, դրանց հակադրելով մշակութային ինքնություն, տեղային համայնքային միջավայր և հուզական տարածք կատեգորիաներով:

Այս գաղափարը շարունակում է բրիտանացի հետազոտող Ստյուարտ Հոլլը, ով բազմիցս ընդգծել է, որ սփյուռքյան ինքնության որոշիչ գործոնները մշակութային հիշողությունն ու մշակութային փոխանցումն է (տրանսմիսիա): Այս մոտեցումը հաստատում է հուզականության ամրագրումը հայրենիքի ընկալման կատեգորիային:

Օտարերկրյա միջավայրում գոյատևելու և զարգանալու հաջորդ կարևոր գործոնը ինքնակազմակերպումն է: Նախ քննարկենք այս գործոնի մոտեցումներն ընդհանրապես, ապա նաև դիտարկենք այն հայկական սփյուռքի համայնքների օրինակով:

Սոցիալական գիտություններում ինքնակազմակերպման հիմնախնդիրն ունի բավականին հարուստ տեսական հենք: Ընդունելով հասարակության զարգացման օբյեկտիվությունը էվոլյուցիոնիստները որպես դինամիկ գործընթացների գլխավոր աղբյուր էին դիտարկում մարդուն, և հենց նրա մեջ էին տեսնում ինքնակազմակերպման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Էվոլյուցիոնիզմի դասականների գաղափարների զարգացնելով նեոէվոլյուցիոնիստները դուրս են բերում հասարակական գործընթացների ընկալման մի նոր մոտեցում, համաձայն որի դինամիկ գործընթացների գլխավոր աղբյուրը կոլեկտիվ հանրայններն են (համակարգերը), և հենց դրանք են հանգեցնում կայուն փոխհարաբերությունների միջոցով հասարակական համակարգի կարգավորման, և պայմաններ ստեղծում անհատների ինքնակազմակերպման համար: Հասարակության և սոցիալական համակարգերի ձևավորման այսպիսի ընկալումն ընդհանուր առմամբ նպաստում է ինքնակազմակերպման գործընթացի դիտարկմանը սո-

ցիալական իրականության երկու մակարդակներում. առաջինը անհատականությունների և երկրորդը սոցիալական հանրությունների մակարդակն է: Առաջին մակարդակում ինքնակազմակերպումը դիտարկվում է որպես առանձին անհատների կամ անհատների և կոնկրետ սոցիալական հանրությունների (խմբերի, կազմակերպությունների, հասարակության և այլն) միջև փոխազդեցություն: Ընդ որում անհատները չեն դիտարկվում որպես փոխհարաբերությունների պասիվ մասնակիցներ կամ սեփական հետաքրքրություններին միտված սուբյեկտներ, այլ որպես փոխհարաբերությունների հավասարազոր ակտիվ կողմ, ովքեր իրենց գործունեությամբ կողմնորոշված են դեպի սոցիալական կառույցները:

Երկրորդ մակարդակում՝ սոցիալական հանրությունների փոխհարաբերություններն են միմյանց միջև, որտեղ դրանք դիտարկվում են ոչ թե որպես կապերի ամբողջություն, այլ որպես իրական գործող կառույցներ, ինստիտուտներ: Նախնական փուլում ինքնակազմակերպման հիմնական գործոնը սեփական նպատակների և պահանջունւնքների բավարարման անհրաժեշտության կամ հնարավորության ըմբռնումն է, ինչն ունի առավելապես հոգեբանական հիմք: Սովորաբար, երբ անձը փոխհարաբերություններ է կառուցում այլ անձանց կամ հանրությունների հետ, ակնկալում է իր պահանջունքներին համապատասխան օգտակար արդյունք: Եվ ինքնակազմակերպման առաջին մակարդակն, ընդհանուր առմամբ, հնարավոր է այնքան ժամանակ, քանի դեռ փոխառնչվող կողմերը համարում են, որ ակնկալվող օգտակար արդյունքն ավելին է, քան իրենց ներդրումը փոխհարաբերությունների մեջ:

Այս մոտեցումը կարելի է սկզբունքորեն միակողմանի համարել, քանի որ հաշվի չի առնվում փոխհարաբերությունների բոլոր մասնակիցների համար պարտադիր չափորոշիչները: Այդ չափորոշիչները ձևավորվում են սոցիալական հանրությունների կողմից, որոնք սահմանում են փոխազդեցության մասնակիցների վարքը՝ ենթարկելով սոցիալականացման: Որպես այդպիսի չափորոշիչներ կարելի է նշել արժեքանորմատիվային համակարգը, ավանդույթները, սովորույթները և այլ

սոցիալական կարգավորիչներ: Սրանց շնորհիվ է, որ ստեղծվում են համախոհների խմբեր, ապա նաև սոցիալական կառույցներ, որոնք իրենց հերթին հիմք են դառնում ինքնակազմակերպման երկրորդ մակարդակի ձևավորման համար:

Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ անկախ երևույթի մեկնաբանման մոտեցումից, ինքնակազմակերպվելու ձգտումը ակնհայտորեն պայմանավորված է անձի ռացիոնալ որոշմամբ, որտեղ ընտրությունը կատարվում է անձնային հետաքրքրությունների և հանրային պատրքի գահատմամբ: Այս բոլոր սոցիալական գործողությունների հիմքում ընկած է սոցիալական կոնտակտը, որը սակայն հնարավոր չէ դիտարկել որպես ինքնակազմակերպման հիմք, քանի որ իր բնությամբ այն շատ անկայուն է: Ընդ որում սոցիալական կոնտակտի առաջացման համար երկկողմանի պատրաստակամության դրսևորումը պարտադիր պայման չէ. այն կարող է առաջանալ նաև ինքնաբերիկ ձևով: Պարզ է դառնում, որ փոխհրաբերությունների հաստատման դեպքում միայն կայուն երկկողմանի կապերը կարող են հանգեցնել համակարգի ներքին կարգավորման, ինքնակազմակերպման:

Քննարկված մոտեցումները նախ և առաջ վերաբերում են նոր միջավայրում էթնիկ խմբերի ինքնակազմակերպման գործընթացի տարերային, ոչ ֆորմալ բնույթին:

Ըստ ազգաբան Ս. Լուրիեի «Յուրաքանչյուր էթնոս յուրովի է արձագանքում ոչ ստանդարտ ճգնաժամային իրավիճակներին ... պատմական իրադարձություններից զատ սոցիալական, տնտեսական գործընթացները ևս նոր շերտավորումներ են մտցնում էթնիկ գործընթացների մեջ»:⁶⁰ Համաձայն այս մոտեցման էթնիկ գործընթացները տարերային և բնազդային բնույթ ունեն, և դրա հիման վրա առաջացած ինքնակազմակերպումը ծառայում է ինքնապահպանմանը, վերարտադրմանը և գոյատևմանը:

Ինքնակազմակերպման և ինքնակառավարման հիմքը ներէթնիկ համախմբվածությունն է, որը դրսևորվում է ներէթնիկ ինստիտուտների

⁶⁰ Лурье 2014, 58.

(արյունակցական-ազգակցական, հարևանական, համայնական և այլն) և դրանց գործառնության մեխանիզմների միջոցով:⁶¹ Այս ինստիտուտներն իրականացնում են երկու հիմնարար գործառույթ. կատարում են միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների կարգավորիչի դեր, միաժամանակ ապահովում են էթնոսի որպես ամբողջության ինքնապահպանումը և վերարտադրությունը:

«Մենք ծնողները և պապերն այստեղ ձգտել են իրար մոտիկ ապրել, ինչքան որ դրա հնարավորությունն ունեցել են: Դրա համար հավաքվել են մի քանի ախպերներով կամ այլ ազգականներ ու նույն թաղամասում են բնակություն կաստատել: Դրա շնորհիվ է, որ այստեղ առաջացել են հայկական թաղամասեր, ոնց որ Բուրջ Համուտն է: Մենք էլ մեխանիկորեն շարունակել ենք ապրել այստեղ, քանի որ դպրոցը, եկեղեցին, ակումբը, հիմնական գործատեղին արդեն այստեղ են էլ ինչ միտք ունի տեղափոխվել: Ուրեմն հիմա էլ մենք մոտ ազգականներով, գաղափարակից ընկերներով ապրում ենք հարևանությամբ:»⁶²

Ահա մեջբերումից պարզ է դառնում, որ ընդհանուր միասնական կեցությունը միևնույն աշխարհագրական տեղանքում մեխանիկորեն հանգեցնում է որոշակի էթնոմշակութային միջավայրի ձևավորման: Հետագայում այս հիմքի վրա արդեն հնարավոր կլինի սահմանել արժեքանորմատիվային կանոններ էթնիկ գերիշխման պատճառով ոչ ֆորմալ համաձայնության միջոցով:

Համաձայն մեկ այլ մոտեցման նոր միջավայրում էթնոսը դրսևորվում է որպես զարգացման նախնական մակարդակի հասարակություն: Այդ պատճառով «էթնիկ» բնույթի կազմավորումները, համայնքային կառույցներն ավելի արդյունավետ կերպով են հաղթահարում միջավայրային մարտահրավերները:

Ըստ ամերիկացի մշակութաբան, սոցիոլոգ Կումարի, ով իր տեսությունը մշակել է մի շարք էմպիրիկ հետազոտությունների հիման վրա, ժամանակակից հասարակության կազմակերպական սկզբունք-

⁶¹ Ներսիսյան, Կարապետյան 2013, 695:

⁶² Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույց N6, ՀԱԻ Սկյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015թ.:

ները տարբերվում են ավանդական հասարակությունից նախ և առաջ անհատականացման սկզբունքով: Դրա շնորհիվ անհատն ազատվում է խմբային պարտադիր կապերից (ցեղեր, խմբեր, ազգեր, այլ սոցիալական խմբեր) և ինքնությունն է ընտրում իր ռեֆերենտ խումբը, ինքն է որոշում իր քայլերի առաջնահերթությունը և արժեքը և անձամբ կրում իր գործողությունների ողջ պատասխանատվությունը: Ապա նաև տարբերակման սկզբունքով, որը դրսևորվում է աշխատանքային (առաջացել են մի շարք նեղ մասնագիտական կամ հատուկ մասնագիտացում պահանջող աշխատատեղեր) և սպառման ռուրտներում՝ իր ենթամշակույթով և բազմազանությամբ: Ավանդական և արդի հասարակությունները տարբերվում են նաև կառավարման համակարգում բանապաշտեցման (rationalization) սկզբունքով, ճանաչողական սկզբունքով, տնտեսագիտականության (economism) սկզբունքով, որպես տնտեսական ակտիվության, ֆինանսական շահույթի սկզբունքով, ընդլայնման (expansionism) սկզբունքով, որն արտահայտվում է ուրբանիզացիայով և համահարթեցմամբ: Թվարկած բոլոր սկզբունքները, ստանալով առաջնահերթություն, հետին պլան են մղել սոցիալական փոխհարաբերությունները, ընտանեկան, բարեկամական և հարևանական հարաբերությունները:

Որևէ նոր միջավայրում էթնիկ խմբի համախմբման և ինքնակազմակերպման առաջին գործոնն ընդհանուր հիմնախնդրի առկայությունն է: Հետևաբար, որոշելով որևէ էթնիկ խմբի տվյալ վայրում համախմբման սկզբնական պատճառը, կարելի է հասկանալ ինչպես ինքնակազմակերպման տեսակը՝ իր բնութագրիչներով, այնպես էլ դրա հետագա զարգացումները:

Օտար միջավայրում էթնիկ խմբի հիմնական պրոբլեմն առաջին հերթին կախված է նրանց արտագաղթի պատճառներից:

«Մենք բոլորս այստեղ ցեղասպանությունից փրկվելու նպատակով ենք հայտնվել: Ջահելները չեն հիշի, բայց երբ նոր եկանք այստեղ ոչինչ չունեինք: Ճիշտ է Լիբանանի իշխանությունները բարյացկամ գտնվեցին մեր նկատմամբ, բայց երկիրն իր խնդիրներն ուներ և չէր կարող մեզ աջակցել: Մենք ահակին մեծ խմբերով էինք, գրեթե բոլորն

իրար գիտեին. Մեր մեջ կային և արհեստավոր վարպետներ, և բժիշկներ, և ուսուցիչներ, և թատրոնի դերասաններ, ամենքն էլ կային: Սակայն երբ հարցը հասել էր զուտ գոյությանը և ինչ-որ ձևով համախմբմանը, մեր ծնողներն առաջինը սկսեցին մտածել մեր ապահովության մասին: Ուրեմն պետք էր միասին գտնվել, միայնակ դուրս չգալ, օտարի հետ չխոսել, հատկապես թրքերեն: Հետո երբ արդեն բոլորը տներ հիմնեցին, նախընտրեցին մնալ նույն թաղամասում և ստեղծել հայկական դպրոցներ: Առաջին դպրոցը, որ հիշում եմ մեր կողքի տանն էր: Հետո նույն թաղամասում սկսեցին իրենց գործատեղիները բացել, որովհետև այդպես դժվարությունները հեշտ էր հաղթահարել. մեկը լեզու չգիտեր, մյուսը՝ օրենք, մյուսը՝ զումար չուներ և այլն:»⁶³

Վերոնշյալ մեջբերումով հաստատվում է այն միտքը, որ նոր միջավայր տեղափոխված խմբերի առաջնային խնդիրները, որպես կանոն, նույնն են (կենցաղային, առողջական, ապահովության և այլ), սակայն հետագա փոփոխությունները կախված են տվյալ միջավայրի մարտահրավերներից ու տվյալ խմբի ունեցած ռեսուրսներից: Ահա այդ հանգամանքների հետագա կառավարումից է կախված համայնքի հետագա ինքնակազմակերման ուղղությունը:

Կարևոր է ընդգծել, որ սփյուռքի ուսումնասիրությունների դաշտում շատ քիչ են կիրառական հետազոտություններ, որոնք վերաբերում են ինքնակազմակերպմանը: Սակայն ներկայումս շատ կարևոր են սփյուռքի ուսումնասիրությունները հենց այս կտրվածքով: Անհրաժեշտ է հասկանալ, թե սփյուռքն ինչպես կարող է ինքնակազմակերպվել խնդիրների լուծման դեպքում սեփական ռեսուրսների օգտագործման հարցի շուրջ: Եղած հետազոտությունները քննարկում են սփյուռքի ինտեգրատիվ կազմակերպությունների և միջազգային համագործակցության փորքին, ընդգծելով սփյուռքի էմիգր-հայացքը, որը կօգնի արդյունավետ քաղաքականության մշակմանը ինչպես ընդունող, այնպես էլ հայրենի երկրում:⁶⁴

⁶³ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույց N8, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015թ.:

⁶⁴ Elo, Vemuri 2016, 179–193.

Սփյուռքի ինքնակազմակերպման գործում կենսական անհրաժեշտություն են կազմակերպական կառույցները, որոնց միջոցով է վերջինս որպես կենդանի օրգանիզմ իրականացնում իր գործունեությունը:⁶⁵

Հետաքրքիր է դիտարկել սփյուռքների ինքնակազմակերպման առանձին դեպքեր, որպեսզի համեմատության միջոցով հասկանանք ինքնակազմակերպման մոդելային տարբերությունները:

Որպես օրինակ, հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելը հիմնված է քառաստիճան համադաշնայնության (confederalism) սկզբունքի վրա, որտեղ.

6. Առաջին աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքները և կազմակերպությունները, որոնք գործում են տվյալ երկրի որևէ քաղաքի կամ վարչատարածքային միավորի (մարզ, նահանգ, շրջան և այլն) շրջանակներում:
7. Երկրորդ աստիճանի վրա գտնվում են տեղական համայնքների և հաստատությունների ֆեդերացիաները (դաշնությունները), որոնք իրենց գործունեությունը ծավալում են տվյալ երկրում՝ համապետական մակարդակով:
8. Երրորդ աստիճանի վրա տարբեր տարածաշրջանների երկրների հունական համայնքների կոնֆեդերացիաներն են, որոնք գործում են միջազգային՝ տարածաշրջանային մակարդակով: Այդ տարածաշրջանները յոթն են. ա) Կանադա, բ) ԱՄՆ⁶⁶, գ) Կենտրոնական և Հարավային Ամերիկա, դ) Եվրոպա, ե) հետխորհրդային տարածք, զ) Օվկեանիա-Հեռավոր Արևելք, է) Աֆրիկա-Մերձավոր/Միջին Արևելք:
9. Եվ վերջապես, չորրորդ աստիճանի վրա է գտնվում Արտասահմանի հույների խորհուրդը (The Council of Hellenes Abroad),

⁶⁵ Ներսիսյան, Տանաջյան 2018, 645:

⁶⁶ Չնայած ԱՄՆ-ը և Կանադան ոչ թե տարածաշրջաններ, այլ առանձին երկրներ են, այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ երկրների մեծության, դրանցում հունական համայնքների սովորաբարության, այդ երկրների միջազգային դերի ու կշռի և այլ գործոնների համադրությունը՝ դրանք դիտվում են որպես տարածաշրջաններ:

որն աշխարհի մակարդակով միավորում է վերոհիշյալ կառույցները՝ հանդիսանալով նրանց ընդհանուր «հովանոցը»: Սույն կազմակերպությունը խորհրդակցական մարմին է Հունաստանի Հանրապետության հետ հարաբերություններում և համաձայն այդ երկրի սահմանադրության՝ ներկայացնում է հունական սփյուռքը (արտահայտում է վերջինիս կարծիքը):

Հունական սփյուռքի ինքնակազմակերպման մոդելն ուշագրավ է նրանով, որ, մի կողմից, աստիճանակարգային կառուցվածքի հիման վրա միավորում է բոլոր համայնքներն ու հաստատությունները՝ ապահովելով միասնական կառավարման կենտրոն, իսկ մյուս կողմից՝ առանձին համայնքներն ու հաստատությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը, քանի որ միավորումը հիմնված է համադաշնության սկզբունքի վրա: Այլ կերպ ասած՝ հունական սփյուռքի պարագայում առկա է ապակենտրոնացված միավորման մոդելը, որը հիմնված է «բազմազանություն միասնության մեջ» սկզբունքի վրա:

Հայկական սփյուռքի պարագայում մինչ այժմ եղել են դաշնային կամ համադաշնային հիմունքներով միավորման որոշ տարրեր: Դա հատկապես բնորոշ է եվրոպական երկրների հայ համայնքներին: Օրինակ՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (ՖՀԿՀԽ) կամ Շվեդիայի հայկական միությունների համակարգող մարմինը (ՇՀՄՀՄ) կարելի է դիտել որպես այդ երկրների հայկական կազմակերպությունների համադաշնություն: Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի (ՀՀԿՖ) անվանումն ավելի է համապատասխանում դաշնայնության սկզբունքին: Մի կողմից՝ այս կառույցները միավորում են Ֆրանսիայի, Շվեդիայի, Հոլանդիայի հայկական կազմակերպությունները և համակարգում նրանց գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ յուրաքանչյուր հայկական կազմակերպություն ինքնուրույն է և պահպանում է անկախ գործելու հնարավորությունները: Դրա լավագույն վկայությունը դրսևորվեց Ֆրանսիայի վերջին նախագահական ընտրությունների գործընթացում, երբ ՖՀԿՀԽ-ն և Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը միմյանցից ան-

կախ արտահայտեցին իրենց դիրքորոշումն այդ ընտրությունների կապակցությամբ՝ սատարելով Էմանուել Մակրոնի թեկնածությանը⁶⁷:

Վերոհիշյալ օրինակները, սակայն, միայն առանձին դեպքեր կամ տարրեր են դաշնային/համադաշնային հիմունքներով սփյուռքի միավորման: Իսկ առհասարակ, որևէ մոդելով ողջ հայկական սփյուռքի ինստիտուցիոնալ միավորման խնդիրը (նրա մասնատվածությունը՝ դավանական, կուսակցական, տարածքային և այլ հիմունքներով հաղթահարելու նպատակով), չնայած Սփյուռքի ավելի քան հարյուրամյա գոյությանը, դեռևս շարունակում է մնալ օրակարգային:⁶⁸

Այնուամենայնիվ, հայկական սփյուռքը տարբերակող բոլոր բնութագրիչների կողքին շարունակաբար և մնայուն կերպով առաջանում են ընդհանրացնող անդրտարածքային ակզբունքներ, էթնիկ, մշակութային արժեքային համակարգ: Սա կարելի է համարել սոցիալական ցանցի հիմնական գործառույթներից, որը հնարավորություն է ընձեռում՝ շրջանցելով դրանք բաղդատող կողմերը, կամրջել և միևնույն հարթության վրա բերել սփյուռքի տարբեր համայնքներին, կազմակերպություններին, անձանց:

3.2.Սոցիալական ցանցի գործառնության բնույթը հայկական համայնքներում

Հայկական սփյուռքը, ձևավորվելով մի շարք բազմաբնույթ գործոնների ազդեցության տակ, ձեռք է բերել յուրահատկություններ, որոնք դրսևորվում են համայնքային կյանքի տարբեր ոլորտներում: Այդ առանձնահատկությունները կապված են մի կողմից ընդունող երկրի ներքին կամ արտաքին պայմանների հետ՝ վարչակարգ, առկա քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմաններ, խնդիրներ, մարտահրավերներ և այլն: Մյուս կողմից համայնքի կառուցվածքի վրա ազդում է ձևավորման պատմությունը, էթնիկ համախմբման պայմանները և այլ գործոններ: Ահա այս համալիր գործոնների դիտարկ-

⁶⁷ Էմանուել Մակրոնը քվեարկության արդյունքներով ընտրվեց Ֆրանսիայի նախագահ: (<https://www.1in.am/2137708.html>)

⁶⁸ Սիմավոյան, Հովյան 2018, 134:

մամբ միայն կարելի է դուրս բերել համայնքի առանձնահատկությունները, հասկանալ դրանց դերը համայնքի ձևավորման և զարգացման գործում: Այստեղ կարևոր է դիտարկել համայնքի կառուցվածքին, ինքնակազմակերպմանը վերաբերող, ինչպես նաև համայնքի անդամների ինքնության և փոխհարաբերությունների բնույթը պայմանավորող առանձնահատկությունները: Այդ նպատակով փորձ է արվել քննարկել հայկական սփյուռքի երկու տարբեր համայնքներ և փորձել զուգահեռ համեմատականներ տանել միևնույն և հավելյալ չափանիշներով՝ պարզելու համար համայնքի և դրա ներսում գործող սոցիալական կապերի կառուցվածքային, գործառնական բնութագրիչ առանձնահատկություններ: Ինքնակազմակերպման բարձր մակարդակի և այլազգ միջավայրում գոյատևելու բազմադարյա փորձի շնորհիվ հայկական սփյուռքի դասական համարվող համայնքներում դրանք առավել ցայտուն կերպով են արտահայտված:

Հայկական սփյուռքում էթնոմշակութային բնութագրի պահպանման, զարգացման և տարբեր օղակների միջև կապի պահպանման հեռանկարը պայմանավորվում է այլէթնիկ միջավայրում հայերի կենսագործունեության տարաբնույթ պայմանների ամբողջությամբ: Այդ օղակներից յուրաքանչյուրում էթնոսոցիալական գործընթացները բազմավեկտոր են և պայմանավորված են բնակության միջավայրով ու խմբի ձևավորման բնույթով: Վերջին բաղադրիչը զգալիորեն կանխորոշում է հայերի յուրաքանչյուր խմբի հեռանկարը որպես էթնիկ հանրություն: Բնակության խտության աստիճանը տվյալ էթնիկ խմբի քանակական հատկանիշի հետ մեկտեղ ելակետային պայման է հանդիսանում այնտեղ տեղի ունեցող գործընթացների ու դրանց զարգացման ուղղությունների բնորոշման համար: Այս տեսանկյունից էթնիկ հոծ բնակությունն առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում նրա բնականոն զարգացման, իսկ ցրված բնակությունն ընդհակառակը՝ այլէթնիկ միջավայրում ձուլման համար:

Բնակության առաջին տեսակը բնորոշ է էթնոսի այն հատվածներին, որոնք բնակվում են միատարր հոծ և միևնույն դեպքում այլազգիներով շրջապատված տարածքով: Սա էթնոսի տնտեսական,

սոցիալական և հոգևոր ինքնադրսևորման կարևորագույն սկզբունքա-
յին պայման է: Դրան հարում է անկլավային տարաբնակեցման ձևը:

Հայ ժողովրդի պատմության մեջ կարելի է բերել անկլավային էթնիկ զարգացման բազմաթիվ փաստեր, որոնք հասել են անկախ պետականության: Կարելի է այդպիսի օրինակներ բերել և՛ վաղ ան-
ցյալի պատմությունից, և՛ արդի իրադարձություններից: Անկլավային բնակության ձևը քանակական հատկանիշների ելակետային ցուցա-
նիշներով մոտ է իր պետության մեջ բնակվող էթնիկ խմբին, քանի որ այնտեղ հնարավոր է մշակութային, իսկ որոշ դեպքերում նաև քա-
ղաքական ինքնավարություն: Այսպես, Արցախն արդեն իրականացրել է այդ հնարավորությունը՝ ձևավորելով էթնոպետական կառույցներ, իսկ Ջավախքն ունի էթնոսոցիալական կյանքի բոլոր պայմանները՝ էթնոքաղաքական կառույցներ ստեղծելու համար: Բացի այդ, այս երկու հանրությունների՝ ազգային պետությանը հարակից լինելը նպաստում է նրանց անմիջական ներգրավմանը էթնոսի հիմնական միջուկի սոցիալ-տնտեսական և հոգևոր հարաբերություններում և մասնակցությունը համազգային համախմբման գործընթացներին:

Էթնիկ բնակության հոծ և ցրված ձևերից անցման այլ միջանկյալ օղակ է հանդիսանում քաղաքի, գյուղի մակարդակով գետտոյատիպ կառուցվածքը (Լիբանան, Իրան և այլն): Բնակության այս տիպը որոշ չափով տարանջատվում է նշված կառուցվածքներից և մոտ է բնա-
կության ցրված տարատեսակին: Այն կարող է ձևավորվել քաղաքային բնակավայրերում, մանր, հոծ հանրույթներից: Այս դեպքում կարևոր դեր է կատարում քանակական հատկանիշը: Տեսակարար մեծ կշռի դեպքում (օրինակ, հայերի թվի ցուցանիշը Մոսկվայում, Լոս-Անջելե-
սում, Բեյրութում և այլն) էթնոմշակութային կյանքի որևէ ոլորտի հնա-
րավորություններն ավելի մեծ են, քան նրանց փոքր թվի դեպքում: Էթ-
նոսի բնակության վերջին տեսակը այլազգի միջավայրում նրա դիֆուզ ձևն է՝ դիսպերս վիճակը: Վերը նշվածը էթնոսի արդի վիճակի հիմնա-
կան կարևոր մոտեցումներն են: Իրականում գոյություն ունեն բազմա-
թիվ այլ մոտեցումներ (իրենց հատկանիշներով և փոփոխականնե-
րով), որոնք որոշում են այս կամ այն խմբի վիճակը: Ինչպես նաև

բնակության ձևը որոշում է ածանցյալ բաղադրիչներ և՛ հոգևոր, մշակութային, քաղաքական կենտրոնների առկայություն, էթնոկրոնական միջավայր և այլն: Որպես հոծ բնակության ցայտուն օրինակներ քննարկենք երկու հայկական համայնք՝ Թեհրանի և Բեյրութի, որոնք ունեն կենսագործունեության մի շարք կարևոր պայմանների ընդհանրություն, սակայն ներկայումս իրենց բնույթով տարբեր են: Դրանք իրենց կենսագործունեության ընթացում ունեցել են և ունեն ինքնակազմակերպման բարձր աստիճան, ինչը բխել է ընդունող երկրի, հասարակության նմանատիպ ազդեցության բնույթից: Համայնքի ներսում ձևավորվել է գոյատևման և զարգացման հիմնարար տարրերից՝ վստահության ու երաշխիքի միջավայր, ինչը փաստում է կառավարման տարբեր օղակների արդյունավետ գործունեության և համաձայնության մթնոլորտի մասին: Համայնքային կյանքի ուսումնասիրության նպատակով կարելի է առանձնացնել երկու կարևոր օղակներ՝ կազմակերպություններ և համայնքի ներկայացուցիչներ: Ապա անդրադառնալ դրանց իրականացրած գործառույթներին. համայնքային ռեսուրսների կառավարում, դրանցում համայնքի անդամների ներգրավվածություն, ինքնության տարրերի վերարտադրում, սոցիալական հարաբերությունների հաստատման և պահպանման մեխանիզմների գործառնություն և այլն: Ահա այս գործառույթները կարող են դառնալ համայնքի ուսումնասիրության ցուցիչներ: Արդյունքում այս հատկանիշները արտահայտում են ոչ միայն տվյալ երկու համայնքների առանձնահատուկ իրավիճակը, այլև կարող են տարածվել սփյուռքում էթնիկ համայնքների վրա ընդհանրապես:

Համայնքների ընտրությունը պայմանավորված է եղել զուգահեռ համեմատելիության սկզբունքով: Նկատի է առնվել այն հանգամանքը, որ առաջադրված հետազոտական խնդիրների դուրսբերումն առավել արդյունավետ կերպով հնարավոր կլինի դուրս բերել բնութագրական հատկանիշներով համանման համայնքների համեմատության արդյունքում: Սկզբունքային ընդհանրությունների վերադրման դեպքում առավել ցայտուն կերպով են արտահայտվում բնութագրական առանձնահատկությունները:

Այս առումով համայնքների ընտրության ժամանակ կարևորվել են ինչպես դրանց ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները:

Ընդհանրություններ՝ երկու համայնքներն էլ համարվում են ավանդական, դասական տիպի համայնքներ, երկուսն էլ ձևավորվել են մահմեդական, այլակրոն միջավայրում, երկու երկրում էլ հայերն ունեն նմանտիպ կարգավիճակ (դիտվում են որպես կրոնական փոքրամասնություն, օրենսդրությամբ կարգավորվում է նրանց ներկայացվածությունը որպես կրոնական համայնք, նրանց ներկայացվածությունը խորհրդարանում, կառավարությունում և այլն), երկուսն էլ ունեն լեզվական առանձնահատկություն:

Տարբերությունները՝ լեզվի տարբերություն, համայնքի գոյության երկարատևություն, ձևավորման պատճառ, ելակետային պայմանները՝ տնտեսական, մոտիվացիոն և այլն, աշխարհագրորեն Հայաստանից ունեցած հեռավորությունը, ընդունող երկրների տարբերություն՝ չափի, բնակչության, հասարակության ազատության, ժողովրդավարության, բարեկեցության աստիճանի և այլն:


Այս կապակցությամբ հետաքրքիր է քննարկել հայկական սփյուռքի մոդելը, որը հիմնված է հայկական սփյուռքում և տվյալ համայնքում գործող կազմակերպությունների, տվյալ քաղաքում հայերի բնակության տեղակայման, նրանց միջև գործող սոցիալական ցանցի և, ի վերջո, հայկականության տարածքների սահմանագծման համադրության վրա:

Ելնելով դիտարկման տվյալներից կարելի է պնդել, որ համայնքի կառուցվածքը Ա՝ աստիճանակարգային է, Ա՛ տանիքային. Զ. Մորգանը այս տեսակը նկարագրում է որպես մեկ ընդհանուր համակցված տեսակ և անվանում է ֆլեթարիսիա:⁶⁹ Այս կառուցվածքը շատ դինամիկ է և ճկուն իր բնույթով և կարող է ավելի արդյունավետ հարմարվել նոր միջավայրում: Առավել մանրամասն քննարկենք գլխավոր կազմակերպությունների փոխհարաբերությունները, որոնք ձևավորում են համայնքային «տարածությունների» բովանդակությունը: Այս նպատակով առանձնացրել ենք կազմակերպությունների երկու խումբ՝ ըստ իրա-

⁶⁹ Morgan 2014, 179–180.

կանացրած գործառույթի և գործառնության մեխանիզմի: Առաջին խմբում միություններն են, եկեղեցիները, բարեգործական կազմակերպություններ, դպրոցներ, մամուլ և այլն: Երկրորդ խումբն ընդգրկում է հովանոցային, համադաշնային, տեղական, թիրախային բնույթի կազմակերպությունները:

Համայնքային կառուցվածքին անդրադառնալիս կարևոր է առանձնացնել այն համայնաստեղծ միավորները, որոնք գործառնում են սփյուռքի համայնքներում:




Գծապատկեր 1. Սփյուռքի համայնաստեղծ միավորները

Դրանք ներառում են գործող երեք հիմնական սոցիալական օբյեկտները՝ կազմակերպություններ, խմբեր և անհատներ: Սրանք, անկախ իրենց իրական չափերից, ուսումնասիրության մեջ դիտարկվում են որպես համագործ միավորներ: Վերջինի համար որպես հիմք ունեցած սոցիալական ռեսուրսները: Համայնքային կյանքում ներառվածության աստիճանից է կախված համայնքում սոցիալական միջավայրի բազմազանությունը: Հայկական սփյուռքի տարբեր համայնքներում կարելի է արձանագրել այս միավորների ընդգրկվածության տարբերություն: Որպես կանոն, որքան բարդ է համայնքի ներսում հարաբերությունների բնույթը, այնքան ամուր են խմբային կապերը: Մյուս կողմից, հարաբերությունների ինստիտուցիոնալացմանը զուգընթաց թուլանում են ոչ ֆորմալ խմբային կառույցների ազդեցությունը հա-

մայնքում: Ահա այս կերպ սահմանափակվում է համայնքային կառուցվածքում սոցիալական տարբեր միավորների ներառումը և հանգեցնում բազմազանության նոսրացման: Վերջինս իր հերթին բերում է համայնքի ներփակման:

Այս երևույթը նկատելի է նաև տարածական առումով: Հայկական սփյուռքի ուսումնասիրված համայնքների հիման վրա կարելի է պրոյեկտել համայնքային կառուցվածքը տարածության վրա: Ստորև ներկայացված է հայկական տիպական համայնքի տարածական կառուցվածքը՝ հիմնված Թեհրանի, Բեյրութի հայկական համայնքների օրինակների վրա:



Գծապատկեր 2. Հայկական սփյուռքի ավանդական համայնքի տիպական տարածական կառուցվածքը⁷⁰

Գծագրում պատկերված են հայկականության տարածքներ, որոնք ներառում են համայնքային կազմակերպություններ և կարող են համընկնել հայերի բնակության տարածքների՝ թաղամասերի հետ: Դրանք միմյանց և կենտրոնական մարմնին միանում են փոխադարձ կապերով՝ ապահովելով համազոր հարաբերություններ: Օբյեկտների այսպիսի դասավորվածությունը և փոխհարաբերությունների բնույթը թույլ է տալիս գործարքել հարաբերությունների և ինքնակազմակերպման ցանցային մեխանիզմ: Վերջինիս միջոցով էլ, ըստ էության իրականանում է տիպական հայկական համայնքի գործառնությունը:

⁷⁰ Գծագրում ներկայացված միավորների և դրանց կապերի քանակը պայմանական է:

Դրան, իհարկե նպաստում են համայնքներում գործող կազմակերպությունների տեսակները: Դրանք իրենց հիմքում ունենալով հասարակական, բարեգործական, մշակութային, կրթական, եկեղեցական և այլ բնույթ՝ պատկանում են ցանցային տեսակի, որոշներն էլ հովանոցային տեսակի կազմակերպությունների շարքին: Այս կազմակերպություններից մի քանիսի ցանցային ծածկույթն ընդգրկում է համահայկական, փաստացի միջազգային տիրույթ, միաժամանակ ունենալով ներհամայնքային ուղղվածություն:

Վերոնշյալ օրինակը վերաբերում է միայն տիպական, նույնիսկ իդեալական պայմանների համայնքին, սակայն պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երկիր, քաղաք իր ազդեցությունն է թողնում համայնքի ձևավորման վրա: Հնարվոր չէ քննարկել որևէ առանձին համայնք՝ անտեսելով տվյալ մշակութային համատեքստը:

Վերջինիս քննարկումը մեծ կարևորություն է ձեռք բերում էմպիրիկ հետազոտությունների պարագայում, երբ որպես ուսումնասիրության հիմնական խնդիր է դրվում համադրման և համեմատության միջոցով դուրս բերել առանձնահատկությունները: Իրականացված հետազոտությունների ընթացքում դժվարությունների մի խումբ կապված է հենց մշակութային միջավայրի համատեքստի հետ, ինչը հաստատում է դրա մեծ ազդեցությունը համայնքային կյանքի կազմակերպման վրա: Իսկ կառուցվածքային բնութագրման տեսանկյունից, այդ ազդեցությունը երբեմն կարող է որոշիչ դեր ունենալ՝ դառնալով համայնքի հիմնական տարբերիչ առանձնահատկությունների կարևոր մասը:

Այսպես, ցանցային տիրույթների քննարկման համար նախ և առաջ անհարաժեշտ է հաշվի առնել մշակութային գործոնը: Սակայն բուն սոցիալական ցանցի ձևավորման գործընթացը հասկանալու համար պետք է դիմել դեռևս սոցիալական խմբերի ինքնակազմակերպման փուլին: Փորձը ցույց է տալիս, որ հայկական սփյուռքում, և հատկապես դասական համարվող համայնքներում ինքնակազմակերպումն ընթանում է ապակենտրոնացված, ցանցային ձևով:

Այսպիսով, բացի մշակութային գործոնից, սփյուռքի համայնքների ուսումնասիրության ժամանակ հարկ է անդրադառնալ նաև դրա ցանցայնացման փուլերին:

4. ՑԱՆՑԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հայկական սփյուռքում ցանցային գործառնության դերը հասկանալու համար ուսումնասիրվել է երկու՝ Թեհրանի և Բեյրութի հայաշատ համայնքները: Դրանք ընտրվել են մի շարք սկզբունքներով՝ պայմանավորված են էթնիկ և կրոնական միջավայրով, Հայաստանից աշխարհագրորեն մոտ և հեռու գտնվելով, ձևավորման պատմությամբ ու համայնքային կազմով, համայնքային կազմակերպման ձևերով, հայերի բնակեցման ձևով, ընդունող երկրի քաղաքական և մեծ քաղաքների սոցիալ-մշակութային տարբերություններով և այլն:⁷¹

Նման մոտեցումը թույլ է տալիս հասկանալ գերակշիռ ընդհանրությունների խորապատկերին այդ համայնքներում սոցիալական ցանցի գործառնության առանձնահատուկ դրսևորումները՝ հնարավորինս չեզոքացնելով արտաքին ազդեցության գործոնները:

4.1. Սոցիալական ցանցի գործառնության առանձնահատկությունները Թեհրանի հայկական համայնքում

Հայկական սփյուռքի համայնքներում ինքնակազմակերպման մեխանիզմների, սոցիալական ցանցի, դրանում առկա փոխազդեցությունների առանձնահատկությունները պարզելու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ որոշակի սկզբունքներով ընտրված հետազոտական դեպքերի քննարկմանը: Այս պարագայում որպես այդպիսին քննարկենք Թեհրանի հայ համայնքի դեպքը:

⁷¹ Կարապետյան 2012, 21–23:

Թեհրանի հայ համայնքում սոցիալական ցանցի գործառնությունը ներկայացնելու համար անհրաժեշտ պայման է որոշակիացնել նախադրյալների այն շրջանակը, որից ներս պետք է քննարկվեն համայնքում տեղի ունեցող ժամանակակից երևույթները: Այդ նպատակով նախ անդրադառնանք դրա ձևավորման պատմությանը, պատճառներին, ներկայացնենք համայնքի ներկայիս ընդհանուր պատկերը:

Այսպես, Թեհրանի հայ համայնքը Իրանահայ համայնքի կազմում համարվում է սփյուռքի առանձնահատուկ գաղթօջախներից մեկը: Այն համարվում է Մերձավոր և Միջին արևելքի խոշորագույն, ամենահին և ավանդական համայնքը:

Այս համայնքի առանձնահատկությունը նախ և առաջ կայանում է նրանում, որ այն դարերի ընթացքում պահպանել է սերտ կապ հայրենիքի հետ: Վերջինս հնարավոր է դարձել առավելապես շնորհիվ աշխարհագրական դիրքի, բայց և համայնքի ինքնակազմակերպվածության և ինքնակառավարման հատուկ մեխանիզմների:

Ի տարբերություն հայ սփյուռքի այլ գաղթօջախների, որոնց առաջացման համար գլխավոր պատճառ է հանդիսացել ցեղասպանությունը, Իրանի հայ համայնքը ձևավորվել դեռևս ցեղասպանությունից շատ դարեր առաջ և պահպանվել է մինչ օրս:

Մինչև 1970-ական թվականները թեհրանահայության շրջանում քիչ չէին խոշոր ձեռնարկատերերը, զգալի թիվ էին կազմում նավթարդյունաբերության ոլորտի աշխատողները, և ներգրավված էին պետական համակարգում և տնտեսական ու իրավաբանական ոլորտներում, ներկայացված էին նաև բանակային, սպայական ծառայության մեջ: 1950-ական թվականներից սկսած աճ է արձանագրել նաև հայ մտավորականության թիվը (բժիշկներ, իրավաբաններ, ուսուցիչներ, ճարտարագետներ և այլն), որոնց մի մասը մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացել էր արևմուտքի երկրներում:

1979թ. իսլամական հեղափոխությունից հետո տիրող անկայուն կացության, անուղղակի խտրական վերաբերմունքի պատճառներով հայության թիվն Իրանում կրկնակի կրճատվեց:

Ներկայումս պաշտոնական վիճակագրություն Իրանում հայերի թվի մասին գոյություն չունի: Դժբախտաբար ստույգ տվյալներ գոյու-

թյուն չունեն նաև մայրաքաղաքում նրանց թվաքանակի մասին: Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ ներկայումս Թեհրանում հայերի թիվը հասնում է 50 000-ի:

Հայերի հիմնական զանգվածի կենտրոնացումը Թեհրանում պայմանավորված է նրանով, որ Իրանում գյուղական բնակչության տեսակարար կշիռը ներքին միգրացիոն գործընթացների հետևանքով մշտապես կրճատվում է: Ընդ որում, ներքին տեղափոխությունների հիմնական ուղղվածությունը «գյուղ-քաղաք» ուղղությունն է:⁷²

Համաձայն համայնքում տեղեկատու անձի դիտարկման.

«Վերջին 10 տարվա կտրվածքով արտագաղթը իր որոշակի տեմպերով գոյություն ունի և այդ պատճառով բնական աճին հակակշռում է, և, հետևաբար, կարելի է ասել թվաքանակային իմաստով համայնքը նահանջ է ապրում: Արտագաղթը պետք է գլխավորապես կապել տնտեսական վիճակի հետ: Սխալ է այն տպավորությունը, որ հայերը Իրանից արտագաղթում են ոչ տնտեսական պատճառներով: Հիմնականում պատճառները տնտեսական ու սոցիալական: բնույթի են, այլ ոչ թե կրոնական, ինչը շատ շահարկվում է»⁷³:

Սակայն համաձայն մեկ այլ տեղեկատու անձի գնահատականի արտագաղթի պատճառներն իրականում շատ ավելի բարդ են և զուտ տնտեսական կամ սոցիալական վիճակով այն բացատրել չի կարելի:

«Արտագաղթի առթիվ տարբեր պատճառներ կան: Պատմականորեն մարդիկ իրենց ընտրածով, իրանց ցանկությամբ չեն եկել այս տարածքի վրա, բնականաբար, չեն էլ հաշտվում: Մարդիկ տարբեր պատճառներով են հայտնվել Պարսկաստանում, սակայն երբեք ոչ թե նրա համար, որ իրենք են ընտրել այս երկիրը: Երևի արտագաղթի պատճառներից մեկը դա է: Մյուսը, փոքրամասնությունների իրավունքներն են, որոնք թղթի վրա գոյություն ունեն, բայց իրականության մեջ չեն գործադրվում, իհարկե հարաբերականորեն, ժողովրդին մղում է դեպի արտագաղթ: Դրան ավելանում են անձնական պատճառները,

⁷² Բայբուրդյան 2013, 33–34:

⁷³ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույց N5, ՀԱԻ Սիյուռքի հետազոտությունների քաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

մարդանց էն ցանկությունը, որ իրենց հայրենիքում չեն ապրում, ուրեմն գոնե ավելի լավ երկրում ապրեն: Ավելի լավը տարբեր մարդկանց համար տարբեր է:»⁷⁴:

Համայնքի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար կարևոր է քննարկել հայերի ներկայության սոցիալական, տնտեսական կողմը: Վերջինը ևս կարելի է դուրս բերել խորին հարցազրույցների տվյալներով: Ընդհանուր առմամբ հարցվողները նշում են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի փոփոխության հիմնավորման համար:

Նշված խնդրի վերաբերյալ խորին հարցազրույցի հացվողի դիտարկումը հետևյալն է.

«Սոցիալական, տնտեսական կյանքը մեր համայնքում, երևի արդեն գիտեք, անկում է ապրել: Ահմադի Նեժաթի ժամանակներից արդեն Իրանը ընկավ համաշխարհային որոշ գործընթացների մեջ՝ էմբարգո և այլն, և աստիճանաբար, մանավանդ վերջին երկու տարում կտրուկ վատացավ պայմանները ու հեռանկարում շատ դրական բաներ չեն սպասվում:»⁷⁵

Շարունակելով օբյեկտիվ պատճառների քննարկումը տեղեկատու անձը նշում է.

«Էսօր եթե ուզում ես լավ ապրես պետք է լավ մասնագիտություն ունենաս, 30 տարի առաջ եթե տնից մեկն աշխատեր, տունը կպահեր, հիմա երևի պետք է բոլորն աշխատեն, եթե ուզում ես բարեկեցիկ ապրել, ունենաս քո ուզած բաները, պետք է լուրջ սովորես, լուրջ աշխատես: Երկրի ընդհանուր կենսամակարդակը բարձրացել է: Իսկ անձնապես էսօր մարդիկ ավելի շատ պետք է աշխատեն իրանց սովորական կյանքն ապահովելու համար: Մարդկանց սպասելիքն էլ այլ էր, պահանջները հիմա փոխվել են, կենսամակարդակն է բարձրացել:»⁷⁶

⁷⁴ Ա. Ներսիսյան, Խորին հարցազրույցN4, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

⁷⁵ Ա. Ներսիսյան, Խորին հարցազրույց N12, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

⁷⁶ Ա. Ներսիսյան, Խորին հարցազրույցN4, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների

Անհրաժեշտ է դիտարկել մասնավորաբար հայերի սոցիալ-տնտեսական վիճակը ընդհանուրի խորապատկերին, որպեսզի պարկերացում կազմենք, թե արդյոք հայերն ինչպիսի՞ դիրք են զբաղեցնում իրանական հասարակության մեջ, արդյոք ո՞ր սոցիալական շերտում են տեղավորված, որքանո՞վ է համասեռ հայերի հանրույթը սոցիալ-մասնագիտական առումով, և կա՞ն արդյոք որոշակի տնտեսական ցուցիչներ, որոնք բնութագրական են հենց հայերի համար:

Այսպես, տեղեկատու անձի գնահատմամբ. «Սկզբնական շրջանում երբ հայերը կենտրոնացած էին, որպես քաղաքում ապրող մարդավելի կրթյալ են եղել, հիմնականում բժիշկներ, նկարիչներ, ոսկերիչներ: Հետո երբ որ մուսք են գործում Թեհրան, արդեն, որովհետև ուսում ունեին, ավելի հանգիստ էին շփվում եվրոպացու հետ, ավելի լավ էր անգլերենը կամ հիմնականում ֆրանսերենը, կարողանում էր վերցնել իր վրա նաև մեխանիկական գործերը, գործեր, որոնք տեխնիկային են վերաբերում, հայերը կարողանում են էդ տեղը գրավել: Նույնիսկ էսօր էլ եթե պարսիկի հարցնեք՝ որտեղ կարելի ա մեքենան լավ սարքել, անպայաման կասի հայի մոտ: Էդպես հայերն իրենց անունը ունեցան որպես լավ մեխանիկներ, ոսկերիչներ, վարպետներ, որպես թարգմանիչներ, բժիշկներ և այլն»: ⁷⁷

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մինչև ներկայիս ժամանակները (մասնավորապես մինչև հեղափոխությունը) մասնագիտական մրցակցությունն ավելի առողջ է եղել, աշխատանքային շուկան ավելի ազատ: Սակայն ներկայիս իրավիճակը բավականին տարբերվում է նախկինից, և դա առաջին հերթին կրոնական, ազգային պատկանելիության նկատմամբ ընկալումների փոփոխության հետևանք է: Որքան էլ հայերը, որպես ազգություն և կրոնական փոքրամասնություն հանդուրժողականության միջավայրում գտնվեն, միևնույն է կրոնը և ազգությունը գործոններ են Իրանում: Այս համատեքստում տեղեկատու անձը համեմատություն է տանում հեղափոխությունից առաջ և հետո հայերի սոցիալ-տնտեսական կյանքի և դիրքի միջև: Նշելով, «Նախքան

բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

⁷⁷ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույցN2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

հեղափոխությունը, այստեղ հայերը մեծ դիրք են ունեցել, մանավանդ նավթային ընկերությունները. այստեղ առաջին խավը անգլիացիներն են կազմել, հետո մենք, և դրան կապված բավականին աշխատանքներ են արել, շատ եկամտաբեր աշխատանքներ, և մեծ գործարաններ, արտադրություններ են ունեցել: Հիմա նավթային ընկերություններում հայ չկա, եթե կա էլ ուղղակի աշխատողներ են, և, ընդհանրապես, պետությունն իր ձեռքը դրել է առաջին օղակի վրա, կրոնական հարցերն ավելի շեշտակի են դարձել, ու հիմա եթե ուզես էլ հնարավորություն չկա սովորական աշխատողից ավելի բարձրանալու, ինչպես նաև էլ ցանկություն էլ չկա, որ գիտես ամեն քայլին պետք է լարված, զգույշ լինես, կրոնիդ համար, և այլն... Բայց ես գտնում եմ, որ հատուկ միտում չկար այս ամենի մեջ, դա ուղղակի իրենց խիստ կրոնական հայացքի արդյունք էր...»⁷⁸


Համայնքային կյանքի կենսագործունեության վրա մեծ նշանակություն ունեն կազմակերպությունները, որոնք սկսել են ձևավորվել դեռևս ինքնակազմակերպման նախնական փուլում:

Թեհրանում հայկական առաջին հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու միությունները ձևավորվել են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Ներկայումս գործող ազգային քաղաքական կազմակերպություններն են՝ ՀՅԴ-ի տեղական մարմինը և Հայկական ժողովրդական միությունը (ՀԺՄ): Քաղաքում գործում են նաև ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ դատի, Հայ երիտասարդաց ընկերակցության մասնաճյուղերը, ինչպես նաև մշակութային, մարզական և կրթական կազմակերպություններ: Գործում է մի քանի տասնյակ հայկական դպրոց:

Համաձայն տեղեկատու անձի դիտարկման «Համայնքը ներկայումս ղեկավարվում է ազգային իշխանության կողմից կամ ազգային առաջնորդարանի կողմից, որն ունի իր տարբեր կառույցները և լծակները, օղակները և ենթաօղակները»⁷⁹:

⁷⁸ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույցN1, ՀԱԻ Սիյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

⁷⁹ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույցN4, ՀԱԻ Սիյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:



Գծապատկեր 3. Թեհրանի հայ համայնքի ինքնակառավարման կառուցվածքը

Թեմի առաջնորդն է գերաշնորհ սրբազան Սեպուհ Սարգսյանը: Թեմն ունի պատգամավորական ժողով, խորհուրդ:⁸⁰ Որպես գործադիր մարմին, աշխատում է թեմական խորհուրդը, որին օժանդակում են թեմական ենթախորհուրդները: Դրանք են՝ դատական խորհուրդը, կրթական խորհուրդը, կտակակալվածային, շինարարական ֆոնդը և մեկենասող խորհուրդը: Սա այն մեխանիզմն է, որը թույլ է տալիս մասնագիտական ոլորտի ձեռքբերումները ծառայեցնել համայնքի շահերին:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից կարելի պնդել, որ Թեհրանի հայ համայնքում առկա են տարաբնույթ կազմակերպություններ,

- որոնք ունեն ինքնակազմակերպման և ինքնակառավարման առանձնահատկ մեխանիզմներ
- որոնք փոխկապված են միմյանց և այլ համայնքների իրենց մասնաճյուղերի հետ ցանցային սկզբունքով:

Տարբեր չափի, ձևի և ֆորմալության աստիճանի համայնքային կազմակերպությունների կողքին ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հայահոծ թաղամասերը, որպես ինքնուրույն համայնքային կառույց:

Ներկայումս Թեհրանում հայերը համախումբ ձևով գլխավորապես բնակվում են Մաջիդիե, Ջարքեշ, Հեշմաթիե, Նարմաք և մի շարք այլ թաղամասերում, թեև կան նաև ամբողջ քաղաքում ցրված հայ ընտանիքներ: Հատկանշական է, որ թեհրանահայերի շրջանում տվյալ թաղամասերն ունեն իրենց համարժեք հայկական անվանումները՝ Ջեյթուն, Սասուն, Կենտրոն:

Տվյալ դեպքում համախումբ ասելով նկատի ունենք հայազգի բնակչության, համայնքային կառույցների՝ եկեղեցի, դպրոց, հիվանդանոց, ծերանոց, ակումբներ, միություններ և այլն, կուտակումներ, ինչպես նախ լրացուցիչ սպասարկող կազմակերպությունների խիտ առկայություն՝ խանութներ, դեղատներ, տրանսպորտային ծառայություններ և այլն:⁸¹

⁸⁰ Ներսիսյան 2014, 93:

⁸¹ Нерсисян 2017, 197.

Ներկայացվող գծապատկերում (տե՛ս հավելված, գծապատկեր 1) ներկայացված է քարտեզ⁸², որը ցույց է տալիս Թեհրանում հայկական համայնքների տարածական տեղակայումը:

Քարտեզում նշված սահմաններն, իհարկե, պայմանական են և պաշտոնապես ամրագրված չեն: Դրանք գտնվում են երկու մշակույթների սահմանագծի վրա: Թեհրանի դեպքում այդ սահմանագիծը գրեթե ամբողջովին համընկնում է հայկական փողոցների, կառույցների շուրջը կառուցված պարիսպների, հայկական գրություններով կամ պատկերներով ցուցանակների, ցուցափեղկերի հետ: Այստեղ կարևոր է նշել, որ պարիսպների կառուցումը պայմանավորված է Իրանի մշակույթների տարբերակման քաղաքականության պահանջով. որևէ խմբի կամ փոքրամասնության կողմից գերիշխող մշակույթի ցանկացած նորմին հակասող դրսևորում չպետք է կրի բացահայտ բնույթ ողջ հասարակության համար: Ստացվում է, որ ազգային ինքնության մի շարք տարրերի արտահայտման համար միակ հասանելի վայրը համայնքային կառույցների պարիսպների ներսում է:

Բացի այդ թե՛ հայերի մոտ, թե՛ իրանցիների (համաձայն տեղացի հայերի գնահատման) մոտ կա տվյալ թաղամասի հայկականության հստակ ընկալում: Վերջինս մեկնաբանվում է նաև այս թաղամասի բնակիչների համար անվտանգության, ազատության բարձր շեմով. Հայ համայնքը լրացուցիչ ոչ ֆորմալ վերահսկողություն ունի տվյալ թաղամասերում և, համապատասխանաբար, կրում է չբարձրաձայնվող պատասխանատվություն:

Հայկական համայնքային կազմակերպությունները սահման են հանդիսանում հայկականության պահպանման համար: Դրանք բավականին պատկերավոր ձևով արտահայտված են ներկայացվող նկարներում, որտեղ պարզորոշ ընդգծվում է (տե՛ս հավելված, նկար 1) հայկական միջավայրը՝ համայնքային կառույցների պարիսպներից ներս:

⁸² Սույն աշխատության մեջ քարտեզն իրենից ներկայացնում է իրական օբյեկտների արբանյակային տեղանշման սխեմատիկ պատկեր, որը հանարվորինս ճշգրիտ արտացոլում է դրանց իրական տեղակայումը քաղաքում:

Նկարում պատկերված պարիսպները դառնում են տարրբերության տարածքների ֆիզիկական ընդգծման սահմաններ: Կարելի է տեսնել, որ պատերը բավականին բարձր են, դրանց ներսում հայերն իրենց զգում են կարծես «սեփական տարածքում», հատկանշական է, որ պատերից ներս կանայք առանց գլխաշոր են, իսկ իրանցիները միայն հատուկ թույլտվությամբ կարող են մուտք գործել այդ տարածքներ: Բոլոր հայկական եկղեցիները, դպրոցները, ակումբներն ու միությունները պարսպապատ են:


Այրու կողմից համայնքային կազմակերպությունները դառնում են ընդունող երկրի, հասարակության հետ հարաբերակցման, ինտեգրման խողովակ: Այդ ընդհանրացնող հարթակներից է քաղաքականությունը, որտեղ հայերը կարող են ունենալ երկու պատգամավոր Մեջլիսում (ըստ կրոնական փոքրամասնության քվտայի հայերը ներակայացնում են բոլոր քրիստոնյաների ձայնը Մեջլիսում), կրոնական խորհուրդները, որոնք համարվում են յուրաքանչյուր համայնքի առաջին դեմքը, գիտական, հետազոտական, լրագրողական հանրությանի միջև երկխոսության հարթակները, և մարզամշակութային իրադարձությունների հարթակները:

Այսպիսով, ակնհայտ է, որ համայնքում ինքնություն կառուցակցելու և հետագայում պահպանելու համար Թեհրանի հայ համայնքում առկա են որոշակի սոցիալական միջավայրեր, որոնք լցված են առավելապես ազգային, ավանդութային բովանդակությամբ:

Կարևոր է քննարկել, թե ինչպես են ձևավորվում այդ միջավայրերը, ինչ հարաբերություններ են ներառում և ինչ չափանիշների համաձայն են գործում: Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ Թեհրանի հայ համայնքում հարաբերությունների գործառնությանն ըստ ցանցային որակական չափանիշների:

Կենտրոնացվածության չափանիշ: Թեհրանի հայ համայնքում նկատվում է առավել մեծ քանակի կապերի ակտիվություն մեկ կառույցի շուրջ, ինչը վկայում է կենտրոնացվածության բարձր աստիճանի մասին: Որպես այդպիսին հանդես է գալիս Ազգային առաջնորդարանը, որի շուրջն են տեղակայվում համայնքային մյուս կառույցներն ըստ

որոշակի հաջորդականության: Վերջինս որոշվում է կենտրոնից ունեցած հեռավորությամբ: Թեհրանի հայ համայնքի համար Ազգային առաջնորդարանը կատարում է յուրատեսակ ինֆորմացիոն կենտրոնի գործառույթ. ցանկացած տեղեկատվություն այսպես թե այնպես կապված է առաջնորդարանի հետ: Մնացած կառույցները գտնվում են ինֆորմացիոն երկրորդ (դպրոցներ, կուսակցություններ, համալսարանական ամբիոն), երրորդ (միություններ, ակումբներ) և հաջորդ գոտիներում: Այս աստիճանավորումը համընկնում է դրա տարածական տեղակայմանը:



Գծապատկեր 4. Թեհրանի համայնքային կազմակերպությունների տարածական տեղակայման մոդելը

Կենտրոնացման չափանիշ: Համաձայն կենտրոնացման ցուցանիշի Թեհրանի հայ համայնքում առկա է բավականին բարդ ցանցային համակարգ, որտեղ ներգրավվածության խորությունից կախված իջնում է անձնավորվածության աստիճանը՝ մի կողմից որպես ավանդական վարքի դրսևորում, մյուս կողմից՝ արտաքին միջավայրի ճնշում: Այստեղ կենտրոնացումը մեծ մասամբ կատարվում է կառույցների շուրջը, այլ ոչ թե անհատների:

Խտության չափանիշ: Թեհրանի հայ համայնքում դիտարկվել է ցանցային բարձր խտություն: Սրա մասին է վկայում այն, որ մեկից մեկ այլ անհատի հետ կապ հաստատելու համար կարող են կիրառվել

առնվազն մի քանի ուղի: Սրա պատճառն այն է, որ համայնքում առկա է դերերի համընկնման բարձր հաճախականություն:

«Ես հանգիստ եմ տղայիս համար, որովհետև նա հաճախում է նույն ակումբը ինչ որ ես, ինչ որ իմ ծնողներս ժամանակին, հիմա էլ նա է գնում իր ընկերների հետ: Այստեղ հանգիստ է էդ առումով. Դու գիտես երեխուդ ընկերներն ովքեր են, մեծ մասը հարևանությամբ են ապրում, այսինքն նույն թաղից ենք, կամ ծնողերի հետ միևնույն գործն ենք անում, կամ եկեղեցում ենք հանդիպում, կամ ինչ-որ բարեգործականով, եթե ազգականներ չենք: Կարելի է ասել, այստեղ բոլորս էլ իրար գիտենք, եթե ոչ դժվար չէ իմանալ»:⁸³

Այս համընկնումները մի կողմից ամրապնդում, մյուս կողմից բարդացնում է հարաբերությունները, որն էլ նպաստում է համայնքի ներփակմանը:

Ենելով վերոնշյալ դիտարկումներից կարելի է ենթադրել, որ համայնքն առնվազն ֆորմալ առումով փակ է, քանի որ հարաբերությունների բազմազանության պահանջը բավարարվում է ներքին ռեսուրսների հաշվին՝ անտեսելով պահանջվող որակը: Մյուս կողմից տվյալ պետության պատասխանատու մարմինների և նույն միջավայրում գտնվող այլ էթնիկ հանրությունների հետ հարաբերությունները տեղի են ունենում մեկ ելքով:

Դիրքորոշման չափանիշ: Թեհրանի համայնքային կառույցներում նկատվում են սոցիալական կյանքի կազմակերպման տարիքային, սեռային առանձնահատկություններ: Բացի դրանից կարևոր է առանձնացնել համայնքում դիրքորոշման դրսևորման ցուցանիշը, որն իրականանում է եկեղեցական, կուսակցական պատկանելիության և այլ բնորոշիչների համադրմամբ: Տվյալ պարագայում վերջինս կատարում է զտիչի գործառույթ: Այս տեսակի խմբավորումը համայնքում ժամանակի ընթացքում հանգեցնում է քաղաքում՝ թեհրանահայերի առանձին խմբերի կոմպակտ տեղաբաշխմանը այլ կերպ ասած կենտրոնացմանը թաղամասային սկզբունքով:

⁸³ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրույց N17, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014թ.:

Այս երևույթն ակնհայտ է դառնում, եթե դիտարկենք համայնքային կազմակերպությունների ֆիզիկական տեղակայությունը քաղաքում (տես հավելված, գծապատկեր 2):

Բերված պատկերից պարզ է դառնում ոչ միայն կազմակերպությունների մոտ տեղակայումը, այլև դրանց բազմազան բնույթը (յուրաքանչյուր տեսակի կազմակերպություն նշված է առանձին գույնով):

Թեհրանի հայ համայնքում գործում են հետևյալ բնույթի կազմակերպությունները՝ կրթական, մարզական, մշակութային, իրավական, արդարադատական, բարեգործական, տպագրական: Կազմակերպությունների բնույթի խմբավորումն իրականացվել է համաձայն իրականացրած գործառույթի և հայտարարված նպատակի:

Համայնքում գործող կազմակերպությունները ներառում են բոլոր վերը քննարկված տեսակի կառույցները՝ միություններ, կրթական հաստատություններ, բարեգործական կազմակերպություններ, եկեղեցիներ:

Համայնքային բոլոր կազմակերպությունները ոչ առևտրային և ոչ պետական են:

Կառույցների միջև առկա փոխազդեցություններն ունեն միմյանց հավասարիորիզոնական և կենտրոնի (տվյալ դեպում առաջնորդարանի) հետ ուղղահայաց կապերի միջոցով: Սա կարելի է համարել խառը բնույթի փոխհարաբերությունների տեսակ: Սակայն հորիզոնական կապերի ներսում ևս առկա են խառը և ճկուն փոխհարաբերություններ:

Հայկական դասական համայնքներում, որպիսին է Թեհրանի համայնքը, որպես կանոն գործող երեք ավանդական եկեղեցիները՝ հայ առաքելական, հայ կաթողիկե, հայ ավետարանական, ներհայամայնական միջավայրի ընկալումներում կապված են և զուգակցվում են երեք ավանդական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ), Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) և Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) հետ:

Կարևոր է ընդգծել, որ պաշտոնապես քաղաքական, կուսակցական կառույցներն իրականում բացակայում են Թեհրանում: Սա կապված է Իրանի պետական քաղաքականության հետ: Սակայն, փոխա-

րենը մյուս՝ մարզական, մշակութային և այլ կառույցները տարբեր հարաբերակցությամբ իրականացնում են քաղաքական, կուսակցական գործունեություն:

Ի դեպ կուսակցություններից յուրաքանչյուրը կապված է կոնկրետ մարզամշակութային, պարբերական մամուլի, կրթական, սկաուտական կազմակերպությունների հետ:

Թեհրանի հայերի սոցիալական հարաբերությունների առանձնահատկությունները ընկալելու համար դուրս բերենք համայնքային կառույցներին ներգրավվածության աստիճանը և բնույթը (տես հավելված, գծապատկեր 3):

Թեհրանի համայնքային կառույցներում նկատվում են սոցիալական կյանքի կազմակերպման տարիքային, սեռային առանձնահատկություններ: Իսկ ինչ վերաբերում է քաղաքական, կուսակցական պատկանելությանը, ապա թեհրանահայերի շրջանում դա չի հիշատակվում որպես առանձին կառույցի անդամակցություն: Սա, ըստ էության, արտաքին միջավայրի գործոնի ազդեցություն է, քանի որ այս տիպի կառույցներն իրականում բացակայում են, փոխարենը մյուս կառույցները տարբեր հարաբերակցությամբ իրականացնում են քաղաքական, կուսակցական գործունեություն:

Հատկանշական է համայնքի անդամների մեծամասնության ներգրավվածությունը համայնքային կառույցներին, ինչը նրանց կողմից ընկալվում է որպես սոցիալական պատկանելություն, ուստի և դառնում է բնութագրիչ տվյալ անհատի տեղը համայնքում մատնանշելու համար:

Այս տեսակի խմբավորումը համայնքում ժամանակի ընթացքում հանգեցնում է քաղաքում՝ թեհրանահայերի առանձին խմբերի հոծ տեղաբաշխմանը, այլ կերպ ասած, կենտրոնացմանը թաղամասային սկզբունքով: Սա ունի երկակի գործառույթ. մի կողմից կարող է իրականացնել համախմբման և ինքնակազմակերպման, մյուս կողմից պիտակավորման և մասնատման գործառույթներ:

Վերոնշյալից ելնելով կարող ենք ասել, որ Թեհրանի հայ համայնքը բավականին ակտիվ է, ինչը դրսևորվում է առավելապես հասարա-

կական ոլորտում, քանի որ համայնքի ներսում կապերի ներգրավումն ու ամրապնդումը կարևորագույն խնդիրներից է:

Եթե դիտարկենք առանձին խմբերի ներգրավվածությունը կոնկրետ կառույցներում, ապա կարելի է տեսնել, որ հարցվածների այն խումբը, որը հայրենիքը համարում է ծնողների, պապերի ծննդավայր, ընդգրկված չէ ազգային կառույցներում և փոխարենը բավականին բարձր ակտիվություն է ցուցաբերում բարեգործական կառույցներում: Կրթական, հասարակական գործունեություն ծավալող կառույցներում ընդգրկվածների խումբը դիտարկելով կոեսնենք, որ դրան անդամակցում են առավելապես բարձրագույն կամ միջնակարգ կրթություն ունեցողները:

Այս համատեքստում շատ կարևոր է հասկանալ, թե համայնքի ներկայացուցիչները որպես ով են ներգրավված այդ կառույցներում:

Աղյուսակ 1 Թեհրանի համայնքի անդամների՝ կառույցներում ներգրավվածության ձևը (% հարցվածներից)

Թեհրանի համայնքի անդամների՝ կառույցներում ներգրավվածության ձևը	Տոկոսը հարցվողներից
Անդամ	46%
Մասնակից	26%
Կազմակերպիչ	18%
Հովանավոր	9%
Այլ	1%
Ընդամենը	100%

Աղյուսակից պարզ է դառնում, որ համայնքային կառույցների ակտիվությանը մասնակցայնություն ցուցաբերում են մեծամասամբ մասնակից անդամները, սակայն ոչ պակաս մասնաբաժնով են ներգրավված հովանավորներն ու կազմակերպիչները: Ընդհանուր առմամբ նկատվող բարձր ցուցանիշներն անշուշտ արտահայտում է ամբողջ համայնքի սոցիալական ակտիվությունը և տարբեր խմբերի մասնակցայնությունը ինքնակառավարման գործընթացում: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ բավականին մեծ է միջակայքը կառույցների

կողմից արտադրվող համայնքային ուղղվածության նյութի «սպառողների» և դրանց «ստեղծողների» միջև՝ 72%/27% հարաբերակցությամբ:

Այժմ դիտարկենք տվյալ երկրի ընդհանուր սոցիալական հարաբերություններում ներգրավվածության, ցանցային կողմնորոշման հանգամանքներն անհատական մակարդակում:

Համայնքում կատարվող խորքային գործընթացների մասին տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է գտնել այնպիսի ցուցիչներ, որոնցով կարելի է որոշակի պատկերացում կազմել համայնքի ներքին կյանքի կարգավորման գործընթացների օրինաչափությունների մասին: Այդպիսի ցուցիչներից է այն հարցը, թե Թեհրանի հայերը որքանով են ներառված սոցիալական հարաբերություններում: Սա դուրս բերելու համար դիտարկվել են հետևյալ ցուցիչները՝ հարցվողի ներկայիս աշխատանքը, նրա ներգրավվածությունը համայնքային կառույցներին, երկիրը, հայրենիքի ընկալումը, և թե ում է ընտրում որպես ամենամոտ ընկեր՝ կախված հարցվողի սեռից, տարիքից և կրթությունից:

Տարիքային առանձնահատկություններն ի տարբերություն սեռի, այդքան էլ խիստ ընդգծված չեն: Միջին և բարձր տարիքի խմբերը դրսևորում են գրեթե նույնչափ ակտիվություն բոլոր ոլորտներում, իսկ երիտասարդներն առավելապես կենտրոնացած են մարզամշակութային կառույցներում:

Հաջորդիվ դիտարկենք Թեհրանի համայնքի ներկայացուցիչների՝ սոցիալական հարաբերություններում ընգրկվածության աստիճանը կախված կրթությունից: Այստեղ դիտվում է բարձրագույն կրթություն ստացածների գերակշռություն: Հատկանշական է կրթության մակարդակի բևեռացվածությունը որոշ խմբերում՝ եկեղեցի, աշխատանքային որոշ խմբեր:

Ելնելով ներկայացված ցուցիչներից, հետազոտության արդյունքների քննարկումից, կարելի է պնդել, որ Թեհրանի հայ համայնքում հարաբերականորեն կայուն ու ընդգծված տարբերիչը սեռն է: Սա կարելի է դիտարկել նաև տեղական իրանական հասարակության սոցիալ-մշակութային առանձնահատկության համատեքստում և եզրակացություն անել տիտղոսային ազգի գերիշխող մշակութային ազդե-

ցության մասին: Սակայն այս պարագայում առավել հետաքրքրական է հասկանալ այդ առանձնահատուկության դրսևորման երանգավորումները հայ համայնքում:

Այդ նպատակով ստորև քննարկենք Թեհրանի հայերի՝ սոցիալական հարաբերություններում ընդգրկվածության աստիճանը կախված սեռից (տե՛ս հավելված, գծապատկեր 4):

Եթե համեմատենք Թեհրանի հայերի՝ սոցիալական հարաբերություններում ընդգրկվածության աստիճանը տղամարդկանց և կանանց միջև, ապա պարզ է դառնում, որ կանայք նկատելիորեն գերազանցում են տղամարդկանց: Ընկերների ընտրության հարցում կանայք ավելի բաց են, նույնը կարելի է ասել նաև համայնքային կառույցների մասին, սակայն փոքր ինչ այլ է պատկերը աշխատանքի ընտրության ժամանակ: Հատկանշական է, որ աշխատանքի ընտրության հարցում ամենաբարձր և ամենացածր աստիճաններում զբաղված են տղամարդիկ: Սա կարող է վկայել այն մասին, որ, ելնելով ավանդույթից, ընդունված չէ, որ կանայք զբաղվեն ֆիզիկական աշխատանքով, նրանք նաև հավակնություններ չունեն կարիերայի զարգացման հարցում և հետևաբար աշխատանքի մեջ զբաղեցնում են միջին աստիճաններ:

Հաջորդիվ քննարկենք ևս մեկ կարևոր հարց՝ կապված համայնքի ներկայացուցիչների ունեցած ռեսուրսների, դրանց աղբյուրի հետ: Անկախ այն հանգամանքից, թե ինչ չափով և ինչ նպատակով են համայնքի ներկայացուցիչները տնօրինում եղած ռեսուրսները, կարևոր է հաշվի առնել, թե ինչպես են դրանք ձևավորվել: Ցանկացած անհատական ռեսուրս պետք է դիտարկել ընդհանուր սոցիալական կապիտալի համատեքստում, քանի որ դրանք փոխկապված են միմյանց հետ: Ահա այս նպատակով անհրաժեշտ է պարզել, թե ովքեր են մասնակից եղել անհատների ձեռքբերումներին և ինչ չափով:

Ներկայացվող աղյուսակից պարզ է դառնում, որ ուսումնասիրված խմբի գրեթե կեսը իր ունեցած ձեռքբերումները վերագրում է սեփական աշխատանքին, կարողությունների կիրառմանը, ջանքերին: Մյուս խոշոր խումբը, որը կազմում է ուսումնասիրված խմբի մյուս մասը՝ 47,7%՝ իրենց ձեռքբերումները վերագրել են ազգականներին, ընտանիքներին: Երրորդ շատ փոքր խումբը միայն գտնում է, որ ունեցած ձեռք-

*Աղյուսակ 2. Թեհրանի հայ համայնքի ներկայացուցիչների
ունեցած ձեռքբերումները*

Ինչի կամ ու՛մ շնորհիվ եք ունեցել ձեռքբերումներ:	Տոկոսը հարյվածներից
Սեփական ջանքերի	49,5%
Ազգականների	47,7%
Որոշակի կառույցների, անձանց	2,8%
Ընդամենը	100%

բերումների մեջ որոշիչ ներդրում ունեն որոշակի անձիք, կառույցներ: Այս տվյալները ևս մեկ անգամ ապացուցում են վերը քննարկված գոտևորումը, որն ակնհայտորեն իրականանում է վստահության սահմաններին համապատասխան:

Այսպիսով, այլէթնիկ միջավայրում ցանցային վարքի փոփոխության կամ առանձնահատկությունների պահպանման համար կարևորագույն գործոններից է տվյալ միջավայրի ազդեցության և ներքին գործոնի հարաբերակցությունը: Որևէ մեկի գերիշխումը հանգեցնում է համայնքում բոլորովին այլ սոցիալական հարաբերությունների և վարքի ձևավորման: Բացի արտաքին ու ներքին գործոններից, կարևոր է առանձնացնել անհատ-ընտանիք-համայնք շղթան, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կարող է հանդես գալ որպես առանձին գործոն համայնքի ձևի, բնույթի, դրա ներսում սոցիալական հարաբերությունների սահմանման համար:

**4.2.Սոցիալական ցանցի գործառնության
առանձնահատկությունները
Բեյրութի հայկական համայնքում**

Բեյրութի հայ համայնքը⁸⁴ կազմավորվել է XIX դ. վերջին, աստիճանաբար ստվարացել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Քաղաքային բնակչության աճին զուգահեռ Բեյրութի ընդար-

⁸⁴ Սանջյան 2003, 294–295:

ձակման հետևանքով ներկայումս նրա մի մասն են կազմում նախկինում քաղաքի արևելյան արվարձաններից Բուրջ Համուդ հայաբնակ թաղամասն ու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության աթոռանիստ Անթիլիաս ավանը, թեև վերջիններս շարունակում են պահպանել տեղական ինքնակառավարման իրենց ուրույն մարմինները: Բեյրութում և հիշյալ արվարձաններում է բնակվում լիբանանահայերի գերակշռող մեծամասնությունը:

Պատմականորեն շատ հայեր ապրել են Բեյրութում և Մաթնում: Բեյրութում առավել հոծ բնակեցված թաղամասերից կարելի է նշել Աշրաֆիեհը՝ Հաճնը (Կորնիշ Նահր), Խալիլ Բադավին, Կարմ-էլ-Ջեյթուն (Հայաշեն), Ռմեիլը, Ջմմեյզը, Սուրսոկը և Ջիթավին: Հայերը խիտ բնակություն են ունեցել Բեյրութի այլ շրջաններում ևս, ինչպիսիք են Խանդաք Ղամիկը, Ջուգաք ալ-Բլաթը, Ջարիֆը, Բաբ Իդրիսը, Սանայեհը (Քանթարի), Կլեմանտոն և Համրան: Քաղաքացիական պատերազմի ժամանակ այդ հայերից շատերը արտագաղթեցին կամ տեղափոխվեցին Լիբանանի ավելի անվտանգ տարածաշրջաններ: Բեյրութի արվարձաններից կենտրոնացած են հիմնականում Մաթնում, մասնավորապես Բուրջ Համուտ, Դորա-Ամանոս, Ֆանար, Ռաուդա, Ջեդիդը, Ջալկա, Ջալ Էլ Դիբ, Անթիլիաս, Մժեր, Նաքքաշ, Դբայեհ, Ավքար թաղամասերում, ինչպես նաև Անթիլիասից մինչև Բիքֆայա ընկած շրջաններում: Հյուսիսում, Ջունիեում, Ջեբիլում (Բիբլոս) և Տրիպոլիում (մասնավորապես, Մայնի տարածքում) ապրում են հայերի ցրիվ խմբեր:

Բեյրութում հայերի թվային ներկայության մասին գնահատականները տարբերվում են, սակայն տատանումը տեղի է ունենում 60000-ի և 90000-ի միջակայքում: Բնականաբար, հնարավոր առավել ցածր թվաքանակը ներկայացվում է հիմնականում պաշտոնական կամ պաշտոնականին հարող աղբյուրներում: Իսկ ահա տեղեկատու անձանց գնահատականով հայերի թիվը Բեյրութում հասնում է 90000-ի:

«Խոսելով Դեյրութի հայերի թվաքանակի մասին գանք Լիբանանից. քաղաքացիական պատերազմին գաղութի թիւ 300000 կը հաշուէր, իսկ այսօր 100000–120000 կը հաշուէ: Շատեր արտագաղթեցին դէպի Ամերիկա, Արեւելեան եւ Արեւմտեան Ամերիկա, Գանատաներ,

իսկ շատ քիչ թիւ դէպի Եւրոպա: Այսօր արտագաղթը նոյն թափով չէ, որովհետեւ այստեղ մնացող մարդիկ երկու խնդիր ունին: Կամ այն է չեն կրցած վիզա ստանալ եւ կամ նիւթական միջոցներ չեն ունեցած՝ դուրս գալու եւ այլ երկրի մէջ վերսկսելու համար: Սակայն միայն Պէլ-րուֆի մեջ հայերի թիվը կհասնի շուրջ 90000-ի»:⁸⁵

Սակայն քանակական ներկայությունը տվյալ քաղաքում սոցիալական միջավայրի մի մասն է, ապատրամաբանորեն հաջորդիվ պետք է քննարկել նրանց մասնագիտական կարողությունները:

Հայերը աբանդաբար հայտնի են որպես լավ արհեստավորներ, բանվորներ ու մանր առևտրականներ: Սակայն ներկայումս նրանց զբաղվածությունը տարածվում է նաև այլ ոլորտների վրա. խոշոր առևտրականներ, ձեռնարկատերեր, արդյունաբերողներ, մեծ թվով մտավորականներ՝ բժիշկներ, ճարտարապետներ ու ճարտարագետներ, ուսուցիչներ, նկարիչներ, երաժիշտներ, գրողներ: Սակայն այսօր պատկերը բավականին տարբերվում է նախկինից և այլևս հնարավոր չէ Բեյրութի հայ համայնքը բնութագրել որպես արհեստավորների համայնք: Այս են հաստատում նաև փորձագիտական գնահատականների, որոնցից մեկը, մասնավորապես, նշում է.

«Այսօր պատկերը ամբողջապես տարբեր է: Այդ ձեռային աշխատանքները այսօր վերացած են և իրենք իրենց արժեքը կորսնցուցած են, որովհետև արդիականացումը այնպիսի տեղ հասցուցած է, որ մարդիկ ձեռքով աշխատելով տեղ չեն հասնիր: Նոր սերունդը ընդհանրապես աւելի դէպի համալսարանական ուսում և վարչագիտական աշխատանքներու մղուած են: Այդ դէպքում ունինք բազմաթիւ բժիշկներ, ճարտարապետներ, ճարտարագետներ, իրաւաբաններ, ֆինանսական գործի և IT-ի մասնագետներ, ինչպէս նաև կան երիտասարդներ, որոնք կը զբաղին հոգեբանութեամբ, գրագիտութեամբ, թղթակցութեամբ և հաղորդավարութեամբ: Այսինքն մեր երիտասարդութեան մէկ բաժինը ուսանելու փափաքը ունին: Հիմա, վերջին 15 տարիներու

⁸⁵ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրոյց N3, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015թ.:

ընթացքին ուսանիլը նուազած ու դժուարացած է է, որովհետև ուսումնավարձերը թանկ են: Մէկ բաժինը ուղղուած է դէպի տեխնիկական ոլորտ, բայց համալսարանի կրթութիւն չէ դա: Մէկ խօսքով՝ այսօրուայ համեմատութեամբ արհեստաւորներու թիւը նուազած է ի նպաստ ուսանողներու: Մարդիկ, ովքեր իրենց արհեստները ժառանգած էին իրենց ընտանիքէն, այսօր չկայ, որովհետև առաջ արդիւնաւէտ և շահաբեր էին այդ արհեստները, իսկ այսօր՝ ոչ»:⁸⁶

Ինչ վերաբերում է համայնքային կազմակերպութիւններին, ազգային կառույցներին, ապա անհրաժեշտ է նշել, որ լիբանանահայ ազգային հաստատութիւնների գերակշիռ մասը կենտրոնացած է Բեյրութում: Առաջին հայկական եկեղեցին՝ Ս. Նշանը, կառուցվել է 1851-ին. այժմ գործում են հայ առաքելական 8, կաթոլիկ՝ 4 և ավետարանական՝ 4 եկեղեցիներ, որոնց կից կան կիրակնօրյա դպրոցներ: Առաջին հայկական դպրոցը բացվել է 1859-ին: Ներկայումս (2003) գործում են մոտ 25 դպրոցներ, արհեստագիտական վարժարաններ, Համազգային հայագիտական բարձրագոյն հիմնարկը, Հայկազյան համալսարանը:

Բեյրութում են հաստատված հայ ազգային կուսակցութիւնների կենտրոնական մարմինները, գործում են բազմաթիվ հայրենակցական, բարեգործական, մշակութային, երիտասարդական, ուսանողական, մարզական և այլ կազմակերպութիւններ, որոնք մեծ մասամբ գտնվում են կրոնադավանական համայնքների կամ քաղաքական կուսակցութիւնների հովանավորության կամ վերահսկողության ներքո: Կան թատերախմբեր («Գասպար Իփեկյան», «Վահրամ Փափագյան»), երգչախմբեր ու պարախմբեր:

Բեյրութում առաջին հայերեն թերթը լույս է տեսել 1921-ին. ցայսօր լույս է տեսել շուրջ 200 անուն թերթ ու հանդես: Այժմ լույս են տեսնում 20-ից ավելի պարբերականներ: Կան հայկական տպարաններ: Չնայած ներկայացված համայնքային ընդհանուր և բազմակողմանի պատկերին, որը ձևավորվել է զարգացել է տասնյակ տարիների ընթացքում,

⁸⁶ Ս. Ներսիսյան, Խորին հարցազրոյց N3, ՀԱԻ Սփյուռքի հետազոտութիւնների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015թ.:

այնուամենայնիվ, առաջադրված խնդրի վերհանման նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ համայնքի ներկայիս ընդհանուր նկարագրին:

Բեյրութի հայ համայնքն այժմ ունի բավականին մեծ ցրվածություն, և միայն մի քանի թաղամասերում են պահպանել կոմպակտ կեցությունը:

Նախկինում (մինչև 71 թ. հեղափոխությունը) հայերը Բեյրութում կոմպակտ բնակվել են Բուրջ Համութ, Անթիլիաս, Համրա թաղամասերում: Հատկանշական է, որ նշված թաղամասերն ունեցել են տարբեր կուսակցական և եկեղեցական պատկանելիություն: Համպատասխանաբար յուրաքանչյուր թաղամասում տեղակայված են եղել տվյալ եկեղեցին և կուսակցական կառույցները՝ իրենց մարզամշակութային, կրթական, բարեսիրական և այլ միություններով: Ըստ տեղեկատու անձի գնահատականի «թաղամասերի միջև շփումը բավականին թույլ հիմքերի վրա է եղել հատկապես հեղափոխությանը մոտ ժամանակաշրջանում: Մեկ թաղամասի երեխան մյուսում դպրոց չէր գնում, տարբեր թաղամասերի երիտասարդներ միմյանց հետ չպետք է ամուսնանային»⁸⁷: Սա խոսում է համայնքի առանձին թաղամասերում բարձր համասեռության մասին: Սակայն միևնույն ժամանակ, առկա իրավիճակը կարող է արտահայտել թաղամասերի միջև ծայրահեղ սիմվոլիզացված վերաբերմունք: Այստեղ կարելի է խոսել գործնականում համագործակցային համայնավարման համակարգի մասին:

Սակայն իրավիճակը փոխվել է հեղափոխությունից հետո, երբ քաղաքը բաժանվել է սունի և շիա կրոնական ուղղությունների միջև՝ կրոնական ազդեցության սկզբունքով: Արդյունքում հայկական թաղամասերը տարածականորեն բաղդատվել են և ստիպված են եղել ցրվել քաղաքի տարբեր (հիմնականում տնտեսապես ավելի զարգացած) շրջաններ:

Ներկայումս հայերը Բեյրութում շարունակում են ապրել ինչպես քաղաքի տարբեր թաղամասերում, այնպես էլ պահպանել իրենց կե-

⁸⁷ Ս. Ներսիսյան, Փորձագիտական հարցազրույց N12, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015թ.:

ցությունը նախկին հայկական թաղամասերում, սակայն անհամեմատ ավելի պակաս կոմպակտությամբ: Բավական է ընդգծել, որ մի շարք հայկական կազմակերպություններ մնացել են սունի իսլամականների ազդեցության շրջանում, որտեղ մշտապես բնակվող հայերի թիվն անհամեմատ իջել է: Ստացվել է այնպես, որ տարբեր կուսակցական և եկեղեցական պատկանելիության անձիք դարձել են հարևաններ, և հակառակը: Թաղամասերի եղած կառուցվածքի կազմաքանդումը, ցրումը քաղաքի տարբեր մասերով, ակամա խառը կեցությունը, և ևս մի քանի պատմական իրադարձություններ բավականին մեղմել են տարբեր թաղամասերի բնակիչների միջև սուր հարաբերությունները:

Այս ամենը ցույց է տալիս, թե ինչ հետևանքների է հանգեցրել սփյուռքի համայնքներում հարաբերությունների սոցիալական ցանցերի տարածական համընկնումը՝ նույն համայնքի, դրա անդամների, կազմակերպությունների սոցիալական միջավայրի վրա:

Անդրադառնանք համայնքի ղեկավարման կառուցվածքին: Բեյրութի հայկական համայնքը համարվելով ավանդական, դասական համայնք ինքնակազմակերպման մեջ կիրառում է ճկուն մեխանիզմներ, որոնք միաժամանակ կրում են և՛ աստիճանակարգային, և՛ ցանցային բնույթի տարրեր: Բեյրութի հայ համայնքում բավականին շատ են կենտրոնացած համահայկական կազմակերպությունները: Այս հանգամանքով պայմանավորված հարաբերականորեն ավելի ինտենսիվ և բազմակողմ է Բեյրութի կապը հայկական սփյուռքի այլ համայնքների հետ: Կազմակերպությունների այսպիսի բազմազանությունը և պատմական ժառանգորդությունը հանգեցրել է համայնքում մի շարք կազմակերպությունների տարածական կուտակման: Ստորև ներկայացված է համայնքային կազմակերպությունների ֆիզիկական տեղակայությունը քաղաքում (տես հավելված, գծապատկեր 5) քարտեզի տեսքով:

Այստեղ նույնպես, ինչպես Թեհրանի պարագայում, համայնքային կառույցները տեղակայված են առավելապես հայահոծ շրջաններում: Բացի այդ համայնքի ներկայացուցիչները ձգտում են իրենց անձնական կազմակերպությունները տեղակայել հայերի խիտ բնակեցման տա-

րածքներում: Կարելի է նկատել նաև, որ Բեյրութում են գտնվում տարբեր այլ համայնքային կառույցների գլխավոր մասնաճյուղերը: Սա բացատրում է Բեյրութի համայնքի ակտիվությունը ողջ հայկական սփյուռքի տիրույթում որպես ինքնության տարրերի, ազգային-մշակութային արժեքների, ինչպես նաև ինքնակազմակերպման փորձի տարածող: Եվ չնայած առկա տարբերությունների՝ Բեյրութի հայերը նույնպես ապրում են թաղամասային տեղաբաշխման սկզբունքով և կազմակերպում են իրենց ինքնակառավարումը համաձայն այս մոդելի: Վերջինս ավելի պատկերավոր երևում է բերվող պատկերում (տե՛ս հավելված, գծապատկեր 6) քարտեզի տեսքով:

Ներկայացված պատկերում երևում է Բեյրութի հայերի կեցության ձևը: Ակնհայտ է նաև նրանց ցրումը քաղաքի արևմտյան մասից դեպի կենտրոնական և արևելյան շրջաններ՝ տեղակայվելով ծովեզերքի երկայնքով: Ինչպես արդեն նշվել է առավել հոծ ձևով հայերը բնակվում են Բուրջ Համուդում: Մնացյալ թաղամասերում հայերն ապրում են համեմատաբար ավելի ցրիվ՝ ի տարբերություն Թեհրանի հայերի: Սակայն այստեղ անհրաժեշտ է նշել, որ Բեյրութի հայաբնակ թաղամասերը, չնայած իրենց նստության, տարածականորեն հեռու չեն գտնվում միմյանցից: Դա նպաստում է համայնքի ներկայացուցիչների միջև փոխհարաբերությունների հաճախակիության բարձրացմանը: Վերջինս կարևոր պայման է համայնքային կյանքի ինքնակազմակերպման և ինքնակառավարման համար: Բացի աշխարհագրական գործոնից պետք է ընդգծել, որ Բեյրութում գրեթե բացակայում են համայնքային միջավայրի ձևավորմանը խոչընդոտող գործոնները:

Այստեղ նկատելի են ազգային ինքնություն ձևավորող մշակութային տարրերի լայն դրսևորում ամենատարբեր արտահայտչամիջոցներով (տե՛ս հավելված, նկար 2):

Այստեղ ակնհայտորեն երևում է հայկական ներկայությունը քաղաքային միջավայրում: Սակայն բացի ինքնության որոշ տարրերի ներկայացումից ակներև են նաև ազգային, կրոնական համատեքստում քաղաքացիական դիրքորոշում արտահայտող դրսևորումներ:

Ցուցափեղկերից, պաստառներից, ազգային դրոշներից և այլնից բացի Բուրջ Համուդում են կենտրոնացած են նաև համայնքային

գլխավոր կազմակերպությունները: Վերջինս չի կարող չանդրադառնալ ինքնության վերարտադրման միջավայրի ձևավորման վրա, ինչն ակներև է Բուրջ Համուդ թաղամասում:

Կարևոր հանգամանք է նաև ընդունող երկրի կողմից ազգային տարբերությունների հանդուրժողականությունը, ինչը նպաստում է հայկական համայնքի բաց լինելուն:

Ստորև անդրադառնանք ցանցային որակական չափանիշների:

Կենտրոնացվածության չափանիշ: Բեյրութի համայնքում սոցիալական կապերի կենտրոնացվածությունը տեղի է ունենում ոչ թե մեկ կառույցի կամ անհատի շուրջ, այլ մեկ սոցիալական տիրույթի: Վերջինս տարածվում է համայնքային մի քանի կառույցների միատեղման և հոծ բնակեցման տարածքների վրա: Որպես այդպիսին կարելի է նշել Բուրջ Համուդ թաղամասի մի քանի կենտրոնացված տիրույթներ: Ահա սրանց շուրջ էլ իր հերթին տեղի է ունենում համայնքի ներկայացուցիչների փոխհարաբերությունների կենտրոնացվածության:

Կենտրոնացման չափանիշ: Քննարկելով Բեյրութի հայ համայնքի ցանցային կառուցվածքը և դրանում առկա հարաբերությունները ելնելով կենտրոնացման չափանիշից՝ անհրաժեշտ է փաստել, որ համայնքում առկա է բարձր կենտրոնացում: Այստեղ ևս հստակ նկատվում է դերերի համընկնման երևույթը, որի շնորհիվ հնարավոր է դառնում հնարավորին քիչ ռեսուրսների կիրառմամբ հասնել անհաժեշտ արդյունքի: Չնայած այն հանգամանքի, որ Բեյրություն հայերը բնակվում են հարաբերականորեն ցրիվ և բաց կենցաղով, այնուամենայնիվ համայնքի անդամների միջև փոխհարաբերությունները անձնավորված են:

Խտության չափանիշ: Բեյրութի համայնքում ևս, ինչպես և Թեհրանում նկատվում է բավականին խիտ հարաբերությունների ցանց: Դրա շնորհիվ համայնքում կարելի է նկատել արագ և արդյունավետ ինքնակազմակերպում մեկ ընդհանուր նպատակի շուրջ: Այստեղ անդամների կողմից կուտակվող սոցիալական ներուժը ներուղղվածությունն է: Համայնքի սոցիալական ցանցի կամայական երկու միավոր

միմյանց հասնելու համար նույնպես ունեն մի քանի տարբերակ: Ցանցային որակական վերլուծություններում կարելի է եզրակացնել, թե որքան շատ են ու բազմազան մեկ այլ անձի հետ շփման ուղղությունները:

Դիրքորոշման չափանիշ: Այս չափանիշը քննարկելիս կարևոր է առանձնացնել համայնքի գոյության երկու շրջան՝ նախահեղափոխական և հետհեղափոխական: Նախքան հեղափոխությունը համայնքը բաժանված էր հայահոծ թաղամասերի՝ համապատասխան եկեղեցական և կուսակցական պատկանելիության զուգակցմամբ: Այս հանգամանքը մի կողմից նպաստում էր առավել արդյունավետ համայնքային կառավարման և բարձրացնում ինքնակազմակերպական մակարդակը: Սակայն թաղամասերի միջև փոխհարաբերությունների բևեռացումն ի վերջո հանգեցնում էի բախումների: Այս երևույթը քաղաքացիական հեղափոխության խորապատկերին կազմաքանդեց հայկական համայնքի թաղային հոծ տեղաբաշխման կառուցվածքը: Տրվելով քաղաքի այլ թաղամասեր, համայնքի տարբեր «դիրքորոշումներ» ունեցող ներկայացուցիչները սկսեցին ապրել հարևանությամբ: Արդյունքում առաջ եկավ համայնքային վարքի նոր մոդել, որ անպայմանորեն կապված չէր կուսակցական կամ եկեղեցական պատկանելիության հետ: Ահա այստեղ արդեն սկսեց ձևավորվել հետհեղափոխական համայնքային կառուցվածք՝ իր բնորոշիչ հարտկանիշներով: Այսօր Բեյրութի հայ համայնքում գործառնող սոցիալական ցանցի ներսում դիրքորոշման չափանիշը թաղամասային ձևից փոխակերպվել է խմբային կամ անհատական ձևի:

Կազմակերպությունների բնույթը: Բեյրութի հայ համայնքն իր ինքնակազմակերպան ճանապարհին ստեղծել է ինքնության ձևավորման և պահպանման, համայնքային ներուժի կուտակման և վերաբաշխման, ինքնակառավարման համար անհրաժեշտ կազմակերպություններ: Դրանք իրենց կատարած գործառույթներով կարելի է բաժանել՝ կրթական, մարզական, մշակութային, իրավական, արդարադատական, բարեգործական, տպագրական տեսակների: Այստեղ կարևոր է նշել, որ ընդունող երկրի առանձնահատկություններից

կախված՝ նշված կազմակերպությունները կարող են իրականացնել նաև լրացուցիչ այլ գործառույթներ՝ բացահայտ կամ լատենտ ձևով:

Պետք է հաշվի առնել, որ համայնքային կազմակերպությունների գործունեությունը օտար պետության տարածքում չի կարող ուղեկցվել անսահմանափակ հնարավորություններով:

Այլ պետությունների տարածքում համայնքային կազմակերպություններն իրենց գործունեության որոշակի փուլերում օրինաչափորեն բախվում են խոչընդոտների: Դրանք են հիմնականում պետական օրենքները, երկրի վարած քաղաքականությունը, կառավարման առաջնահերթությունները, բարոյական նորմերը և այլն, որոնք սահմանում են համայնքային կազմակերպության գործառնության ազատության չափը: Այս պատճառով հայկական սփյուռքում նույնպես համայնքային տարբեր կառույցների, հատկապես մամուլի, եկեղեցիների, դպրոցների, վարժարանների գործունեությունը պահանջում է բավականին մեծ սոցիալական և նյութական ռեսուրսներ:

Մամուլի դեպքում ակնհայտ է երկկողմանի (տեղեկատվության տարածման և սպառման) ազդեցության կառավարման անհրաժեշտությունը: Սա անմիջական առնչություն ունի և ընդունող երկրի, և էթնիկ համայնքի շահերի հետ: Հետևաբար այն կարող է իրականացնել համախմբման, միավորման, ներքին խնդիրների և մարտահրավերի լուծման միջոց, սակայն մյուս կողմից ծառայել որպես համայնքի գործունեության կարգավորման գործիք:⁸⁸

Գործունեության դիրքորոշվածության տեսանկյունից՝ տվյալ երկրի համար, թերևս ամենաչեզոքը մարզամշակութային կառույցներն են: Դրանք իրենց բնույթով բաց են, ինքնաբավ և շնորհիվ հոչակված համամարդկային արժեքների (առողջ ապրելակերպ, մշակութային ինքնության պահպանություն) եզր չեն թողնում հնարավոր օտար արտաքին ազդեցության համար:

Բեյրութում գործում են մի շարք կրթական հաստատություններ՝ թե՛ համայնքային, թե՛ անհատական ֆինանսավորմամբ:

⁸⁸ Բարսեղյան 2014, 45–62:

Համայնքում գործող կազմակերպությունների առումով Բեյրութի առանձնահատկությունը, համեմատած հայկական սփյուռքի մնացած համայնքների, կայանում է նրանում, որ այս համայնքում գործում է բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Հայկազյան համալսարանը: Վերջինս երկրի բուհական համակարգում ունեցած հեղինակությամբ բավականին մեծ ազդեցություն ունի նաև համայնքային կյանքում:

Կրթական գործունեությանը զուգահեռ համալսարանն իրականացնում է համախմբող և հավասարակշռող գործառույթ համայնքի տարբեր կուսակցական, եկեղեցական պատկանելիություն ունեցող ուսանողների և հետազոտողների համար:

Անդրադառնալով համայնքում գործող կազմակերպությունների տեսակներին անհարժեշտ է նշել, որ հայկական սփյուռքի մի շարք կազմակերպությունների ձևավորման օրրանը գտնվում է հենց Բեյրութում: Դրանք ժամանակի ընթացում ճյուղավորվել են և տարածվել աշխարհի տարբեր երկրներ՝ ձեռք բերելով համահասկական, համասփյուռքյան, երբեմն նույնիսկ միջազգային բնույթ: Սակայն մինչ օրս էլ շատ կազմակերպությունների համակարգող կենտրոնները դեռևս գործառնում են Բեյրութում: Եթե դասակարգենք այդ կազմակերպություններն ըստ տեսակի, ապա կստացվի գրեթե նույն պատկերն ինչ Թեհրանի հայ համայնքի դեպքում. Միություններ, եկեղեցիներ, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, որոնք առավելապես գործում են հովանոցային կազմակերպական ձևով:

Բեյրութի հայ համայնքի դեպքում ևս բոլոր կազմակերպությունները ոչ առևտրային և ոչ պետական են:

Ինչպես նշվել է Բեյրութի հայ համայնքում գործում են երեք ավանդական եկեղեցիները՝ հայ առաքելական, հայ կաթողիկե, հայ ավետարանական, և երեք ավանդական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ), Սոցիալ դեմոկրատ Հնչակյան կուսակցություն (ՄԴՀԿ) և Ռամկավար ազատական կուսակցություն (ՌԱԿ): Այն դիտարկումը, համաձայն որի սոցիալական միջավայրի ընկալումներում կուսակցությունների ու եկեղեցիների, ինչպես նաև

մարզամշակութային կառույցների գործունեությունը զուգակցվում է, Բեյրութի համայնքում նույնքան վառ արտահայտված չէ, որքան Թեհրանի համայնքի պարագայում: Սրա կարևոր պատճառներից է բեյրութահայերի հարաբերականորեն ցրիվ կեցությունը, ինչպես նաև նախահեղափոխական շրջանի բացասական փորձը: Իհարկե այդ կառույցները կապված են միմյանց հետ և անհարժեշտ չափով համագործակցում են ընդհանուր նպատակների համար, սակայն դիրքորոշումների ծայրահեղ դրսևորումները անհամեմատ քիչ են:

Այստեղ բավականին կարևոր դեր ունի նաև համայնքային կառույցներում ներգրավվելու առանձնահատկությունները:

Բեյրութի հայ համայնքն իր բնույթով բաց է: Համայնքի ինքնակառավարման վրա չկան պետության կողմից սահմանված հատուկ արգելքներ: Բավական է անդրադառնալ համայնքում խառնամուսնությունների տեսակարար կշռին, որը համաձայն փորձագիտական գնահատականների հասնում է մինչև 40–45%, արդեն պարզ է դառնում երկկողմանի (ընդունող երկրի և համայնքի կողմից) ներառվածությունը սոցիալական կյանքում:

Համայնքային կազմակերպություններն իրենց գործառնության բովանդակությամբ և բազմազանությամբ համայնքի ներկայացուցիչների ընկալումներում գրեթե համարժեք մրցակցության մեջ են ընդունող հասարակության կողմից «առաջարկվող» սոցիալական ակտիվության ձևերին:

Այս կապակցությամբ դիտարկենք Բեյրութի հայ համայնքի ներկայացուցիչների ներգրավվածությունը համայնքային կառույցներ:

Որևէ համայնքային կառույցում համայնքի անդամների ներգրավվածությանն անդրադառնալով պարզվում է նրա սոցիալական ակտիվությունը, մասնակցությունը համայնքի ինքնակազմակերպմանը, ինքնակառավարմանը: Բացի այդ պարզ է դառնում համայնքի ներկայացուցիչների սոցիալական գործունեության բազմազանության աստիճանը և ուղղվածությունը (դեպի ներս՝ համայնք, կամ դեպի դուրս՝ օտար միջավայր), սոցիալական ռեսուրսների ձեռքբերմանն ուղղված ներդրումները: Մյուս կողմից կարևոր է հասկանալ, թե գործոններով

են առաջնորդվում համայնքի ներկայացուցիչները համայնքային այս կամ այն կառույցի ընտրության ժամանակ, իսկ այդ կազմակերպություններն ինչ մեխանիզմներով են փորձում ներառել համայնքի անդամներին ինքնակազմակերպման գործընթաց:

Այստեղ տեղին է նկատել, որ ընդհանրապես որևէ սփյուռքյան կազմակերպություն ներգրավվելու համար կարող են պայման հանդիսանալ դրանց կազմակերպած միջոցառումները. որքան ակտիվ են, որքան շատ ու բազմազան միջոցառումներ են կազմակերպում, այնքան հանրությունն ավելի շատ է ներգրավվում: Հետևաբար ներգրավվելու կամ չներգրավվելու որոշման, նաև ներգրավվելիս կառույցի ընտրության հարցում կարևոր դերը տվյալ կառույցի նախաձեռնությունն ու ակտիվությունն է: Սակայն Բեյրութի պարագայում որոշիչ կարող են հանդիսանալ մի շարք այլ գործոններ:

Ուսումնասիրված խմբի մեծամասնությունը՝ 94% ներգրավված է այս կամ այն համայնքային կառույցում: Սա խոսում է համայնքի ինքնակազմակերպման և կառավարման գործում բարձր մասնակցայնության մասին:

Ինքնակազմակերպման գործընթացում համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը նպաստում է ընդհանուր համակարգի կայունության ապահովմանը՝ արտահայտելով համայնքում առկա տարբեր սոցիալական խմբերի հետաքրքրությունները: Այն դեպքում, եթե գործող ինքնակառավարման համակարգը համաչափ ձևով է արձագանքում շրջապատող սոցիալական միջավայրին և նրա պահանջներին, ապա մասնակցությունը շարունակվում է՝ փոխակերպվելով աջակցության և վերահսկողության: Հակառակ պարագայում, երբ համայնքի անդամները չեն տեսնում իրենց գործառույթը համակարգի կենսագործունեության ապահովման որևէ փուլում, ապա համայնքի կառուցվածքը ենթակա է պառակտման:

Այս առումով կարևոր է հասկանալ, թե ինչպիսի սոցիալական ակտիվություն են ցուցաբերում համայնքի ներկայացուցիչներն ընդհանրապես. արդյո՞ք ակտիվ համայնքային վարքը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է նրանց սոցիալական վարքին, թե՛

ավելի վառ դրսևորվում է այլընտրանքային սոցիալական ակտիվության բացակայության խորապատկերին: Փաստորեն համայնքի ներկայացուցիչների սոցիալական ակտիվության որոշակի մասն ապահովվում է հենց համայնքային սոցիալական հարցերով և լրացվում է հայկական «բովանդակությամբ»:

Անձի իրականացրած սոցիալական գործառույթը որոշակի կառույցում կարող է ցույց տալ ինչպես նրա դիրքը համայնքի ներսում, այնպես էլ ազդել անձի սոցիալական դիրքորոշումների, նախընտրությունների վրա: Այս նպատակով անհրաժեշտ է պարզել, թե համայնքային կառույցներում ներգրավված լինելն ինչ կապի մեջ է այդ կառույցներում զբաղեցրած տեղից:

Ստորև ներկայացված է ուսումնասիրված խմբի ներգրավվածությունը համայնքային կառույցներում:

*Աղյուսակ 3. Ներգրավվածությունը համայնքային կառույցներում
(% հարցվածներից)*

Կազմակերպության տեսակը	%
Կուսակցական	37,9
Մշակութային	19,7
Բարեսիրական	19,7
Մարզական	18,2
Հայրենակցական	1,5
Կրթական	1,5
Եկեղեցական	1,5

Համաձայն տվյալների ուսումնասիրված խումբը համայնքային կառույցներից ամենակտիվ ներգրավվածությունը ցուցաբերում է քաղաքական կուսակցությունների գործունեությանը: Ըստ ներգրավվածության աստիճանի կուսակցություններին հաջորդում են մշակութային, բարեսիրական և մարզական կառույցները, որոնց միջոցառումներին մասնակցում են մեր կողմից հարցված ամեն հինգերորդ բեյրուրահայր: Չնայած այն հանգամանքի, որ թվարկված մյուս կառույցները

ևս անուղղակիորեն առնչվում են կուսակցական գործունեությանը, այնուամենայնիվ, հնարավոր չէ ակտիվ վարքը միանշանորեն վերագրել լատենտ կուսակցական կապին: Այստեղ որոշիչ գործոն է նաև տվյալ կառույցների աշխարհագրական տեղակայումը կոնկրետ թաղամասում, տվյալ ուղղվածության այլընտրանքային կառույցների բացակայությունը և այլն: Սակայն զուտ ներգրավվածությունից բացի կարևոր է նաև անդրադառնալ կառույցներում ներգրավվածության ձևին: Կառույցներում ներգրավվածության որոշակի ձևը կարող է ազդեցություն ունենալ նաև համայնքում զբաղեցրած դիրքի վրա (տե՛ս հավելված, գծապատկեր 6):

Ուսումնասիրված խմբի համար համայնքային կառույցներում ներգրավվածությունը կարող է ստեղծել հայկական միջավայր, որտեղ դրանց ներկայացուցիչներն այս կամ այն կերպ առնչվում են «հայկականության» հետ, և իրենց հերթին ներմուծում են ինքնության հայկական տարրեր: Որպես կազմակերպության անդամ ներգրավվածների մեծ չափը խոսում է հենց դրա մասին, քանի որ այս մարդիկ կրում են ոչ միայն հայկականին առնչվող տեղեկատվություն, այլև տարածում են այն: Ուշագրավ է կազմակերպիչների բավականին մեծ տոկոսը, ինչը թույլ է տալիս հետևություն անել համայնքում ստեղծվող կամ համայնք ներմուծվող տեղեկատվության բազմազանության մասին: Վերջինս տեղեկատվության որակի կարևոր ցուցիչներից մեկն է, ուստի կարելի է եզրակացնել, որ կազմակերպիչների քանակի աճին զուգահեռ բարձրանում է նաև տեղեկատվության որակը:

Հաջորդիվ ներկայացված է ուսումնասիրված խմբի սեռատարիքային կազմն ըստ համայնքային կառույցներում ներգրավվածության (տե՛ս հավելված, գծապատկեր 7):

Համաձայն ստացված արդյունքների, խմբում ավելի բարձր ներգրավվածություն նկատվում է արական սեռի և երիտասարդների մոտ, իսկ ամենաքիչը՝ միջին տարիքի անձանց և կանանց մոտ: Սա կարող է գործոն դառնալ ինչպես ներգրավվածության դրդապատճառների բացահայտման, այնպես էլ կառույցների հետագա գործունեության ուղենշման համար: Ստացված տվյալների միջոցով կարելի է արձա-

նագրել երիտասարդների հետաքրքրվածությունը համայնքային կյանքով, ինչը կարող է ապահովել համայնքային կառույցների հետագա կայուն գործունեությունը մոտ ապագայում:⁸⁹

Հաջորդ կարևոր հարցը թույլ է տալիս հասկանալ, թե համայնքի անդամներն ինչ ռեսուրսների վրա են հիմնվել որևէ բան նախաձեռնելիս, օգտվել են արդյոք համայնքային ներքին ռեսուրսներից, թե ոչ, ինչպես նաև հարցը թույլ է տալիս բացահայտել համայնքի անդամների միջև վստահության մակարդակը, այս երևույթի հետ կապված ընդունված նորմերը տվյալ սոցիալական միջավայրում:

Աղյուսակ 4. Բեյրութի հայ համայնքի ներկայացուցիչների ունեցած ձեռքբերումներն ըստ պարճառների (%-ը հարցվածներից)

Ինչի կամ ու՞մ շնորհիվ եք ունեցել ձեռքբերումներ	Տոկոսը հարցվածներից
Սեփական ջանքերի	45,4%
Ազգականների	50,0%
Ընկերների	4,6%
Ընդամենը	100%

Ուսումնասիրված խմբի 50%-ը նշում է, որ կյանքում ձեռքբերումներ ունեցել են ազգականների (ազգականներ ասելով նկատի ունենք ինչպես հեռու ազգականներին, այնպես էլ ծնողներին ու սեփական ընտանիքը) շնորհիվ, ինչը կարող է խոսել մի քանի երևույթների մասին: Նախ, օտար միջավայրում կենսագործունեությունը պահպանողական է, ուստի սոցիալական աճ կամ գոնե առաջընթաց ապահովելու հարցում անձը կարող է ապավինել առավելապես սոցիալական հարաբերությունների ներ շրջանակներին (ընտանիք, ազգականներ): Բացի դրանից, մեծ նշանակություն ունեն համայնքի անդամների կամ նրանց խմբի մրցակցային հնարավորությունները կամ հմտությունները տվյալ սոցիալական միջավայրում: Վերջինիս հետ կապված խնդիրների առաջացումն օտար միջավայրում օրինաչափ է, և, որպես կանոն, դրանց այժմեականությունը մարում է տվյալ միջավայրում ապրած

⁸⁹ Ներսիսյան 2017, 170:

տարիների թվին զուգընթաց: Սակայն դրանց վերջնական լուծումը հնարավոր է դառնում միայն սերնդափոխության պարագայում, այն էլ՝ հարակից նպաստավոր գործոնների առկայության պայմաններում: Եվ վերջապես, նոր տարրերի ներգրավման հարցում արտաքին միջավայրի դիրքորոշումը ևս կարող է պատճառ հանդիսանալ կոնկրետ տեսակի վարքի դրսևորման համար. որքան այն ազատ է և բաց, այնքան մեծ է հավանականությունը, որ սոցիալական աճի համար անձն ինքնուրույն քայլեր կձեռնարկի: Ուսումնասիրված խմբի 45%-ը, պատասխանել է, որ ունեցած ձեռքբերումներին հասել է սեփական ջանքերի շնորհիվ, իսկ մնացյալ 5%-ն ընկերների: Սա վկայում է այն մասին, որ Բեյրութի հասարակությունն անհատական սոցիալական զարգացման և աճի համար նպաստավոր պայմաններ է ընձեռում:

Հաջորդիվ ներկայացվում է համայնքի անդամների մտերմության աստիճանը, սոցիալական շփումների շրջանակներն ընդհանրապես և դրանց տեղը նրանց շփման համակարգում: Մտերմության մակարդակները դասակարգվել են համաձայն ստացված տվյալների և տարանջատվել առանձին գոտիներով (տե՛ս հավելված, գծապատկեր 8):

Պատկերում կարելի է տեսնել կորի անհամաչափ բաշխում մտերմության ցուցանիշների գոտևորման սանդղակի վրա: Համապատասխանաբար, ձեռք բերված տվյալների արդյունքում ձևավորվել է հետևյալ պատկերը. ուսումնասիրված խմբի համար մտերմության առաջին գոտում գտնվում են հավասարապես ընտանիքի անդամները և ընկերները, երկրորդում՝ դրացիները, երրորդում՝ հեռու հարազատները և գործընկերները, և չորրորդում՝ համայնքի անդամները:

Տվյալների համաձայն համայնքի անդամների մտերմության աստիճանը գնահատելիս կարևոր առանձնացող գործոն է հանդիսանում տարիքը: Այդ նպատակով փորձենք հասկանալ տարբեր տարիքային խմբերում մտերմության արտահայտման չափը (տե՛ս հավելված, գծապատկեր 9):

Գծապատկերից երևում է, որ բոլոր երեք տարիքային խմբերում պահպանվել է վերոնշյալ գոտևորման տրամաբանությունը՝ ոչ նշանակալի շեղումներով:

Այն փաստը, որ ընկերներն ընտանիքի անդամների հետ հավասարապես կհսում են սոցիալական հարաբերությունների առաջին գոտին, թույլ է տալիս կարծել, որ ուսումնասիրված անձանց ընկերները հիմնականում հարազատներ են, հաջորդ գոտում գործընկերների առկայությունը ցույց է տալիս, որ համայնքի անդամների շրջանում մեծ թվով մարդիկ ունեն հարազատներ, որոնք միաժամանակ և՛ գործընկեր են, և՛ պարզապես ընկերներ:

Տվյալ եզրահանգումը ստուգելու համար անհրաժեշտ է տեսնել միմյանց այցելելու հաճախականությունը (տես հավելված, գծապատկեր 10):

Վերոնշյալ գծապատկերից երևում է, որ համայնքի ներկայացուցիչների այցելությունն ազգականներին, հարևաններին ու ընկերներին իրականանում է գրեթե միևնույն հաճախականությամբ:

Փոքր տարբերությամբ առանձնանում է շաբաթը մի քանի անգամ հարևաններին այցելությունը, ինչը բնական է զուտ տարածական առումով: Չնայած այս դեպքում ևս չենք կարող բացատրել հավանականությունը, որ համայնքի անդամների որոշ խմբի պարագայում հարևանները համընկնում են ազգականների հետ:

Այսպիսով, համաձայն վերը քննարկված տվյալների, կարելի է եզրակացնել, որ Բեյրութի հայ համայնքում ևս առկա է անձնավորվածության բարձր աստիճան, ինչն իր հերթին ազդում է համայնքի ներսում ունեցած փոխհարաբերությունների վրա: Փաստորեն հատկանիշների վերագրումը որևէ անձին իրականանում է համաձայն տարատեսակ խմբերին նրա պատկանելիության: Սա մի կողմից հանգեցնում է պատասխանատվության բարձրացման, համայնքի համախմբման, իսկ մյուս կողմից ազդում անձի ընտրության հնարավորության վրա՝ անուղղակի կերպով նպաստելով նորանոր վերագրումների ու պատկանելիության բարձրացման:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս աշխատանքի շրջանակներում քննարկված սոցիալական ցանցին վերաբերող մի շարք տեսական մոտեցումներ և իրականացված հետազոտություններ, թույլ են տվել վերհանել սոցիալական ցանցը որպես երևույթ, անդրադառնալ դրա էությանը, ձևավորման նախադրյալներին, բնույթին, տեսակներին և այլն: Այսպիսի անդրադարձը հնարավորություն է տվել հասկանալ ցանցի կառուցվածքային բնութագրիչները, սահմանել դրանցից յուրաքանչյուրի չափման ցուցիչները: Դրանց վերլուծությամբ դուրս բերվել ցանցի գործառնության մեխանիզմները, դրանց առանձնահատկությունները պայմանավորող գործոնները, որոնք ներազդում են համայնքի վրա՝ որոշելով դրա սահմանները, կառուցվածքը, ներկայացուցիչների կարգավիճակը:

Էթնիկ հանրույթների ինքնակարգավորման գործում սոցիալական ցանցի դերի քննարկումը թույլ է տվել վերհանել դրանց իրականացրած գործառույթները ընդհանրապես և մասնավորապես սփյուռքյան համայնքներում: Սփյուռքում ինքնակազմակերպումն իրականացվում է համայնքային կազմակերպությունների միջոցով, որոնք ունեն կարգավորող ինստիտուտների դեր:

Դիտարկելով նշված տեսական ընդհանրացումները կիրառական մակարդակում երկու համայնքների դեպքերի օրինակով հնարավորություն է ընձեռել դուրս բերել դրանցում սոցիալական հարաբերությունների ցանցային գործառնության մեխանիզմները: Սփյուռքի յուրաքանչյուր ուսումնասիրված համայնքում գործող սոցիալական ցանցն ամրագրում են համայնքի նշանակալի բնութագրիչներ: Այդ բնութագրիչների միջոցով կարելի է պարզել սփյուռքի համայնքներում փոխհարաբերությունների խտությունը, ինտենսիվությունը, կենտրո-

նացվածությունը և այլն: Ստացված տվյալների արդյունքում կարելի է նշել, որ դերերի համընկնումը համայնքային միջավայրում հանգեցնում է դրա ներփակման:

Սոցիալական ցանցի կարևոր գործառույթներից է համայնքի ինքնակազմակերպումը: Վերջինս պայմանավորված է համայնքային կազմակերպությունների գործառնությամբ և միջկազմակերպական հարաբերություններով: Այստեղ մեծ դեր ունեն նաև համայնքի ներկայացուցիչները, որոնք ներառվում են համայնքային կյանք առանձին կամ խմբերով: Նրանց մասնակցությունն ինքնակազմակերպման գործընթացին կարող է հանգեցնել համայնքի կառուցվածքի փոփոխության: Կախված համայնքային կառույցների գործառնության ձևից, տեսակից, արդյունավետությունից ձևավորվում է որոշակի տիպի համայնք:

Հայկական սփյուռքում համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցները միջավայր են հանդիսանում «հայկականության» պահպանման, վերարտադրման և տարածման համար: Մյուս կողմից դրանք դառնում են ընդունող երկրի, հասարակության հետ հարաբերակցման, ինտեգրման խողովակ: Դրանց դրսևորման ձևերը կարող են տարբերվել յուրաքանչյուր համայնքում՝ ներառելով հասարակական կյանքի տարբեր մակարդակներ:

Հիմնվելով իրականացված էթնոսոցիոլոգիական հետզոտության արդյունքների վրա ներկայացվում է սփյուռքի համայնքի ավանդական տիպական մոդել, որտեղ համայնքի տարբեր բաղկացուցիչ միավորներ փոխկապված են ցանցային սկզբունքով: Որպես միավորներ կարող են հանդես գալ ինչպես կայացած համայնքային կառույցները, այնպես էլ համայնքի առանձին ներկայացուցիչներ կամ խմբեր: Իսկ փոխկապվածության ցանցայնությունը ենթադրում է մի քանի պայմանների բավարարում: Փորձը ցույց է տալիս, որ առավել ճկուն ու հարմարվող են այն համայնքները, որտեղ գերակշռում են ապակենտրոնացված, փոխադարձ և ինտենսիվ կապերը: Այս համատեքստում սփյուռքը կարելի է դիտարկել որպես գերկառուցվածք, որը բնութագրվում է կապերի հաստատման և ինստիտուցիոնալացման տարբեր ձևերով:

Համաձայն հետազոտության արդյունքների հայկական սփյուռքի համայնքների ինքնակազմակերպումն ու ինքնակարգավորումը տեղի է ունենում միաժամանակ և աստիճանակարգային, և ցանցային սկզբունքներով: Վերջինս բարդացնում է սփյուռքում գործող համայնքների կառուցվածքը և հանգեցնում առավել արդյունավետ գործառնության:

Սփյուռքի կառուցվածքի մաս կազմող միավորները (համայնքներ, համայնքային կառույցներ, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր, միավորումներ և այլն) տարբերվում են միմյանցից ներուժով ու մասշտաբներով: Սակայն ունեն համազոր նշանակություն համայնքի գործառնության համար, քանի որ անհրաժեշտության դեպքում թույլ միավորները կարող են կապող-կամրջող դեր կատարել մյուս միավորների համար: Սրանով իսկ ցանկացած միավոր ամրագրում է իր դիրքը համայնքային միջավայրում:

Համայնքային կառույցների՝ ազգային, մշակութային տարրերի փոխանակմամբ ստեղծվում է յուրահատուկ էթնոսոցիալական միջավայր, որն անխուսափելիորեն ազդում է էթնիկ ինքնության առանձնահատկությունների ձևավորման վրա:

Ելնելով ինքնության դրսևորումների և համայնքի ներկայացուցիչների վրա դրանց ունեցած ազդեցության ուսումնասիրությունից, կարելի է պնդել, որ փոխադարձ կապ գոյություն ունի ինքնության և համայնքային կառույցներում ներգրավվածության միջև: Որքան ավելի խորն է ներառվածության մակարդակը, այնքան ավելի կայուն ինքնություն ունի համայնքի ներկայացուցիչը: Սրա պատճառն այն է, որ սփյուռքում էթնիկ ինքնության ձևավորման գործառույթները մասսամբ իրականացնում են համայնքային կառույցները:

Ամփոփելով վերոնշյալը, կարելի է ասել, որ էթնիկ ինքնությունը և էթնոսոցիալական միջավայրը փոխկապված են և ունեն իրենց ձևավորման հատուկ պայմաններն ու ազդող գործոնները:

Իրականացված ուսումնասիրության արդյունքները հաստատեցին նախապես դրված հետազոտական վարկածները, վերլուծական նյութ ապահովելով հետագա նմանատիպ խնդրի ուսումնասիրության պա-

րազայում: Սրանով իսկ այս աշխատանքը գալիս է հարստացնելու առաջադրված խնդիրներին առնչվող հետազոտական բազան՝ նպաստ բերելով մասնագիտական դաշտում առկա բացթողումների լրացմանը:

Այսպիսով, ամփոփվել են հետազոտության արդյունքում ստացված տվյալները, վերլուծությունների արդյունքները և տրվել եզրակացություններ:

Իր ձևավորման ընթացքում հայկական սփյուռքը, որպես ավանդական, դասական սփյուռքի օրինակ, ստեղծել է ինքնակազմակերպման առանձնահատուկ մեխանիզմներ: Պայմանավորված ազգակցական-հարևանական հարաբերությունների ավանդույթով, սոցիալական աջակցության և փոխանակության բնութագրիչներով, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերի (լեզու, կրոն, մշակույթ, ընդհանուր պատմություն, գաղթի պատճառներ և այլն) համասեռությամբ, նոր միջավայրում հայերը կարողացել են ձևավորել համայնքներ՝ ինքնակազմակերպվելով ցանցային համագործակցության սկզբունքով վստահության և երաշխիքների ապահովման միջավայրում: Ինքնակազմակերպման համար այլազգի միջավայրում էթնիկ խմբի հոծ բնակությունը կատալիզատոր է հանդիսանում: Այս պնդումը հիմնվում է ինչպես քննարկված տեսական մոտեցումների, այնպես էլ ներկայացված հետազոտական տվյալների վրա՝ հաստատելով, որ ցրիվ բնակության պայմաններում խմբի ինքնակազմակերպման հնարավորություններն ավելի սահմանափակ են: Կախված բնակության քանակական խտությունից՝ աճում է խմբի համասեռությունը, ինչը հանգեցնում է խմբի ներսում դիրքորոշումների համաձայնեցման և, հետևաբար, ուղղակիորեն նպաստում ինքնակազմակերպման:

Այլազգի միջավայրում ցանցային վարքի փոփոխության կամ առանձնահատկությունների պահպանման համար կարևորագույն գործոններից է տվյալ միջավայրի ազդեցության և ներհամայնքային գործոնների հարաբերակցությունը: Որևէ մեկի գերիշխումը հանգեցնում է համայնքում բոլորովին այլ սոցիալական հարաբերությունների և վարքի ձևավորման: Համայնքային կառույցներում զբաղեցրած

դիրքն անմիջական ազդեցություն ունի համայնքում անհատին վերագրվող կարգավիճակի վրա: Սա կապված է համայնքում սոցիալական հնարավորությունների ընտրության սահմանափակության և առկա միջանձնային հարաբերություններում դերերի համընկման բարձր հաճախականության հետ: Ստացվում է, որ որևէ կառույցում անձի զբաղեցրած դիրքը դառնում է նրա բնութագրող հատկանիշը և դառնում կարգավիճակի սահմանման տարր:

Սփյուռքում համայնքային միջավայրը, համայնքային կազմակերպություններն՝ իրենց ազդեցությամբ ձևավորում են «հայկականության տարածքների» և մշակութային տարբերությունների ֆիզիկական ընդգծման սահմաններ: Միջմշակութային սահմանագծման մեջ համայնքային կազմակերպությունները հանդես են գալիս մի կողմից գտման գործառույթով, մյուս կողմից կամրջում են երկու մշակույթները. օրինակ, Թեհրանի դեպքում դրանց գործունեությունը պատենշի դեր է կատարում հայկական և այլ մշակույթների միջև, իսկ Բեյրութում առավելապես կամրջում է: Հետազոտական մակարդակում տարբեր չափի, բնույթի և ֆորմալության աստիճանի համայնքային կազմակերպությունների կողքին անհրաժեշտ է հաշվի առնել նաև հայահոծ թաղամասերը, որպես համայնքային կառուցվածքի ինքնուրույն միավոր: Ինքնության կառուցակցման և ինքնակազմակերպման գործընթացներին հայահոծ թաղամասերը մասնակցում են որպես առանձին գործոն և ունեն ազդեցության գրեթե նույն չափը, ինչ համայնքային կառույցները:

- Ըստ իրականացված հետազատության տվյալների Թեհրանի հայ համայնքում գործում է բարդ ցանցային համակարգ, որտեղ կախված ցանցում ներառվածության խորությունից աճում է անձնավորվածության աստիճանը: Համայնքում առկա է դերերի համընկնման բարձր հաճախականություն, որը մի կողմից ամրապնդում, մյուս կողմից բարդացնում է հարաբերությունները, ինչն էլ նպաստում է համայնքի ներփակմանը: Թեհրանի հայերի շրջանում ազգակցական կապերը բավականին խիտ են դասավորված: Ելնելով վերոնշյալ երկու դի-

տարկումներից և հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հարակից այլ մշակույթների, էթնիկ խմբերի հետ հավաքական փոխազդեցությունն իրականացվում է առավելապես պաշտոնական մակարդակով և առանցքային անհատների միջոցով, կարելի է ենթադրել, որ Թեհրանի հայ համայնքն առնվազն ֆորմալ առումով փակ է:

- Համաձայն իրականացված հետազոտության տվյալների Բեյրութի հայ համայնքում դրա ներկայացուցիչների ներգրավվածության բարձր աստիճանը խոսում է համայնքի ինքնակազմակերպման և ինքնակառավարման գործում բարձր մասնակցայնության մասին: Համայնքի ինքնակառավարման վրա պետության կողմից սահմանված հատուկ խոչընդոտների բացակայությունը, համայնքի ներկայացուցիչների սոցիալական ակտիվության և հնարավոր նախընտրությունների բազմազանությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Բեյրութի հայ համայնքն իր բնույթով ավելի ճկուն է և բաց: Ի տարբերություն Թեհրանի, Բեյրութի համայնքում առկա է ցանցային ապակենտրոնացման ավելի բարձր աստիճան: Սա հաստատում է Բեյրութի ցանցի առանձին միավորների առավել բարձր ինքնակազմակերպվածությունը ի համեմատ Թեհրանի, որտեղ ցանցի կենտրոնից հեռանալով միավորների ինքնակազմակերպումը թուլանում է:

Հիմնվելով իրականացված հետազոտության տվյալների վրա, կարելի է եզրակացնել, որ և՛ Թեհրանի, և՛ Բեյրութի հայ համայնքներում առկա է սոցիալական հարաբերությունների անձնավորվածության բարձր աստիճան: Երկու դեպքում էլ փոխհարաբերությունների կառուցակցման ժամանակ առավել մեծ վստահություն կա անձանց նկատմամբ, քան կազմակերպությունների, նույնիսկ այն պարագայում, եթե անձը հանդիսանում է կազմակերպության ներկայացուցիչ:

РЕЗЮМЕ

